

'2004

5-78 25/

1090 - Ch 4

1623


ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՍՈՒՐԲԳԻՐՔԵՐՈՒՆ

ՈՂՋԱՄԻՏ

ՎԱՐԴԵՍՅԱՆՍՈՒԹԵԱՆԸ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

ՅՕՐԻՆԵԱՋ


ԱԶՆՈՒԱԿԱՆ ԿՈՉՈՒԱԾ ԶԻՆ ԲԵՐԻԱՑԻՆԵՐՈՒՆ
ՀԵՏԵՒՈՂ ՄԸ



ՍԻՐԵԼԻՆԵՐ՝ ԱՄԻՆ ՀՈԳԻՒ ՄԻ՝ ՀԱՒԱՏԱՔ՝
ՀԱՊԱ ՀՈԳԻՆԵՐԸ ՓՈՐՉԵՑԻՔ ԹԵ ԱՍՏՈՒԾՄԵ՝
ԵՆ ՄԻ՝ Խ ՅՈՎՀ . 7 . 1 : ԱՄԻՆ ԲԱՆ ՓՈՐ-
ՉԵՑԻՔ , ԱՂԵԿԸ ԸՆԴՈՒՆԵՑԻՔ :
Խ ԹԵՍ . Է . 2՝

9481-57

1623



Ի ՋՄԻՒՌՆԻՒՆԻՒ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԵԿԼԱՐՈՍ ԿՈՒՓԻԹԻ

1845

Այս գրքի մասին տեղեկությունները կարելի է գտնել
Հայաստանի Հանրապետության Կրթության նախարարության
Գրականության կենտրոնի կայքէջում: 11: 11:

Վերկայ տեսչակի մէջ քննուած նիւթերը չափ երկեղի աստիճանաբար խնայ հարկաւոր են . վասն զի մեր օրհնեալ Տէրը ըստ . «Մն որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի, և ան որ հաւատայ՝ պիտի դատապարտուի» : Մարկ . ԺԷ . 16 : Այլ թէ «ՂԷ մարիտ ճմարիտ կրակի քեզի . թո՛ւ որ մէկ մարդ մը նորէն շննի՝ չկրնար Մտուծոյ թաղարորութիւնը սեանել . . . թո՛ւ որ մէկ մարդ մը ջուրն ու Հոգի՛ն ծնանի, չկրնար Մտուծոյ թաղարորութիւնը մտնել . . . Կուն մի զարմանա՞ր որ քեզի ըսի . «Կէտք է ձեզի նորէն ծնանիլ» : Յով . Է . 3, 5, 7 : Արեւմտեան որ շատ որ հաշիւաւոր բան է մարդու բուն ինչ հոգեյն փրկութիւնը, այնքան աւաւել հարկաւոր է ասէն մարդու ճմարտապէս գիտնալ հաւատոյ և մկրտութեան բնութիւնը, և ջուրն ու Հոգիէն ծնանելուն ի՞նչ ըլլալը :

Աստի կարգեմ, սի՛րելի ընթերցող որ առանց նախապաշարման կարգաւ աս փորձիկ տետրակը անաչառ մտօք և զոտաւորութեամբ, ինտոր որ առանկ երկեղի նիւթի մը կրկայլէ : «ՂԷ սեղէ՛ք վա մն զի ձեր կեանքն է» : Յովն . ԼԻ՞ . 47 : Ասայ . ԺԷ . 3 :

Հոգ չէ թէ առ նիւթի մը յայ եւ կամ ուրիշ մը ինչ կրակի քեզի, կամ բոլոր մարդիկ ինչ կը լին . բայց խնայ հարկաւոր է գիտնալ թէ Մտուած ի՛նչ կրէ : Թո՛ւ որ կուզես ճմարտութեան ի՛նչ ըլլալը գիտնալ, պէտք է որ իր կտորին մէջ մնորդնես անիկայ . ինչու որ ինչ կտորը ճմարտութեան է : Յով . ԺԷ . 17 : Թո՛ւ որ մարդոց կտորերը կը համեմատին Մտուծոյ կտորին, ընդունուելու են . բայց թէ որ չեն համեմատիր՝ պէտք է մերժել զանոնք, ասպ թէ ոչ մեր հոգիներուն կործանմանը կառու նորգին դմեղ : Կոթեցան Կերիացիք, վասն զի աւարտալի մը անգամ սորվեցուցան բաները չէին ուզեր ընդունիլ, մինչև որ քննեցին և համեմատ դասն զանոնք Սուրբ Գրոց : Կործ . ԺԷ . 11 : Կուն ալ հեռէ՛ք ուրիշն անոնց գովելի օրիակին, և Կրիստոսի ամենուս տուած պատու իրանին համեմատ

Վերքերը քննէ՛, (Հովհ. Ե. 39.) որոնք միամիտները իմաստուն ընելու (Սաղմ. ՃԺԹ. 130) տրուած են, և որոնք որ մանուկներն սլ կրնան իմաստուն ընել փրկուելու (ք Տիմ. ք. 15,) որ դուն կարենաս գիտնալ թէ՛ «աս բաները ասանկ են մի՛» : Վորձ. Ժէ. 11 : Վսիկայ ըրէ՛ խոնարհարար աշօթեղով՝ որ Սուրբ Հոգին քեզ լուսաւորէ, և ճշմարիտ փափաք մը տայ քեզի՛ ճշմարտութիւնը սորվելու և անոր հնազանդելու, և անշուշտ պիտի գտնաս ճշմարտութեան ճամբան ու պիտի փրկուիս : Վայց թէ որ ասիկայ չընես, յոյժ հաւանական է որ վերջապէս անպատու՛մ և յաւիտենական տրտմնութեամբ պիտի սորվիս՝ թէ՛ «Վայ եղեր ճանապարհ մը՝ որ թէպէտ ուղիղ երևցեր է քեզի, ու նաև շատ ուրիշներուն, բայց տակաւին անոր վերջը մահուան ճանապարհներ են՛» : Վասկ. Ժղ. 25 : Թէ որ աս հետեւել երեսներուն մէջ ըսուածը Սուրբ Վրոց մէջ յայտնուած Մատուճոյ Խօսքին համեմատ չես գտներ, մի՛ ընդունիր անիկայ. բայց թէ որ համեմատ կը գտնես, ընդունէ՛ անիկայ ճիշտ ան ճշմարտութիւնը ըլլալ՝ որով որ աշխարհս պիտի դատուի, և որով որ քու յաւիտենական վիճակդ պիտի որոշուի :

Վճիպա՛

Երես . Տող .	Սխալ	Ուղիղ
39 12	հաղածի պէ՛	հաղածի պէս
43 25	ծնած է	ծնած մէկն է
43 26	և ոչ մէկն թէ՛	և ոչ թէ
95 18	դրսուանց	որ դրսուանց

Գ Լ Ո Ւ Խ Ե ։

Մկրտութեան վրայ ։

Մկրտութիւնը Վրիստոսէն հրամայուած կանոն մըն է . երբոր խրկեց Տէրն մեր իր առաքեալները Մետաբանը քարոզելու ամէն աշխարհ , չէ թէ միայն պատուիրեց անոնց որ աշակերտեն հեթանոսները , այլ նաև մկրտեն զանոնք : Սաղմ . իր . 19 : Ուստի երբոր մարդիկ կը հաւատային Վրիստոսի կը մկրտուէին , ինչպէս որ կը սորվիմք՝ Նոր կրտակարանին մէջի բազմաթիւ օրինակներէն և ծանօթութիւններէն : Վրիստոնէութեան առաջին ժամանակէն ՚ի վեր , ամէն դարու և ամէն Վրիստոնէից մէջ աս կանոնը պահուեր է : Բաց ՚ի հին ատենի քանի մը մարդոցմէ և փոքր աղանդէ մը որ կայ հիմայ Մեզոպոտամիա ու Մերիդայի մէջ Բարեկամք (կամ անարգութեան համար Վուէյբըրա Կոլոնի) ըսուած , բնաւ չեղան անանկ քրիստոնեաներ որ անհարկաւոր սեպէին մը կըրտութիւնը , թէպէտ և տարբեր կարծիքներ եղած են անոր ինչ մտօք և ինչ աս

տիճանով հարկաւոր ըլլալուն վրայ : Աս նիւթին վրայօք պիտի խօսիմք տետրակիս մէջը : (Տ՝ս . 91 . և .) բայց նախ կուզեմք մը կրտութեան ինչ ըլլալը քննել :

Ա. Թէ ի՞նչ է մկրտութիւնը :

Մկրտութիւնը՝ ինչպէս որ վերը ըսինք Վ. քիստոնէ հրամայուած կանոն մըն է , ու պէտք է որ բոլոր իրեն հետևողները պահեն անիկայ : Միաձայն հաւանութեամբ ընդունուած է թէ մկրտութիւնը միայն հաւատացեալներուն և իրենց տղոցը պէտք է մատակարարուիլ , և թէ հեթանոս մը կամ անհաւատ մը արժանի չէ մկրտուելու քանի որ դարձի եկած չէ :

Մկրտութիւնը պէտք է կատարուիլ «Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն Արբոյ» : Մատթ. 19 : Յիրաւի Յովհաննէս Ակրբտիչ աս անունովը չմկրտեց , բայց անոր մկրտութիւնն ալ Վ. քիստոնէական մկրտութիւն չէր . և որ և իցէ մկրտութիւն յանուն Արբոյ Արբորդութեան չմատակարարուած , իբրև Վ. քիստոնէական մկրտութիւն ընդունուելու չէ :

Մկրտութիւնը ջրով կատարուելու է : Աս էր դորձածած նիւթը Յովհաննու և Հրէից իրենց մկրտութիւններուն ատենը , նմանապէս Մուսայից , և առաջին ատենի

քրիստոնեաներուն . (Տե՛ս . Վարժ . Ը . 36 , և՛) և մինչև ցայսօր բոլոր Վրիստոնեաները ջուրը ունեցան մի միայն գործածելու նիւթ սա խորհուրդին * :

Ի . Թե՛ ի՞նչ է Սկրտութեան դիտաւորութիւնը և օգուտը :

Երեք տեսակ կարծիք ընդունուած է Սկրտութեան դիտաւորութեանը և օգուտին վրայով : Եւաջին՝ թէ Սկրտութիւնը ըստ

* Սակայն ոմանք կրտսն՝ թէ որ հեթանոս մը գարձի գայ, և փափաքի մկրտուիլ, բայց տակաւին չմկրտուած մեռցունեն զինքը, ան մարդը բուն իր արիւնովը մկրտուած կը լայ, և ՚ի՛նպատասաբանին Վրիստոսի Օլերէդէոսի որդւոց հարցումը օրինակ կը բերեն . որուն մէջ Վրիստոս իր կրելու չարչարանքները կը նշանակէր ըսելով . «Արնա՞ք խմել ան գաւաթը, որ ես պիտի խըմեմ . կամ ան մկրտութիւնը մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ» : Ստր՛ . Ի . 22 :

Բայց հոս տեղ արդեօք Վրիստոս նկարագրական մկրտութեանը համար կրխօսի . չէ, քանզի թէ որ ան չարչարանքները նկարագրական մկրտութիւն մը ըլլար, ուրեմն նաև նկարագրական գաւաթ մը խմել պիտի ըլլար . ուստի յայտնի է թէ իր խօսքերը այլաբանական՝ են : Վրիստոս ըսաւ ևս «Իմ գաւաթս պիտի խմէք՝ և ան մկրտութիւնը որ ես պիտի մկրտուիմ, պիտի մկրտաիք», (Համար . 23) քի՛ իմ չարչարանքներու հաղորդ պիտի ըլլաք : Եւ սա խօսքիս համեմատ հակորոս՝ սա երկօրքին մեծը, և երովդէսէն գըլ-

ինքեան վերստին ծնունդ , կամ նորէն
 ծնանիլ է : Երկրորդ՝ թէ անիկայ լստ ին-
 քեան վերստին ծնունդ չէ , հապա վերստին
 ծնանելու , և սկզբնական մեղաց սրբուե-
 լուն միջոցը : Երրորդ՝ թէ անիկայ պարզա-
 պէս արտաքին նշան մըն է և օրինակ վե-
 րստին ծննդեան . կնիք մը ան հոգևոր
 ուխտին՝ որն որ ճշմարիտ հաւատացեալը
 Վրիստոսով Մատուծոյ հետ կընէ , իրեն՝ և
 իր զաւկընէրուն համար . գործողութիւն մը՝
 որով անիկայ Վրիստոսի վրայ եղած իր հա-
 ւատքը կըցուցունէ մարդոց առջևը , և
 զՎրիստոս դաւանող ժողովոցոցը թիւը

խատուեցաւ , (Պարծ . ԺԷ . 2) բայց Յովհաննէս՝
 թէ և շատ չարչարանքներ կրեց , Վրիստո-
 սի համար չսպանուեցաւ . ուստի ոչ ալ այլաբա-
 նական մտօք կրնայ ըսուիլ թէ ան իր արինովը
 մկրտուեցաւ , ինչու որ իր արինը չթափուեցաւ :
 Աւտի Յովհաննէս մկրտուած էր ան մկրտու-
 թեամբը , որով որ Վրիստոս մկրտուեցաւ ,
 թէպէտև անոր անունին համար մահ չճաշակեց :
 Երգ թէ որ Յովհաննէս չմարտիրոսանալովը՝ ան
 մկրտութիւնովը մկրտուած սեպուեցաւ , ապա
 Երեմն մարտիրոսութեամբ մեռնիլը չէ ան մը-
 կրտութիւնը : Մակից զատ , թէ որ մէկ հեթա-
 նոս մը ճշմարտապէս հաւատայ , և մկրտուիլ
 չկրցած մեռնի , անիկայ պիտի չփրկուի՞ ուրիշ
 մահուամբ և ոչ մարտիրոսութեամբ մեռնելուն
 համար : Թէ որ սպանուելուն տեղը՝ հիւանդու-
 թիւնով մեռնի , իր հաւատքը պիտի չփրկէ՞ զին-

կըմտնէ ; ու երկրիս վրայի անոր անուան
եալ եկեղեցիին անդամը կըլայ :

Առաջին կարծիքը ընդունողները կըհա
ւատան թէ վերստին ծնունդ չկայ ; բացի
մկրտութեան արտաքին գործողութենէն ,
անանկ որ երբոր շրէայ կամ շեթանոս
մը մկրտուի , ան մկրտութեան լոկ գոր
ծողութիւնն է իր վերստին ծնունդը : Բայց
աս կարծիքը ունեցողներուն թիւը , միշտ
քիչ զած է : Կան ուրիշները որոնք կըսեն ,
թէ մկրտութիւնը ըստ ինքեան վերստին
ծնունդ է , որ ատեն միայն ըսել կուզին թէ
մկրտութիւնը վերստին ծնունդը յառաջ
բերելու միջոցն է : Բայց ով որ աս մտքը
ունի պէտք չէ որ ան խօսքը ըսէ , վասն զի
վերստին ծնունդը թէ որ մկրտութենէ յա

քը : Այո՛ , թէ որ մէկ մարդ մը կըհաւատայ , կը
փրկուի , թէ և ակամայ կամօք չմկրտուած մեռ
նի . Արեմն Արիւնով մկրտութիւնը՝ ոչ նկա
րագրական մտօք ոչ ալ այլարանօրէն , հարկա
ւորութիւն մը ունի մարդուս փրկութեանը : Մար
տիրոսութեամբ մեռնիլը մկրտութիւն համարուե
լու չէ . թէ որ ճշմարիտ հաւատք ունի մարտիրո
սը , առանց մկրտուած ըլլալու կրնայ փրկուիլ .
թէ որ չունի ճշմարիտ հաւատք բնաւ չկրնար
փրկուիլ : Արեմն չկայ անանկ վարդապետու
թիւն , ք՞ն Արիւնով մկրտուիլ , վասն զի մարմնոյն
մկրտութիւնը միայն ջուրով կըլայ , և հօգի
նը՝ միայն շոգւով Արբով :

ուաջ եկած բան մըն է, ուրեմն մկրտու-
թիւնէն զատ բան է. որովհետեւ գործը
մի և նոյն բանը չէ պատճառին հետ, հոսպա-
տարբեր բան մը անկից և անով յառաջ ե-
կած :

Ուրեմն քննենք՝ թէ վերաստին ծնունդ
կըլլայ մկրտութիւնով, անանկ որ եթէ մե-
կը մկրտուի կարենանք ըսել թէ նորէն
ծնաւ անիկայ վասն զի մկրտուեցաւ : Ըս-
հարկաւոր խնդիրը պիտի քննեմք յետագայ
գլխոյն մէջ :

Գ Լ ՈՒ Խ Ի Ը . Բ :

Ի՞նչ Սկրտութիւնը միջոց է վերաստին ծնունդի :

Ասոր պատասխանը տալու համար պէտք
է քննեմք, նախ՝ թէ կայ սուրբ Գրոց մէջ
վկայութիւն մը թէ մկրտութիւնը վերաստին
ծննդեան միջոցն է. քանզի թէ որ կայ
գրուած ասանկ բան մը, ուրեմն խնդիրը
վճռուած է : Ըայց տեղ մը այսպիսի վը-
կայութիւն չեմք գտնար : Միայն թէ վե-
րաստին ծնունդը ու մկրտութիւնը մէկ
տեղ յիշուած երկու վկայութիւն կըգրա-
նեմք որոնք որ հիմա պիտի քննեմք :

Մառաշինք աս է . «Թէ որ մէկ մարդ մը
 ջուրէն ու շողիէն ջնանի , չկրնար Մատու-
 ծոյ Թաղաւորութիւնը մանալ” : Զ.Վ. Գ. 5 :
 Բայց Թէ որ « ջուրէն ծնանիլ” բտելը , մը-
 կըրտուիլը բտել է (որն որ յետոյ պիտի տես-
 նեմք Թէ ամենեւին հաստատ չէ) , սակայն չը-
 սեր Թէ ջուրէն ծնանիլ և շողիէն ծնանիլը
 մի և նոյն բան է , կամ Թէ մէկը միւսէն
 յառաջ կուգայ . կիմացունէ Թէ երկուքն
 ալ հարկաւոր են , բայց գուցէ ամէն ատեն
 մէկ տեղ չեն պատահիր : Բտեմք Թէ աս
 « ջուրէն ծնանիլ” խօսքը մկրտութիւն կը-
 նըշանակէ . բայց ահա Տէրն մեր ասոր վրայ
 ուրիշ մէկ երկրորդ բան մըն ալ աւելցունե-
 լով , իբրև հարկաւոր , ց՝ շողիէն ծնանիլը ,
 կըցուցնէ Թէ աս երկրորդը առջինէն
 ասարբեր է և Թէ անկէց յառաջ չգար :

Բարձեալ Տիտ . Թղթոյն մէջ գլուխ Գ ,
 համար 5 , Մաքեալը կըսէ . « Իր ողորմու-
 Թիւնովը մեզ փրկեց նորէն ծնանելու ա-
 ւազանին ձեռքովը ու Սուրբ շողիին
 նորոգելովը” : Էիմա Թէ որ աս «նորէն ծը-
 նանելու աւազանին” խօսքը մկրտութեան
 վերաբերութիւն մը ունի , որն որ ետքը
 պիտի տեսնեմք Թէ յայտնի չէ , բայց Մ-
 աքեալը չըսեր Թէ ան աւազանը՝ ց՝ ան
 մկրտութիւնը նորէն ծնանիլն է , կամ նորէն
 ծնանիլ կըստաւարէ , այլ Թէ անիկայ

նորէն ծնանելու աւազանը կամ մկրտու-
 թիւնն է . ըսել կուզէ , չէ թէ Յովհաննէս
 սին բարոզած ապաշխարութեան կամ որ և
 իցէ Հրէական վարդապետութեան մը մը
 կըրտութիւնն է , հասլա՛ Նորէն՝ Նանելու
 վարդապետութեանը մկրտութիւնն է : ()
 ըինակի աղաղաւ Յովհաննէսին մկրտու-
 թիւնը Նապաշխարութեան մկրտութիւնն էր՝
 (Սուրբ . Թ . Կ . Կարծ . ԺԳ . 24) . չէ թէ իր մկրտ-
 ութիւնը ապաշխարութիւնն էր , կամ ա-
 պաշխարութիւն կըրպատճառէր . չէ թէ մը
 կըրտութեամբ ապաշխարութիւն տարու
 համար կըրմկրտէր , այլ ժողովուրդը կը
 մկրտուէին իբրև նշան և դաւանութիւն մը
 իրենց մեղքերէն զը ջանալուն : Ոչ թէ մը
 կրտութեան ապաշխարութիւն , այլ ա-
 պաշխարութեան մկրտութիւն բարոզեց
 Յովհաննէս : Նմանապէս թէ որ մկրտու-
 թիւնը վերստին ծնունդ ըլլար կամ պատ-
 ճառէր , անատենը Նաաբեալը փոխանակ
 «նորէն ծնանելու աւազանին ձեռօքը» ըսե-
 լու , պէտք էր ըսէր՝ «աւազանին նորէն ծը-
 նանելու ձեռօքը» , ինտոր որ նոյն համարին
 մէջ կըսէ «Սուրբ Հոգիին նորոգելովը» :
 Բայց անոր ասանկ ըսելուն նայելով՝ կըրտու-
 նեմք թէ Նաաբեալը աղէկ գիտնալով թէ
 նոր ծնունդը Սուրբ Հոգիին գործն է , անոք
 համար կըսէ «Սուրբ Հոգիին նորոգելը» . և
 թէ մկրտութիւնը միայն մէկ նշան մըն է վե-

բըստին ծննդեան, անոր համար կըսէ, «Վորէն ծնանելու աւագանը». քի՛նորոգելը սուրբ Հոգիին կուտայ, քանզի իրեն դործն է. և աւագանը կամ մկրտութիւնը՝ նորէն ծնանելու կուտայ, քանզի անոր նշանը ու դաւանութիւնն է:

Երկրորդ՝ Սուրբ Վերքերը որ չեն ըսեր մեզի թէ մկրտութիւնը նորէն ծնանելու միջոցն է, արդեօք կըյուցընե՞ն մեզի մէկ ուրիշ միջոց մը՝ որով աս փոփոխութիւնը կըլլայ:

Վկանջ դիր ինչ կըսէ Յակոբոս Մաքեալը. «Ի՛ր ուզելովը մեզ ծնաւ Ճշմարտութեան խօսքովը»: Յ. 18: Մասնկ ալ Պետրոս, «Վորէն ծնած ըլլալով չէ՛ թէ ապականացու սերմէն, հասար անապականացուէն՝ Մտուծոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը»: Կ. 20: Մասնկ ալ Պողոս, «Հոգիին սուրբ՝ Մտուծոյ խօսքն է»: Կ. 7: Հիմայ տես, Յակոբոս չըսեր թէ Հոգիին Սուրբ Մտուած ծնաւ մեզ մկրտութեամբ, հապա կըսէ թէ ծնաւ Ճշմարտութեան խօսքովը: Պետրոս ալ չըսեր թէ Վորէն ծնած եմք մկրտութեամբ, հապա կըսէ թէ նորէն ծնած եմք Մտուծոյ խօսքովը: Վմանապէս Պողոս չըսեր թէ Մկրտութիւնն է ան գործիքը կամ միջոցը, որով կըգործէ Սուրբ Հոգին, հապա կըսէ թէ Մտուծոյ խօսքն է ան գործիքը:

Բասնկ կրսէ նաև Կորնթացիներուն , «Վո-
 հութիւն իմ Բստուծոյս , որ ձեզէ մէկը
 չմկրտեցի , միայն թէ Կրիստոսը ու Վայխո-
 սը . . . և Ստեփանէին ընտանիքը” : Կ-
 Կորնթ . Կ . 14 , 16 : Աստի դոհութիւն
 կուտա՞ր Բստուծոյ թէ ինքը նորէն ծնանե-
 լու միջոցը չեղաւ անոնցմէ մէկուն : Միթէ
 ինքը ան նոյն դիտաւորութեամբը խրկուած
 չէ՞ր որ մարդոց նորոգութեան և փրկութեան
 դործը յաւաջ տանի : Բայց մկրտութիւնը
 վերատին ծնունդ սեպուելու է նէ , Պօղոս
 դոհութիւն կուտայ Բստուծոյ թէ ինքը մի-
 այն անոնցմէ մէկ քանին վերատին ծնաւ , և
 անմիջապէս ալ կրչարէ , «Ինչու որ Վ.ը
 բխտոս զիս մկրտելու չխրկեց , հասրա ա-
 ւետարանը քարոզէլու” . (Լուսր 17) և
 դարձեալ , «Վ.բխտոս Յիսուսով ես ձեզ
 ծնայ աւետարանովը” : Վ.Լ . 7 . 15 : Պօ-
 ղոս յայտնապէս կրտորվեցունէ մեզի այս
 տեղ թէ ինչ է վերատին ծնանելու միջո-
 ցը : Ար և իբրև Կորնթոսի մէջ շատերը
 ծնաւ նոր կեանքի մէջ Սուրբ Հոգիովը .
 և անոնք թէպէտ իր միջնորդութիւնովը
 ծնան , բայց անոր գործածած միջոցը չէ
 թէ մկրտութիւնն էր , հասրա ճշմարտու-
 թեան խօսքին քարոզութիւնը , Բստուծոյ
 Բւետարանը և Խօսքը : Աւրեմն արդէն ո-
 բոշուեցաւ աս խնդիրը թէ՛ չէ թէ մկրտու-
 թիւնը , հասրա Բստուծոյ խօսքն է վերատին

Ճնունդը կատարող մեջոցը : Բայց սա նիւթը աղէկ մը հասկընալու համար , բնեմբ հիմա թէ ինչ կընշանակէ վերստին ճնունդը : Աւրեմն ,

Ինչ է վերստին ճնունդը :

Վերստին ճնունդը՝ Հողիին մեր մէջը կատարած գործողութիւն մըն է . և որովհետեւ փրկիչն մեր կիմացունէ ասոր փրկութեան խիստ հարկաւոր ըլլալը , անտարակոյս Հողայն սրբոյ մեր փրկութեանը համար կատարած գլխաւոր գործն է : Ինչ գործն է աս՝ որով երկինքը կըստանամբ , և աւանց որոյ երկինքը կըկորսնցընեմբ : Վերստին ճնունդ խօսքը՝ յայտնապէս այլաբանօրէն է , սակայն այնպէս ըսուածք մը՝ որուն նըշանակութիւնը զիւրաւ կըհասկըցուի : Եւ սիկայ անանկ մէկ փոփոխութիւն մըն է հողեւոր բաներուն նայելով , ինչպէս որ է բընական ճնունդը բնական բաներուն նայելով : Բնական ճննդեամբ , բնական աշխարհը կը մըտնեմբ և մարդ կըլլամբ . վերստին ճննդեամբ Վրիստոսի Հողեւոր թագաւորութեը մէջ կըմտնեմբ և Վրիստոնեայ կըլլամբ : Բնական ճննդեամբ մեր երկրաւոր ճնողացը դաւակնեիրը և անոնց ընտանեացը ու գերդաստանին անդամները կըլլամբ . վերստին ճննդեամբ Եստուծոյ զաւակները կըլլամբ հողեւորական մտօք , իր ընտանիքին մէջը

կրնդունուիմք և իր Հոգևոր գերդաստանին
անդամները կըլլամք : Մնական ծննդեամբ
չատ նմանութիւն ունիմք մեր ծնողացը
մարմնոյ կողմանէ . կըստանամք իրենց բը-
նութիւնը , և մօտ ու կայուն միաւորութիւն
մը ունիմք անոնց հետ . վերստին ծննդեամբ
Մատուածային բնութեանը հաղորդ կըլ-
լամք . (Ի Պէր . Կ . 4) Ստեղծողին պատկե-
րին պէս կըլլամք . (Կր . 7 . 10) և կըմիա-
ւորիմք անոր հետ անբախտելի միաւորու-
թեան մը կապովը : Եղև . Ի . 19 , 22 : Մնա-
կան ծննդեան փորձաւորութիւնը մէկ անգամ
միայն կըկատարուի մեր վրայ . անով կա-
տարեալ մարդ կըլլամք ըստ բնութեան ,
այլ ոչ ըստ հասակին . մարդու բնութիւն
կունենամք ու չէ թէ թուջունիմք կամ կեն-
դանիի . մարմին մը կունենամք իր ամէն
մասունքները և անդամները կատարեալ ,
բայց անոնք փոքր ու տկար , և անկէ ետքը
մեր անդամները ոչ կաւելնան և ոչ ալ ի-
րենց ձևը կըփոխեն , հապա միայն կաճին
ու կըզօրանան և կըմեծնան : Մասնկ ալ
վերստին ծննդեան փորձաւորութիւնը միայն
մէկ անգամ կըլլայ մեր վրայ . փոփոխու-
թիւնը կատարեալ է ըստ բնութեան , այլ
ոչ ըստ կատարելութեան : Ա վերստին ծը-
նած անձը սկիզբը կատարելութեան հասած
քրիստոնեայ մը չէ , հապա Մատուծոյ մէկ
զաւակը : Այլբեմն շատ շնչին տկար և անզօր ,

բայց տակաւին հարազատ զաւակ մըն է .
 և անկէ ետքը չկայ ուրիշ փոփոխութիւն մը
 ան իր առջի նորէն ծնած ատենին պէս ,
 հապա կաճի , կըզօրանայ և վերջապէս
 գեղեցիկ , աւոյգ , բարեյարմար և կատար-
 եալ բրիստոնեայ մը կըլլայ : Աւ որովհետեւ
 սրբազործութիւնը ըստ բնութեան վերատին
 ծնունդէն չտարբերիր , հապա միայն անոր
 սկսածը յառաջ կըտանի դէպի կատարե-
 լութեան , վասնորոյ վերատին ծննդեամբ
 ինչ սկսիլը աղէկ իմանալու համար պէտք
 է ըստ հասկնալ սրբազործութեամբ ինչ
 բան յառաջ տարուիլը :

«Ինչու որ մարմինէն ծնածը մարմին է ,
 ու շողիէն ծնածը՝ հողի» : (Յով. 7. 6 : Աւ-
 մէն ծնեալ իր ծնողին բնութիւնը և անոր
 նմանութիւնը կունենայ : Մեր բնական
 ծննդեամբը՝ մարմինէ ծնած եմք և մարմին
 եղած եմք , յի չէ թէ միայն մարդ կըլլամք
 մարդկային բնութիւն ստացած , այլ նաև
 կըլլամք մեղաւոր , ապականեալ և եղծեալ
 բնութեան տէր : Մարմնոյ գործքերը աս բը-
 նութեանը ձևացուցած արդիւնքներն են .
 անոնցմէ կըսորվիմք ան բնութեան ինչ ըլլա-
 լը՝ ուրիկէց որ անոնք յառաջ կուզան : Աւ-
 ըմն ի՞նչ են ան գործքերը . (Մարմինին
 գործքերը յայտնի են , որ ասոնք են՝ շնու-
 թիւն , պուսկուլութիւն , պղծութիւն , գիճու-
 թիւն , կուսպաշտութիւն , կախարդութիւն ,

Թշնամութիւն , միճմունք , նախանձութիւն ,
 բարկութիւն , հակառակութիւններ , երկ-
 պառակութիւններ , անմիաբանութիւններ ,
 չար նայուածքներ , սպանութիւններ , գի-
 նովութիւններ , անուակութիւններ , ու ինչ
 որ ասոնց նման են” : Վարդ . Ե . 19 — 21 :
 «Վե որ իր մարմինն մէջ կըցանէ՝ ան մար-
 մինէն պիտի ապականութիւն հնձէ” :
 Վարդ . Դ . 8 : «Վս ինքիրմէս . . . մարմինով՝
 մեղաց օրէնքին կըծառայիմ” : Լուսին . Է .
 25 : «Չեր ոգասութիւնը մարմինի ցան-
 կութիւններուն պատճառ չըլլայ” : Վարդ .
 Ե . 13 : «Ինչու որ ան ամէն բաները որ
 աշխարհի մէջ է՝ մարմնոց ցանկութիւն է ,
 և աչքի ցանկութիւն է , և առ կեանքիս
 հարարութիւնը . որ ան Լօրմէն չէ՞ , հասլա-
 սա աշխարհէս է” : Թեոփ . ք . 16 : «Վեմք
 որ մարմնոց պղծութիւնով լեցուն ցանկու-
 թիւններուն ետեւէ կերթան , տէրութիւն կտ-
 նարդեն , դիմադարձ , յանգուղն” : ք Պէր .
 ք . 10 : «Ինչու որ մարմնաւոր խորհուրդը մահ
 է . . . Պատճառն որ մարմնաւոր խորհուր-
 դը Մտուծոյ դէմ Թշնամութիւն է . որ Մտ-
 տուծոյ օրէնքին չ՛նազանդիր , մանաւանդ
 չկրնար ալ : Այնն զի մարմինով եղողները
 Մտուծոյ հաճոյ չեն կրնար ըլլալ : Ինչու որ
 եթէ մարմինիս պէս ապրելու ըլլաք՝ պիտի
 մեռնիք” : Լուսին . ք . 6, 7, 8, 13 : (Արեմե Սար-
 մինը” մեր բնութեան ան ապականու-

Թիւեր կրնշանակէ որով ծնած էմք աշխարհ
 հիս մէջ, և ուրիշէց որ մեղաւոր կիրքեր և
 դործքեր յաւաջ կուգան: Ահա առ է ան
 աղբիւրը՝ ուրիշէց կրբղիւին, հպարտաւ
 Թիւն, աղահոլ Թիւն, անճնասիրտ Թիւն,
 նախանձ, ատելու Թիւն սրտի առ Աստուած,
 անհնազանդու Թիւն իր պատուիրանքնե
 րան, Թշնամու Թիւն իր պաշտօնին և իր ժո
 դովուրդին, շարակամու Թիւն, ատելու
 Թիւն, և ամէն չար ու զղուելի դործքեր:
 Ամէն մարդ ունի առ մեղաւոր ապականեալ
 բնու Թիւնը. ամէն մարդ ՚ի բնէ մարմինին
 կրճառայէ, յի ինչպէս որ կրսէ առաքեա
 լը, մեղաց ծառաներն են: Հով. Գ. 17:
 Միայն մարմնոյ դործքերը կրկատարեն,
 Թէ և տարբեր եղանակներով և տարբեր
 ատիճաններով. կարելի է շատ տարբերու
 Թիւն ըլայ իրենց արտաքին վարուցը մէջ,
 բայց Աստուածային աչքը կրտեսնէ Թէ
 անոնք բնականաբար նոյն և նման են սրտով:
 Ամէնն ալ հաւասարաբար մարմնոյ և մե
 ղաց կրճառային, Թէպէտև տարբեր կեր
 պերով. ուստի անոնց ամէնն ալ նոյն կար
 դին կրվերաբերին. ու Թէ որ ան վիճակին
 մէջ մեռնելու ըլան, ամէնն ալ նոյն գա
 տապարտու Թեան տեղը պիտի երթան:
 Անոնցմէ բնաւ մէկը չկրնար երկինքը մբո
 նել, վասն զի չէ Թէ միայն ամէնն ալ Աս
 տուծոյ սրբազան օրէնքին դատապարտու

Թեանը տակն են, այլ նաև անոնցմէ ոչ մէկն
 ալ յարմար է երկինքը ընդունուելու . Թէ
 որ մէկը հոն ընդունուէր իր հիմակու ունե-
 ցած ապականեալ պիղծ բնութեամբը, մե-
 դանչելէն զատ բան մը պիտի չընէր հոն :
 Սակայն կը կարգամք Թէ պիղծ բան մը չկըր-
 նար մտնել ան սուրբ տեղը : Աստուած՝ ճո-
 րոգուած մեղաւոր մը, ապստամբ և իրեն
 դէմ Թշնամի մը բնաւ պիտի չընդունի ան
 երջանիկ աշխարհը . և Թէ որ Աստուած
 հաճելու ալ ըլլար մեղաւոր մը ընդունիլ
 հոն, ի՞նչպէս պիտի կրնար երջանիկ ըլլալ
 ան մարդը . քանզի իր սիրած մէկ բանը
 չկայ հոն : Ինքը կատէ զԱստուած, և անոր
 հանգամանքները, օրէնքը, և պաշտօնը .
 ինքը պիտի չկրնայ տանիլ անոր վառւայր
 երևոյթը, և պիտի չկրնայ զտնալ հոն տեղ
 իրեն յարմար ընկերութիւն, քանզի հրեշ-
 տակները ու բոլոր սուրբ էակները սոսկա-
 լով պիտի փախչին իրմէն, ու իր վրայ
 բնաւ կարեկցութիւն մը պիտի չունենան :
 Օգարհուրելի տեղ մը պիտի երևայ երկին-
 քը իրեն, և եթէ կարելի է ըսել՝ շատ
 աւելի Թշուառութեան մէջ պիտի ըլլայ
 հոն, քան Թէ զժոխքին մէջ : Աւստի մեղա-
 ւոր մը փրկուելու կարող ըլլալու համար,
 չէ Թէ միայն պէտք է որ իրաւունք ունենայ
 երկինքը մտնելու, այլ նաև յարմարու-
 թիւն մը . չէ Թէ միայն պէտք է անոր որ

մեղաց օրատիճէն ազատած ըլլայ ու երկնից
 դուռը բացուած ըլլայ իրեն , հապտ նաև
 պէտք է որ բուն մեղքէն ալ խախտած ըլ-
 լայ , և անանկ փոխուի որ յարմարութիւն
 ունենայ երկինքը բնակելու : Արդ՝ ան փըր-
 կութիւնը որ աւետարանը կրմատուցանէ
 մեզի , սա երկու բաներն ալ կը պարունա-
 կէ իր մէջը : Վրիստոս՝ իր չարչարանքնե-
 լովը և մահովը մեղաց քաւութիւն ընելու
 համար , օրէնքին անէծքէն մեր ազատու-
 թիւնը գնեց , երկնային դուռը բացաւ մե-
 զի , և անոր յաւիտենական երջանկութիւ-
 նը վայելելու համար մեզի պէտք եղած ա-
 մէն բանը ստացաւ : Հողոյն Արքայ պար-
 զելը գնեց և տուաւ աշխարհի , (Էբլ . Ժ .
 7 : Սաղ . կր . 18 .) որ անոր յատուկ գործը
 մեղաւորները երկնից յարմարելու զանոնք
 հոն առաջնորդելն է :

Սակայն սա գործը կատարուելու համար
 պէտք է ամբողջ փոփոխութիւն մը սրտի ,
 «ինչու որ մարդը իր սրտին խորհածին պէս
 կը խորհի» : Սաղ . իգ . 7 : Սիրտը ամէն բա-
 րոյական գործոց աղբիւրն է . «բարի մարդը՝
 իր սրտին բարի գանձէն բարի բաներ կը
 հանէ . և չար մարդը՝ իր սրտին չար գան-
 ձէն չար բաներ կը հանէ» : Սաղ . Ժ . 35 :
 «Վարի ծառը չկրնար չար պտուղ տալ ,
 ո՛չ ալ չար ծառը բարի պտուղ տալ» :
 Սաղ . Է . 18 : Պտուղին բնութիւնը ծառին

 9481-57
 1623
 1825

բնութեանը պէս պիտի ըլլայ . պտուղին բնութիւնը փոխելու համար , հարկ է որ առաջ ծառին բնութիւնը փոխուի : Չար մարդ մը բարի բաներ ընելու համար , պէտք է իր սրտէն հանուի չար գանձը , և անոր տեղը բարի գանձ դրուի , « մարմինէն ծնածը պէտք է փոխուի շողիէն ծնած ըլլայ » : Այլ ահա աս փոփոխութիւնն է Սուրբ Վրոց վերստին ծնունդ ըսածը . աս է ան բանը որ մեր Ֆրկիչը կընշանակէր երբոր անանկ վսեմ եղանակով ըսաւ՝ Աիկողեմոսին , թէ առանց անոր մէկը չկրնար երկինքը երթալ : Սուրբ շողիին յատուկ գործը սրտին մէջ աս մեծ փոփոխութիւնը գործել և անիկայ կատարեալ լրումին հասցունել է , նորէն ծնած անձը պահպանելով՝ զօրացունելով՝ առաջնորդելով և մխիթարելով : Ահա մէկ փոփոխութիւն մը որ արժանի է Վերստին՝ Նունդ կոչուելու , և ասկէց զատ ամենեւին ուրիշ բան մը արժանի չէ աս անունին . վասն զի մինակ սսիկայ է նոր կենաց մէջ մտնել մը և նոր գոյութեան սկզբնաւորութիւն մը :

Արդարև երբոր մարդկային հողին կը ծնանի Սուրբ շողիէն , իր մարմնաւոր բնութիւնը բոլորովին չմեռնիր , այլ տակաւին կենդանի է . և քրիստոնեայ մարդը երկու օրէնք կրտեսնէ իր անդամներուն մէջը իրարու դէմ դէնք վերուցած . (Հովհ. Է. 23.)

Գ Լ ՈՒ Խ • Գ •

Վերստին ծնունդը հոգևոր փոփոխութիւն մը ըլլալուն համար այլ ևս վկայութիւններ :

Նախընթաց գլխոյն մէջ հաստատուածին պէս, վերստին ծննդեան ներքին հոգևոր փոփոխութիւն մը կամ սրտի նորոգութիւն մը ըլլալը կերևայ նաև աս հետևեալ քննութիւններէն :

Ը. Կերևայ նախ ան պատճառէն՝ որուն համար որ Վրխատու կըսէ թէ հարկաւոր է աս փոփոխութիւնը. «Վնչու որ մարմինէն ծնածը մարմին է, ու Հոգիէն ծնածը՝ հոգի» . ց՝ մարդիկ բնականաբար մարմինէ ծընած են ու երկինքի ալ անյարմար, ուստի պէտք է որ Հոգիէն ծնանին, որպէս զի երկինքի յարմար ըլլան: Աւրեմն յայտնի է որ Հոգիէն ծնած ու երկինքը ընդունուելու ալ յարմար եղածը, հոգևոր փոփոխութիւնով մը՝ մարմինէն ծնած ու երկինքի անյարմար եղողին ճիշտ հակառակը եղած է :

Բ. Ըն որ Հոգիէն ծնած է Հոգիին պէս պիտի ըլլայ ըստ բնութեան, ու Հոգիէն ծընած ըլլալուն հաստատութիւնը ան պրտունդները պիտի ըլլան, որոնք որ Սուրբ Հոգին կարտադրէ վերստին ծնած մարդոց ներսիդին : Վանզի Հոգիին բնութիւնը

սուրբ է, և անոր պտուղները են «հէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնատու-
թիւն, քաղցրութիւն, բարութիւն, հա-
ւատք, հեղութիւն, ժուժկալութիւն :
Վար. ե. 22, 23 : Եւ սա պտուղները միայն
անոնց քով կը զանուին՝ որոնք որ Սուրբ
Հոգիէն ծնած են :

Վ. Ս. Էրատին ծնունդ կը կոչուի «Սուրբ
Հոգիին նորոգելը» . (Տե՛ր. 7. 5.) սա նորո-
գութեան ինչ բլլալը՝ Պօղոս առաքեալ կը
բացատրէ ըսելով, «...ին մարդը իր զործ-
քերովը վրաներնուդ հանեցէք . և վրանիդ
հազէք ան նորը գիտութիւնով նորոգուած՝
իւր Ատեղծողին պատկերին պէս» : «Եւ վը-
րաներնուդ մէկ դի հանէք ան առջի ձեր
վարմունքին պէս եղած հին մարդը՝ խաբե-
բայ ցանկութիւնով ապականուածը . և ձեր
միտքին Հոգիովը նոր բլլաք, և նոր մարդը
վրանիդ հազնիք, ան որ Ըստուծոյ պատկե-
րին պէս ստեղծուած է, արդարութիւնով
ու ճշմարիտ սրբութիւնով» : Վար. 7. 9, 10 :
Եւ Է. 7. 22—24 : Վոր մարդը ըսուածը
ան բանն է՝ որն որ վերատին ծննդեամբ կը
ստացուի : Ըս նորոգութեան բնութիւնը Եւ-
ղեկիէլի մէջ առաւելը պարզ կը տեսնուի,
ուր տեղ Սարգարէն Վրիստոսի ժամանա-
կին վրայ խօսելով կըսէ . «Վոր սիրտ
մը պիտի տամ ձեզի, ու ձեր մէջը նոր հո-
գի մը պիտի դնեմ, և ձեր մարմիններուն

մէջէն քարեղէն սիրտերը պիտի մէկ զի
հանեմ, և մարմնեղէն սիրտ պիտի տամ: Աւ-
իմ Հոգիս ձեր մէջը պիտի դնեմ, և պիտի
ընեմ՝ որ իմ օրէնքներուս մէջը քայէք,
և իմ դատաստաններս պահէք, ու անոնց
մով զործէք»: Առեւ. Լճ. 26, 27: «Վմանա-
պէս կըտեսնուի ան խօսքերուն մէջ՝ որոնք
Սուրբ Հոգիին զործը մարդոց սրտին մէջ,
մասնաւորապէս կըստորագրեն: Տե՛ս Հռոմ. Ը.
Է. 1: Ինչպէ՛ս. ԺԲ. 3—11:

Գ. Կերևնայ վերստին ծնանողներուն հա-
մար բոլոր աս ըսուածներէն.

1. Թէ անոնք Վրիստոսը ընդունէր են.
«Վնոնք՝ որ զինքը ընդունեցին . . . որ ա-
նոնք . . . Մտուծմէ ծնած են»: Յով. Թ.
12, 13:

2. Թէ Վրիստոսի հաւատացեր են.
«Որոնք որ կըհաւտան իր անունին»: Յով.
Թ. 12: «Վմէն ով որ կըհաւտայ Թէ Յիսու-
սը Վրիստոսն է», (յի ճշմարիտ և կենդանի
հաւատքով մը կըհաւտայ,) Մտուծմէ
ծնած է: Թ Յով. Է. 1:

3. Թէ անոնք կըսիրեն զՄտուած և
զմարդ. «Վմէն ով որ կըսիրէ Մտուծմէն
ծնած է»: Թ Յով. Դ. 7: «Թէ որ մէկը զը-
րուցէ Թէ ես Մտուած կըսիրեմ, ու իր
եղբայրը ատէ՛ անիկա սուտ է. սին որ իր
եղբայրը չսիրէր որ կըտեսնէ, Մտուած
որ չտեսներ՝ ինտո՞ր կրնայ սիրել»: Թ Յով.

7. 20 : Եւ մանաւանդ անոնք իրենց պէս ուրիշ նորէն ծնածներն ալ կըսիրեն, «Վ՛մէն ով որ ծնողը կըսիրէ, անկէց ծնածն ալ կըսիրէ : Թ՛Յ՛՛՛՛. Ե. 1 :

4 . Թէ անոնք արդարութիւն կը գործեն . «Վ՛մէն ով որ արդարութիւն կը գործէ, անկէց (Մատուցմէ) ծնած է” : Թ՛Յ՛՛՛՛. Բ. 29 :

5 . Թէ անոնք մեղք չեն գործեր . «Վ՛մէն ով որ Մատուցմէ ծնած է՝ մեղք չընէր . ինչու որ անոր սերմը իր մէջը կըմնայ, ու չկրնար մեղք գործել . պատճառն որ Մատուցմէ ծնած է” : Թ՛Յ՛՛՛՛. 7. 9 : «Վ՛խտեմք որ ան ամէնը որ Մատուցմէ ծնած է՝ մեղք չգործեր . հապա ան որ Մատուցմէ ծնած է՝ ինքզինքը կը պահէ, ու չարը իրեն չմտնար” : Թ՛Յ՛՛՛՛. Ե. 18 : Մտաբան անիկայ բոլորովին ազատ չէ մեղքէ, մարմինը իր մէջը տակաւին կենդանի է, բայց չթաղաւորեր իր վրայ : Իր յանցաւոր գտնուած մեղքերը, սրտին մեղքերն են, կամ անոնք են՝ որոնցմէ փորձութեամբ խաբուելով յաղթուած գտնուեցաւ : Ինքը չմեղանչեր ուրիշներուն ըրածին պէս, ոչ ալ բուն առջի իր գործած մեղքերուն պէս : Չմեղանչեր դիտութեամբ, կամաւ և ունակաբար : Մ. յ. և չժառայեր մեղքի, հապա կատէ զանիկայ, կը մտաբանի անոր դէմ, և Մատուցմային շնորհաց օգնութեամբը՝ կը յաղթէ :

անոր : Ըս մտօք կըսուի թէ անիկայ չմեղանչեր , և թէ «Վն որ մեղք կըզործէ՝ Սատանայէն է : Թ՛Վ՛՛ . 7 . 8 :

6 . Թէ անոնք աշխարհի կըյաղթեն . «Վն թափէնր որ Մտուծմէ ծնած է՝ աշխարհին կըյաղթէ» : Թ՛Վ՛՛ . Ե . 4 : Փոխանակ աշխարհը սիրելու , զանիկայ փնտրուելու և անոր ծաւայելու , իբրև թշնամի մը կըհամարի իրեն , և կըյաղթէ անոր : Եւ աս բանը անիկայ հաւատքով կընէ , «Վսիկայ է յաղթութիւնը՝ որ աշխարհին կըյաղթէ , քմեր հաւատքը» : Թ՛Վ՛՛ . Ե . 4 , 5 :

7 . Թէ անոնք Մտուծոյ որդիքն են . «Վնոնց իշխանութիւն տուաւ Մտուծոյ որդիները ըլլալու» : Թ՛Վ՛՛ . Թ . 12 : Բայց որոնք են Մտուծոյ որդիները : Ընոնք են որ Վրիստոսի կըհաւատան . «Վնչու որ ամէնքնիդ ալ Մտուծոյ որդիք էք՝ Յիսուս Վրիստոսի հաւատքովը» : Գ՛աւ . 7 . 26 : Ընոնք են որ չողիով կաւաջնորդուին . «Վնչու որ անոնք որ Մտուծոյ չողիովը կաւաջնորդուին՝ Մտուծոյ որդիքն են անոնք» : Թ՛Վ՛՛ . ք . 14 : Ընոնք են որ արդարութիւն կըզործեն , և այսպէս որոշեալ են չարին զակընդոյն : Թ՛Վ՛՛ . 7 . 10 : Ընոնք են որ կըմաքրեն ինքզինքնին , ինտոր որ Մտուած մաքուր է : Թ՛Վ՛՛ . 7 . 3 : Մէկ խօսքով անոնք են որ Վրիստոսի ճշմարիտ աշակերտներն են , և կըսիրեն անիկայ , կը

հնազանդին անոր օրէնքներուն ; կապաւի-
նին իր շնորհացը , և ժառանգներն են յա-
ւիտենական կենաց : Լուս. ք. 17 :

Ընտանիքս ես անոնք , որոնք վերստին
ծնած են : Ընտանիքս Սուրբ Լուսինն նորոգ-
ուած են , նոր սիրտ մը և նոր հոգի մը ու-
նին , մաքուր , խոնարհ և սուրբ կեանքով
մը Լուսինն գործողութիւնը կը ցուցունեն
իւրենց մէջը , և Ընտանիքս սիրելի որդիքը
և ժողովուրդն են : Թէ որ մէկը սրտով և
վարքով ասանկ փոխուած չէ , թէ որ
այսպէս չսիրեր զԸնտանիքս , չգործեր ար-
դարութիւն , չփախչիր մեղքէ , և յայտնի
չցուցունէր Լուսինն պտուղները , ան մար-
դը թէ մկրտուած ըլլայ և թէ չմկրտուած՝
վերստին ծնած չէ : Իսկ ով որ Լուսինն
աս գործողութիւնը իր սրտին վրայ կա-
տարուած ըլլայը յայտնի կը ցուցունէ , ան
մարդը թէ մկրտուած ըլլայ և թէ չմկրտու-
ուած , վերստին ծնած է :

Ընտանիքս փոփոխութիւնը՝ որով որ մար-
դիկ նորէն ծնած կը ըլլան , արդեօք մկրտու-
թեամբ ձեռք կը բերուի : Թէ որ անանկ
ըլլայ , ուրեմն ամէն մկրտեալները վերի-
ցիշուած յատկութիւնները պարտին ունե-
նալ և Սուրբ Ընտանիքս վրայ ամէն ըս-
տուածները Սուրբ Ընտանիքս վրայ ալ պարտին
ըսուիլ . և անատենը պիտի կրնամք ալ
այսպէս կարգալ , « Ընտանիքս մկրտուած է :

մեղք չգործեր . . . և չկրնար գործել ,
վասն զի մկրտեալ է : Ամէն ով որ մը-
կրտուած է աշխարհին կըլլաղթէ : Թէ որ
մէկը մկրտուած է , անիկայ նոր ստեղծ-
ուած մըն է , հինը անցած է և ամէն բան
նոր եղած է” : Արդեօք ասա՞նկ է , և չկա՞ն
մկրտեալ մարդիկ որ ունակաբար և յօ-
ժարակամ կըմեղանչեն : Ամէն մկրտեալ
մարդիկ նոր սխրտ մը և նոր հոգի մը ու-
նի՞ն , և Աստուծոյ օրէնքին մէջը կըբա-
լե՞ն ու պատուիրանքները կըպահե՞ն :
Ամէն մկրտեալ մարդիկ իրենց յօժարու-
թիւնները վերի բաներուն վրայ կըհաս-
տատե՞ն , չէ թէ վարի բաներուն վրայ .
(Առլ . 7 . 2) և կըբալե՞ն Հոգիին պէս ու չէ
թէ մարմինին պէս : Հոգի . 7 . 4 : Սար-
մինը իրեն յօժարութիւններովը և ցան-
կութիւններովը խաչը կըհանե՞ն , կըսե-
րե՞ն զԱստուած և իրենց եղբայրները ,
և մաքուր՝ աղօթասէր , անձնատեաց և բո-
լորովին հնազանդ կեանք մը կըվա-
րե՞ն : Արբօր մէկը կըմկրտուի , որ իր
մկրտուելէն առաջ հոգարտ , անձնատէր ,
յամուտեալ մեղաւոր մը , մարմինին գործ-
քերը բնող , աշխարհը սխրող և անոր
ծառայող մէկն էր , կըտեսնե՞նք արդեօք
որ անիկայ շուտով կըդառնայ՝ զգ ջայեալ ,
Աստուծոյ հնազանդ որդի մը կըլլայ , որ
մեղքը կասէ , որ աշխարհիս դէմ կը

մարտնչի, անանկ որ յայտնի երևնայ թէ՛
 «Անիկայ Վրխառու էջառուի մէջ նոր ըս-
 տեղծուած մըն է, և իրմէն հինը անցած
 ու հիմայ ամէն բան նոր եղած է» : ք
 Վրն՝. Ե. 17 : էջիւսէի թէ որ մկրտու-
 թիւնը վերստին ծնանելու միջոցն ըլլայ, աս
 ներդործութիւնները պէտք է որ կատար-
 ուին ամէն մկրտեալ անձանց վրայ, հոգ
 չէ անոնց ինչ սրտով մկրտուելին : Վան-
 ղի աս վարդապետութենէն կը հեռուի որ
 մէկը կրնայ մկրտուելու զալ անհաւատ և
 կեղծաւոր սրտով մը, բոլոր անմաքրութեամբ
 և չարութեամբ լեցուն. և իր մկրտուելը
 ղինքը անկեղծ հաւատացեալ մը պիտի ը-
 նէ, և իր սիրտը չար ցանկութիւններու
 հարատակութենէն պիտի ազատէ : Թէ որ
 մկրտութիւնը աս ներդործութիւնը չունի՝
 ուրեմն անիկայ նորէն ծնանելու միջոցը
 չէ. վասն զի Հոգին Սուրբ՝ ճշմարտութեան
 միջոցով աս բաները կրնէ, և ահա ասի-
 կայ է վերստին ծնունդը :

Բայց թէ որ աս վարդապետութեանս
 ջատագովները կուրանան իրենց վարդա-
 պետութեանը աս հեռուութիւնը և կրն-
 դունին թէ մկրտութեան եկողին հարկաւոր
 է հաւատացող և անկեղծ սիրտ մը ունենալ,
 անատենը կը հարցունեմք՝ թէ մարդուս ա-
 պականեալ սրտին մէջ ինտոր կրնայ ըլլալ
 առանկ փոփոխութիւն մը առանց սուրբ Հո-
 գին նորոգելուն : Աստի աս ըսելովնին չէ՞

որ կըձգեն ան իրենց վարդապետութիւնը
 թէ մկրտութիւնը վերստին ծննդեան միջոցն
 է, և չէ՞ որ կուգան աս նիւթիս վրայով
 մեր գաղափարին հետ կըհամաձայնին, ց՞
 թէ վերստին ծնունդը մէկ ներքին հոգևոր
 փոփոխութիւն մըն է՞ որն որ պարտի ունե-
 նալ մէկ մարդ մը իր մկրտութիւն առաջ,
 և թէ մկրտութիւնը միայն անոր դաւանու-
 թիւնը ու նշանն է: Այսու ամենայնիւ
 գուցէ մէկը համարձակի ըսել՝ թէ մկրտ-
 ուելու ատեն՝ նորէն կըծնանի մարդ, բայց
 ընդունուած շնորհքը չպահելով և մեղք
 գործելով կըկորսուի անիկայ: Այլ թէ անոր
 համար է որ մկրտուած անձը անկէ ետքը
 վերստին ծննդեան նշանները չցուցուներ
 իր վրայ: Բայց ես կըհարցունեմ, տղայ մը
 որ ծնաւ աշխարհիս մէջ, կընայ նորէն
 իր եկած տեղը դաւնալ, և առաջ ինչ էր
 նէ նորէն անանկ ըլլալ. թէ որ չէ նէ ինչ
 պէս կընայ շողիէն ծնած մարդ մը նորէն
 մարմինէ ծնած մէկու մը պէս ըլլալ: Արդեօք
 ան փոփոխութիւնը՞ որն որ շողին կընել-
 դործէ վերստին ծնածին վրայ, թեթև և
 ժամանակաւոր փոփոխութիւն մըն է: Զէ՞
 որ անիկայ բնութեան անանկ մէկ փոխուիլն
 է որ հաստատուն կըմնայ: Ասանկ կըվկային
 Ուրբե (Վիրքերը, «Վմէն ով որ Վստուծ-
 մէ ծնած է՝ մեղք չընէր. ինչու որ անոր
 սերմը իր մէջը սբ. աւ. ճ.»), և չկորսուիր.

ան անձը միշտ Մատուծմէ ծնած կըմնայ ,
 «և չկրնար մեղք դործել (գիտութեամբ և
 կամքով) : սրտածառն որ Մատուծմէ ծնած
 է” : Թ. Գ. 9 : Սէկը չկրնար այսօր Մա-
 տուծոյ որդին ըլլալ , ու վաղը Սատանա-
 յին . Հողին սուրբ մէկ մը որ բարեգոր-
 ծութեան կըսկըսի մարդու մը ներսը , ալ
 անիկայ մինչև կատարելութեան կըհասցու-
 նէ : Փ. Գ. 6 : Ինոնք որ Մատուծմէ ծը-
 նած են , «Մատուծոյ զօրութիւնովը պահ-
 ուած են հաւատքով ան փրկութեանը հա-
 մար” : Թ. Գ. 5 : «Ինոր սերմը” ց
 Մատուծոյ բնութիւնը որ ընդունեցին Սուրբ
 Հողիէն , «իրենց մէջը կըմնայ” :

Գ. Լ. ՈՒ Խ . Գ . :

Ինչպէս կըսուի զկայութեանց , որոնք վերստին ծնունդ-
 եան մկրտութեամբ չըլլալը կըցուցընեն :

Եւ զլուսին մէջ պիտի հաւաքեմք և
 համառօտ ներկայացընեմք բոլորան վկա-
 յութիւնները և փաստերը՝ որոնք կըցուցու-
 նեն թէ վերստին ծնունդը մկրտութիւնով
 չըլլար :

Ե. Սուրբ Գիրքին մէջ մէկ տեղ մը

բնաւ վկայութիւն չեմք գտներ թէ մկրտութիւնով վերստին ծնունդ կրլայ :

Ի . Ա՛յլ ընդ հակառակն Սուրբ Գիւրքը կրոյայտնէ թէ , չէ թէ մկրտութիւնը , հապա Մատուծոյ Խօսքն է միջոցը՝ որով վերստին ծնունդը կը կատարուի : « Այսն զի որովհետեւ Մատուծոյ իմաստութիւնը աշխարհ չճանչցաւ զՄատուած իմաստութիւնով , Մատուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները ապրեցունել » : Թ՛ՎԻԻԼ . Թ . 21 : « Հապա զիրքը ի՞նչ կըսէ . Խօսքը մօտ է քու բերնիդ մէջը , ե քու սրտիդ մէջն է , քի՛ հաւատքին խօսքը որ մենք կը քարոզեմք : Ինչու որ՝ եթէ քու բերնովդ Տէր Յիսուսը խոստովանիս , ու քու սրտիդ մէջը հաւատաս , որ Մատուած անիկայ մեռելներէն յարուց , պիտի փրկուուիս . (ինչու որ սրտով կը հաւատագ աղադարանալու , ու բերնով կը խոստովանիք փրկուելու) վասն զի Գիւրքը կըսէ . Մէնով որ անոր կը հաւատայ՝ պիտի չամչնայ : Ինչու որ տարբերութիւն չկայ Հրէային ու Հեթանոսին մէջը . վասն զի նոյն Տէրը է ամէնուն վրայ , բաւական ամէնուն որ կը կանչեն անոր : Ինչու որ սով որ Տէրոջը անունը կանչէ՝ պիտի փրկուի : Աւրեմն ի՞նչ պէս պիտի կանչեն անոր՝ որուն որ չհաւատացին . կամ ի՞նչպէս պիտի հաւատան անոր՝ որուն վրայով չստեցին . կամ ինտո՛ր

պիտի լսեն առանց մէկուն քարոզելուն .
 կամ ի՞նչպէս պիտի քարոզեն՝ թէ որ չխորը-
 կուին . . . : Ընանկ է նէ հաւատքը լսելէն
 է, ու լսելը Վրիստոսի խօսքէն՝: Լուկ. Ժ.
 8—14, 17: «Այարգիլէին հեթանոսներուն
 խօսելու՝ որ փրկուին»: Ի՞նչ . Թ. 16: «Ը-
 նոնք ճշմարտութեան սէրը չընդունեցին որ
 ապրին, ու աս պատճառովը պիտի խրկէ
 անոնց Ըստուած ուժով մոլորութիւն մը՝ որ
 ստութիւնի հաւատան . որ ամէնքն ալ դա-
 տապարտուին որոնք որ չհաւատացին ճշ-
 մարտութեան, հապա անօրէնութեան յօ-
 ժարեցան: Բայց մեզի պէտք է ամէն իժիր
 Ըստուծոյ գոհանալ ձեզի համար՝ Տէրոջը
 սիրելի եղբայրները . ինչու որ Ըստուած ա-
 ռաջուց մեզ ընտրեց փրկուելու Հոգիին
 սրբելովը՝ ու ճշմարտութեան հաւատքովը .
 որ անոր ձեզ կանչեց մեր աւետարանելովը՝
 մեր Տէր Յիսուս Վրիստոսի փառքը ստա-
 նալով փրկուելու»: Թ. Թ. 10—13: «Տէրոջը
 օրէնքը կատարեալ է՝ հոգին կը
 նորոգէ . Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ
 է, տգէտը իմաստուն կընէ: Տէրոջը կա-
 նոնները շիտակ են՝ սիրտերը կուրախացու-
 նեն . Տէրոջը պատուիրանքները պայծառ
 են, աչքերուն լոյս կուտան»: Առ. ԺԺ.
 7, 8: «Ալ ըսաւ անոնց . Իմ մայրս ու իմ
 եղբայրներս ասոնք են, որ Ըստուծոյ խօս-
 քը կը լսեն և կը կատարեն»: Առ. Ժ. 21:

Գ. Մկրտութիւնը յարմարութիւն կամ
 պատշաճողութիւն չունի մարդուս ներքը
 վերստին ծննդեան պէս փոփոխութիւն մը
 յաւաջ բերելու : Թուրով մարմինը լուս-
 լը ի՞նչպէս կրնայ հողին մաքրել : Ի՞նչ
 գօրութիւն ունի անիկայ սիրտը նորոգելու :
 Հաւանական կերեւնայ թէ Սուրբ Հոգին
 ասանկ միջոց մը ընտրէ սրտի փոփոխու-
 թեան գործը կատարելու համար : Ի՞նչպէս
 կրնամք ըսել (միայն թէ Սուրբ Գիրքը
 յայտնի ըսելու ըլլար , որն որ բնաւ ըսած
 չէ ,) թէ Սուրբ Հոգին նիւթական գոյու-
 թիւնով մը մարդուս աննիւթ հողիին վրայ
 փոփոխութիւն մը կրնէ : Բայց Բատուծայ
 խօսքը աս գործին կատարեալ յարմարու-
 թիւն մը ունի . բնական է որ մարդուս միտ-
 քը համազուելով շարժուի . ճշմարտութիւնը
 յարմարութիւն ունի մարդուս սիրտը շար-
 ժելու . և պատշաճաւոր է Սուրբ Հոգիին
 որ ճշմարտութեան միջոցովը ներգործէ
 սրտին , և փոխելով մարդուն յօժարութիւն
 ներք ունոր բնաւորութիւն մը տալով ու-
 նոր , զանիկայ երկնից յարմար ընէ :

Գ. Թէ որ մկրտութիւնը նորոգութիւն
 է կամ նորոգութեան պատճառը ու հար-
 կաւոր միջոցն է , ուրեմն կը հետեւի որ նո-
 բէն ծնածները մարդու կամքէն ծնած են ,
 և ան ալ շատ անգամ չար , աշխարհասէր ,
 գինով , հայհոյիչ , պուռնիկ , շնացող և ար-

ուազէտ մարդոց կամքէն, որ բոլորովին հակառակ է Սուրբ Գիրքին ան յայտնի վըկայութեանը որ կըսէ «Սրոնք ոչ... մարդու կամքէն, հասլա Մատուծմէ ծնած են» : (Յռւ. ա. 13 : Գարձեալ կըհետեւի որ երախաներուն նորոգուիլը կամ չնորոգուիլը՝ ծընողացը, բահանային, և կնքահայրներուն կամքէն կախում ունի . և որ չափահաս մարդ մը որչափ որ սրտով զղջայ, Վրիստոսի հաւատայ և Մատուծոյ հնազանդի ալ նէ, թէ որ բահանայ մը կամ ուրիշ մէկը կամք չունենայ զանիկայ մկրտելու, պիտի չկրնայ նորէն ծնանիլ և պիտի կորսուի : Բայց Սուրբ Գիրքը կըսէ թէ «հաւատա՛ Տր Յիսուս Վրիստոսի, ու պիտի փրկուիս» :

Եւ թէ որ միայն մկրտութիւնով կըլլայ վերստին ծնունդը, ուրեմն բնաւ չմկրտուած մէկը՝ Մեկտարանական հաւատք, սէր կամ հնազանդութիւն չկրնար ունենալ, քանզի Սուրբ Գիրքը կըսէ . «Վ՛մէն ով որ կըհաւատայ թէ Յիսուսը Վրիստոսն է, Մատուծմէ ծնած է» . բայց մկրտութիւնը նորէն ծնանելու միջոց համարողները կըսեն թէ «Բնաւ չմկրտուած մէկը Մատուծմէ ծնած չէ» : յւրեմն աս իրենց խօսքը վերի վկայութեանը հետ առնելով կըհետեւի թէ բնաւ չմկրտուած մէկը չհաւատար թէ Յիսուսը Վրիստոսն է : Գարձեալ Սուրբ Գիրքը կըսէ «Վ՛մէն ով որ կըսիրէ Մատուծմէ ծնած է» :

տուժմէ ծնած է” , բայց ասոնք կրսեն թէ «Բնաւ չմկրտուած մէկը Մտուծմէ ծնած չէ” : Աւրեմն բնաւ չմկրտուած մէկը չսիրեր : Աւ դարձեալ , Սուրբ Գիրքը կրսէ «Մէն ով որ արդարութիւն կը գործէ , անկէյ՝ (Մտուծմէ) ծնած է” . բայց ասոնք կրսեն թէ «Բնաւ չմկրտուած մէկը Մտուծմէ ծնած չէ” : Աւրեմն բնաւ չմկրտուած մէկը արդարութիւն չգործեր :

Բայց կուսնելիս իր մկրտութիւնն առաջ ասողար , բարեպաշտ և Մտուածաւիս” , մարդ մըն էր , անորմութիւններ կրնէր” , որոնք «Մտուծոյ առջևը ելան յիշուեցան” , ամէն իժիր աղօթք կրնէր” , և իր «աղօթքը բուեցաւ” , և ինքը «ընդունուեցաւ Մտուծմէ” : Տ՛ւ Գործ . Ժ . 2 , 3 , 22 , 31 , 35 :

Օ . Թէ որ մկրտութիւնը նորոգութեան միջոցն է , Աւետարանի պաշտօնեաները իրենց պաշտօնին առաջին գործը պարտին համարել մկրտութիւնը : Աւ իրաւ՝ Հըւսուովմէականները այնպէս կը համարին զանիկայ : Պապական քարոզիչներուն զրութեանց մէջ , որոնք Հաւատոյ Տարածութեան Հիշատակարանք * ըսուած ամսօրեայ տետրակներուն մէջ կը սպուին , միշտ այսպիսի յայտարարութիւններ կը գտնուին , սը՝ «Արկու հեթանոս երախաներ ծածուկ մը

* Annales de la Propagation de la Foi.

կըրտելու մխիթարութիւնն ալ վայելեցի ; որոնք քիչ ատենէն հոքը պահապան հրեշտակաց գունդերուն խառնուեցան” : (Յունուար . 1841 :) « Բանի մը օր է երջանկութիւն ունեցայ նորոգութեան սուրբ ջուրը տասնհինգ նորահաւատներու վրայ թափելու . . . Բրդէն աս կերպով յիշուենն աւելի նորոգեր եմ” : (Մեպտ . 1843 :) « Այդ հազար հեթանոս երեխաներ մկրտուեցինք ճիշտ իրենց մահուան կէտին” : (Մեպտ . 1843) « Աս տարի մեր պաշտօնակիցները Պանքօքի մէջ չորս հարիւրէն աւելի մահուան վտանգի մէջ եղող հեթանոս տղաքներ մկրտեցին . ծանրազին հունձ մը որ անշուշտ ուրախացոյց հրեշտակները , որչափ որ մեզ մխիթարեց . թէպէտև շատ աշխատութիւն էր մեզի դանոնք ժողովելը : Ի՞նչ որ Տարածութեան Հաւատոյ բարեպաշտ անդամները գիտնան ստիկայ , աներկբայ կը հաւատամ որ պիտի օրհնենն զՄատուած , ան պտուղներուն համար , որոնք որ իրենց ողորմութիւնները հեռաւոր երկիրներու մէջ յառաջ կը բերեն” : (Գոստ . 1841) : Հիմա ասանց բոլորովին հակառակն է Պօղոսին աս խօսքը , թէ՛ « Վոհութիւն իմ Մատուծոյս , որ ձեզմէ մէկը չմկրտեցի , միայն թէ Արիստոսը ու Վայիսը : Ինչու որ Վրիստոս զիս մկրտուելու ջնարկեց , հապա Մետարանը քա-

բողոքելու : : : Վրիստոս Յիսուսով ես
 ձեզ ծնայ Մեծատարանովը”, և ոչ թէ մը
 կըրտութիւնով : Կրնի . Կ . 14 , 17 : 7 .
 15 :

1 : Թէ որ նորոգութիւնը մկրտութիւ
 նով ըլլար, ուրեմն ամէն անոնք որ մկրտու
 ւած են պիտի փրկուէին . վասն զի ամէն
 անոնք որ Սուրբ Հոգիէն նորոգուած են կը
 փրկուին . «Նոր սերմը իրենց մէջը կը
 մնայ” : Ինոնք չէ թէ ունայ ըսածին պէս
 Մատուծոյ ժառանգ կըլլան , և ետքը նորէն
 ժառանգութիւնը ստանալէն կըզրկուին :
 Պետրոս կըսէ , « ()ըհնեալ է Մատուած
 ու մեր Տէր Յիսուս Վրիստոսին Հայրը .
 որ իր աւատ ողորմութիւնովը մեզ նո
 րէն ծնաւ ան կենդանի յոյսին համար՝
 Յիսուս Վրիստոսի մեռելներէն յարութիւն
 առնելովը , անեղծ ու անարատ և անթա
 ւամ ժառանգութեանը համար՝ որ երկին
 քը ձեզի պահուած է . որ Մատուծոյ զօրու
 թիւնովը պահուած էք հաւատքով ան փրկ
 կութեանը համար՝ որ պատրաստուած է
 ետքի ժամանակները յայտնուելու” : (Կ .
 Պէ . Կ . 3—5 :) Մատուած իր զօրութեամբը
 կըպահէ զանոնք ան ժառանգութեանը հա
 մար , և ան ժառանգութիւնն ալ անոնց հա
 մար կըպահէ : Բայց մէկ բանիները կան
 որոնք նորէն ծնած ըլլալ կերևան ու ետքը
 ուրանալով իրենց հաւատքը մեղքին մէջ կը

մեռնին ու կրկորսուին : Աւրեմն ի՞նչ ք-
սեմք անոնց համար . պէտք է Յովհաննէս ա-
ւարեալին ըսածը ըսել , «Մեզմէ ելան ա-
նոնք , բայց մեզմէ չէին . ինչու որ թէ
մեզմէ ըլլային՝ ուրեմն մեր քովը կը մնային .
հասոյա մեզմէ ելան որ յայտնի ըլլան՝ թէ
անոնք ամէնը մեզմէ չէին” : ԹՅՅԻՆ . ք . 19 :
Կրնան ըլլալ շատ կեղծաւորներ և շատ ալ
ինքզինքնին խաբողներ , որոնք իբրև թէ
նոր ծնածի պէս կերևան , բայց երբոր
կելեն” և ինքզինքնին միզքի կուտան , իրենց
ճշմարտապէս ինչ ըլլալը յայտնի կը ցու-
ցունեն՝ որն որ առաջուց ծածկուած էր :
Սակայն բնաւ մէկը որ ճշմարտապէս նորէն
ծնած էր , չկորսուեցաւ :

Բայց ասոր հակառակ գիտեմք թէ շատ
մկրտուածներ կորսուեցան : Միմոն մոզը
մկրտուեցաւ , բայց Պետրոս քիչ մը ետքը
ըսաւ անոր թէ մաղձի լեղութեան՝ և անի-
րաւութեան կապերու մէջ է , և փրկու-
թեան բանին մէջ մասն ու բաժին չունի .
(Պ.տժ . ք . 20—23 .) Ինանիս և Սաիիրա
(Պ.տժ . Է . 1—10 .) Հիմէնոս Իդէքսանդրոս
և Ղեմաս (ԹՅՅԻՆ . Թ . 20 : քՅՅԻՆ . ք . 10 .) ե-
կեղեցւոյ անդամներն էին , և անտարակոյս
մկրտուած , ու տակաւին ամէնն ալ ինկան
և կը հաւտացուի թէ կորսուեցան : Սատ-
թէոսի մէջ (Է . 22 , 23) կըսէ Տէրն մեր ,
« Եստերը ան օրը ինձի պիտի ըսեն , Ա՛վ

Տէր Տէր՝ չէ՞ որ քու անունովը մարգարէ-
 ութիւն ըրինք, ու քու անունովը դէւեր հա-
 նեցինք, ու քու անունովը շատ հրաշքներ
 ըրինք: Եւ անատենը անոնց պիտի ըսեմ,
 Ես բնաւ ձեզ չէի ճանչնար. մէկ դի դա-
 ցէք քովէս ամէնքդ՝ որ անօրէնութիւն կը
 գործէիք”: Ես տեղի խօսուած անձինքը՝ ե-
 կեղեցւոյ անդամներ են ու նաև պաշտօն-
 եաները, և հետևաբար մկրտուած, բայց
 Քրիստոս պիտի ըսէ անոնց, «Ես բնաւ
 ձեզ չէի ճանչնար»: Սակայն Քրիստոս ա-
 մէն մարդ կը ճանչնայ, ուրեմն աս ըսուած-
 քը կընշանակէ՝ թէ «Ես բնաւ ձեզ իբրև
 քրիստոնեայ չէի ճանչնար, քի՞ դուք թէ-
 պէտև մկրտուած էիք, բայց վերստին ծը-
 նընդեամբ իմ աշակերտներս չէիք, մէկդի
 գացէք քովէս ամէնքդ՝ որ անօրէնութիւն կը
 գործէիք”:

Եւ կը տեսնեմք հանապազ բուն մեր աշ-
 քովի որ մկրտութիւնը վերստին ծնունդ
 չարտադրեր: Ա՛րբան անձինք կը ճանչնամք
 մկրտուած, որոնք բնաւ վերստին ծնածի
 մը նշան չեն ցուցուներ. այլ աշխար-
 հասէր, հպարտ, նախանձոտ, անպար-
 կեշտ, խաբէբայ, պիղծ, անմաշուր և ամէն
 կերպ անօրէնութիւն գործող մարդիկներ
 են: Եւ մանապէս Վ օլթէու՝ Վ օլնէյ՝ և հա-
 զարաւոր անհաւատներ մկրտուած էին. որ-
 չափ բազմաթիւ տղաքներ ալ մկրտուած

են , ու իրենց ետքի վարուցը մէջ կըտես-
նուին որ չմկըտուածներէն ամենեւին մէկ
կերպով մը տարբերութիւն չունին :

Թ . Նորոգութիւնը մկըտութեամբ ըլ-
լալ հաստատողները , բոլորովին կըկործա-
նեն աւետարանական ան մեծ սկզբունքը
թէ Փրկութիւնը միայն հաւատքով է : կը-
սեն թէ՛

“ Կրտութիւնը սկզբնական մեղքէ ազա-
տութիւն է , ներգործական մեղքէ ազատու-
թիւն , Մատուց որդէգրութիւն , Վրիստոսի
անգամ ըլլալ , Վրիստոս իր վրան հաղածի պէս
ըլլալով անոր հետ միանալ , և ճշմարտապէս և
խակական վերստին ծնունդ , և յաւիտենական
կենաց պատճառ” : “ Եւ մարդ մը սրտիւ Վը-
րիստոսի հաւատայ , և աւետարանական պատ-
ուիրանքները ամենն ալ պահէ , մինչև որ մը-
կըրտութեամբ եկեղեցւոյ մէջ մանելով Մատու-
ցոյ ժառանգ , և Վրիստոսի ժառանգակից չըլ-
լայ նէ , Վրիստոսի արեամբը մեզի համար ստա-
ցուած յաւիտենական փառացը չկրնար արժանի
ըլլալ , ո՛չ անոր հաւատքը խեր կրնէ , և ո՛չ ա-
ւետարանի պատուիրանացը համեմատ գործ գոր-
ծելը” :

Նմանապէս կըսեն թէ՛

“ Եւ իհ հաւատքով հոգին կըմիանայ ընդ Մատ-
ուցոյ . բայց քանի որ մարմինը Մատուցոյ տա-
ճար , և Վրիստոսի անգամ չէ , հոգին՝ Մատու-
ցոյ հետ չկրնար միանալ . և մարմինը Վրիստո-
սի անգամ՝ մկըտութեամբ կը ըլլայ” :

Նաև աս ալ կըխոստովանին , թէ՛

“ Կըրտեալ մարդը միայն մկըտութեան զօ-

թուժեամբ Մատուածային փառացը չհասնիր, թէ
 և նոյն փառացը օրինաւոր ժառանգ է. բայց ժա-
 ռանգութեանը հասնելու համար քրիստոնէին
 ապսպրուած գործքերը պէտք է ընել” :

Աս խօսքերուն վրայ կը հարցունենմք .

1. Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ աստուածային
 արդար կառավարութեան տակը տարակոյս
 մը ըլլայ՝ թէ օրինաւոր ժառանգը կը հասնի՞
 արդեօք իր ժառանգութեանը : Մի՞թէ Մ.ս.
 տուած ժառանգութիւն պիտի չտայ անոնց
 որ ինքը օրինաւոր ժառանգ ըլլալու ընտ-
 րեց :

2. Ի՞նչպէս կրնայ մկրտութիւնը կոչ-
 ուիլ “Սկզբնական մեղքէ ազատութիւն ,
 ներգործական մեղքէ ազատութիւն , Մատու-
 ծոյ որդէզրութիւն , Վ.քրիստոսի անդամ ըլ-
 լալ , ճշմարտապէս և իսկական վերստին ծը-
 նունդ , և յաւիտենական կենաց պատճառ” ,
 ու տակաւին ըսուի , թէ “Սկրտեալ մարդը
 միայն մկրտութեան զօրութեամբ Մատու-
 ծային փառացը չհասնիր , հապա պէտք է որ
 քրիստոնէին ապսպրուած գործքերը ընէ” :
 Մենք ալ կրխոստովանիմք թէ ան գործքերը
 հարկաւոր են : Բայց աս է խնդիրը . թէ որ
 մկրտութիւնը ան է ինչ որ ստորագրուած
 է թէ է , պէտք չէ՞ ուրե՛ն որ անշուշտ և
 հարկաւ մկրտուած անձը մկրտութեան զ-
 րութիւնովը բարեգործ ըլլայ : Իհա ճշմար-
 տութեան միջոցով վերստին ծնածը միշտ ա-
 փոփոխութեան զօրութիւնովը բարեգործ

կըլլայ : Նորէն ծնած մարդը՝ բարեգործութիւն կրնէ , ինչու որ նորէն ծնած է : Թէ որ Սկրտութիւնը վերստին ծնունդ է , պէտք չէ՞ որ մկրտուած մարդը բարեգործութիւն ընէ վասն զի մկրտեալ է . և հետեւաբար չէ՞ որ մկրտուելուն պէս իր վերջապէս փրկուելը ստոյգ կըլլայ :

3 . Թէ որ հոգին միաւորուած է Մատուցոյ հետ « Ղոկ հաւատքով » , ի՞նչպէս կրնայ ըսուել թէ « Հաւատք ունեցողը քանի որ մկրտուած չէ Մատուցոյ հետ չկրնար միանալ » : Թէ որ հաւատքը մարդը Մատուցոյ հետ կըմիացընէ , ուրեմն ան որ մկրտուելէն առաջ կըհաւատայ՝ արդէն միացած է , և միութեանը համար մկրտութեան չկարօտիր : Պիտի ըսուի՞ ուրեմն՝ թէ Հաւատքը մկրտութեամբ կուգայ . անանկ է նէ կըհակառակիս դուն Սուրբ Վրբին որ կըսէ , թէ՛ « Հաւատքը լսելէն է , ու լսելը Մատուցոյ խօսքէն » . և կըպահանջէ որ միայն հաւատացողը մկրտուի . ինտոր որ կըկարդամք ներքինիին պատմութեանը մէջ , « Մաւնեքքինին՝ Մհա ջուր , ալ ի՞նչ բան իս կարգիլէ մկրտուելէն . և ան ալ ըսաւ անոր Թէ որ քու ըսլոր սրտովդ կըհաւատաս նէ՛ կարելի է » : Վարձ . ը . 37 :

Պիտի ըսե՞ս թէ « Հոգին հաւատքով կըմիանայ , քայց մկրտութիւնը՝ մարմինը . Վրխատաի անդամ ընելու համար հարկաւոր

է” : Ըստ ըսածդ անանկ բան մըն է , որ ամենեւին վկայութիւն մը չունիս ասոր Սուրբ Կիրքէն . ո՛ր գրուած կայ թէ հոգին այսինչ կերպով կըմիանայ և մարմինը այն ինչ կերպով :

Գարձեալ թէ որ մկրտութեամբ մարդը շոգւոյն սրբոյ տաճար կըլլայ , ի՞նչպէս իր հոգին մկրտուելէն առաջ հաւատքով Ըստուծոյ հետ կըմիանայ : Մի՞թէ իր հոգին միացած է Ըստուծոյ հետ , և ինքը զեռսուրբ շոգւոյն տաճար եղած չէ՞ : Ըսկէ զտա թէ որ հոգին կըմիանայ Ըստուծոյ հետ լոկ հաւատքով , և մարմինը Վրիստոսի անդամ կըլլայ միայն մկրտութեամբ , ուրեմն երբոր մէկ մարդ մը իր մկրտուելէն առաջ կըհաւատայ , իր հոգին Ըստուծոյ՝ քի Վրիստոսի հետ կըմիանայ , ու նոյն ատենը իր մարմինը անդամ չէ Վրիստոսի , հապա սատանայի : Ի՞նչ որ նոյն վիճակին մէջ մեռնի , քի հաւատալէն ետքը ու մկրտուելէն առաջ ի՞նչ պիտի ըլլայ ան մարդուն . իր հոգին միացած է Վրիստոսի հետ հաւատքով և պիտի փրկուի , բայց մարմինը մկրտուած չըլլալուն համար Սատանային անդամն է : Աստի յարութեան օրը ո՛ր պիտի երթայ ատ մարմինը : Արկինքը չկրնար երթալ , քանզի Վրիստոսի անդամ չէ . բայց հոգին երկինքն է , վասն զի հաւատքով միացած է ան՝ Վրիստոսի հետ : Աւրեմն ո՛ր պիտի

երթայ մարմինը . միթէ հողին առանց մարմինի՞ մնալու է :

4 . Թէ որ Վկրտութիւնը « ճշմարտապէս և իսկական վերստին ծնունդ է , և յաւիտենական կենաց պատճառ » , և՛ և՛ ի՞նչպէս կրնամք ըսել ' թէ « Վէկ մարդ մը սրտիւ Վրիստոսի հաւատայ , և աւետարանական պատուիրանքները ամէնն ալ պահէ , մինչև որ մկրտութեամբ եկեղեցւոյ մէջ մտնելով Մատուծոյ ժառանգ , և Վրիստոսի ժառանգակից չըլլայ նէ՛ Վրիստոսի արեամբը մեզի համար ստացուած յաւիտենական փառացը չկրնար արժանի ըլլալ » : Արնայ մէկ մարդ մը մկրտուելէն առաջ՝ սրտիւ Վրիստոսի հաւատալ , և աւետարանական պատուիրանքները ամէնն ալ պահել . ուրեմն մկրտութիւնը վերստին ծնունդ չէ , վասն զի ան՝ դեռ չմկրտուած , Վրիստոսի հաւատացողը և պատուիրանքները պահողը վերստին ծնեալ է : Իայց թէ որ մկրտութիւնն է վերստին ծնունդ և՛ , ինտո՞ր կրնայ մարդ մը աս բաները ընել մկրտուելէն առաջ , քի իր նորէն ծնանելէն առաջ , մեղքէ ազատելէն առաջ , մինչդեռ ինքը տակաւին « Վարմինէ » ծնած է , որ « Վարմինին ուզածը կընէ , և ո՛չ մէկն թէ չողիին » : Գարձեալ թէ որ չողին կրմիանայ Մատուծոյ հետ լոկ հաւատքով , ի՞նչպէս կրնայ ըսուիլ թէ անոր հաւատքը խեր չընէր իրեն . արդեօք

Ըստուծոյ հետ միացունող բանը խեր չընե՞ր անոր :

Բայց այլ ևս չերկնցունեմք մեր խօսքը այսպիսի մոլորութիւններու և հակասութիւններու վրայ, որոնց մէջ կիյնան միշտ աս վարդապետութեան ջատագովները : Հասկացունեմք միայն թէ որչափ հակառակ է Սուրբ Գրոց մէջ յայտնուած փրկութեան պայմաններուն, աս իրենց կարծիքը : Վրանդի կրտսեմ թէ առանց մկրտութեան՝ Վրիստոսի հետ միանալ չըլլար. ոչ ալ մեղքէ ազատութիւն և ոչ ալ փրկութիւն, թէ՛ «Սէ հաւատքը խեր կրնէ, և ոչ աւետարանի պատուիրանացը համեմատ գործ գործելը» : Արդ հաւատացեալները որ Վրիստոսի պատուէրները կրպահեն, անշուշտ պիտի մկրտուին թէ որ պատեհութիւն ունենան, վասն զի մկրտութիւնը ան պատուէրներէն մէկն է : Բայց ով որ կրնայ մկրտուիլ ու չմկրտուի՝ դիմնալով թէ Վրիստոսի պատուէրն է ան, անիկայ կրցուցրնէ թէ չհաւատար և կամք չունի հնազանդելու : Սակայն դիցուք թէ մէկը հեթանոսաց մէջ դամուկելով՝ ուր որ անկարելի է մկրտուիլ, կը հաւատայ Վրիստոսի, և աւետարանին բոլոր ուրիշ պատուէրները կրպահէ, թէ որ ասանկ մեռնի նէ արդեօք պիտի չփրկուի՞ ան մարդը : Աս վարդապետութեան ջատագովները

կրսեն՝ թէ « Չէ՛ , ոչ անոր հաւատքը խել
կրնէ՛ , և ոչ աւետարանի պատուիրանացը
համեմատ զորժ զորժելը՛ » : Բայց նայինք
Սուրբ Գիւրքը ի՞նչ կրսէ . « Հաւատո՛ւ Տէր
Յիսուս Վրիստոսի (միայն Հաւատո՛ւ) ու
պիտի փրկուիս . (Գ. Եթ. ԺԷ. 31.) նաև « Ըն
որ հաւատայ ու մկրտուի՛ պիտի փրկուի ,
և ան որ չհաւատայ՝ պիտի դատասարտուի՛ » :
Մաթ. ԺԷ. 16 : Ինչո՞ւ չըսաւ փրկիչն մեր ,
Ըն որ չմկրտուի՛ր՝ պիտի դատասարտուի :
Պատճառը յայտնի է . քանզի մկրտութիւ
նը հարկաւոր չէ փրկութեան , ինտոր որ հա
ւատքը հարկաւոր է : Չափահաս մէկը՝ կա
րող հաւատալու , չկրնար օւռանց հաւատքի
փրկուիլ . բայց կարելի է որ մէկը հաւա
տայ , ու չկենայ սկրտուիլ , և ասանկ
մէկը պիտի փրկուի : Աւտի երբոր Սուրբ
Գիւրքը յաւաջ կրբերէ փրկութեան հար
կաւոր պայմանը , միշտ հաւատք (կամ հա
ւատոյ պտուղին մէկը) կը յիշէ , չէ թէ մկրտ
ութիւնը . Գ. Եթ. ԺԷ. 31 : « Եւ ինտոր Մովսէս
անսպատին մէջ օձը բարձրըցուց , անանկ
ալ պէտք է որ՝ Արդին մարդոյ բարձրնայ :
Ար ամէն ով որ անոր հաւատայ՝ (չէ՛ թէ
մկրտուի) չկորսուի , հապա յաւիտենական
կեանքը ընդունի՛ » : Յ. Գ. Գ. 14, 15 : « Եւ
նորհրով փրկուած էք դուք հաւատքով » (չէ

[Թէ մկրտուածիւնով] : Լ. Գ. Բ. Խ. 8 : «Մենք
 բոլոր մարգարէները վկայ ենք [Թէ ամէն իւր
 բն հաւատացողները (չէ [Թէ մկրտուողնե
 րը) իր անունովը մեզայ [Թողուածիւն կառ
 նեն» : Վ. Գ. Բ. Ժ. 43 : «Այլ ինքը ըսաւ կնիկանը .
 քու հաւատքդ քեզ ազատեց . գնահ խաղաղու
 [Թեամբ» . (Վ. Գ. Բ. Ժ. 50.) ինչո՞ւ երբէք չըսաւ
 Տէրն մեր մկրտուածիւնը քեզ ազատեց .
 գնահ խաղաղուածեամբ : «Այլ ըսաւ Յիսուսին .
 Տէր՛ իս միտքդ բեր , երբոր քու [Թաղաւո
 րուածիւնովդ կուզաս : Յիսուս ալ ըսաւ
 անոր . Իրաւ կըսեմ քեզի , Վու՛ն այսօր իմ
 հետս դրսխտին մէջը պիտի ըլլաս» . (Վ. Գ. Բ. Ժ.
 Ի. 42.) ինչո՞ւ չըսաւ իրեն [Թէ՛ Վ. Գ. Բ. հա
 ւատքդ խեր չընել քեզի և պիտի կորսուխ
 որովհետև մկրտուած չես : «()րէնքին
 վախճանը Վ. Գ. Բ. Խ. Ե՛ս ամէն հաւատացող
 ներուն (չէ [Թէ մկրտուողներուն) արդա
 րուածեանը համար» : Լ. Գ. Բ. Ժ. 4 . Տ. Գ. Բ. Խ.
 Լ. Գ. Բ. Ժ. 21—26 : Յ. Գ. Բ. Ժ. 35, 40 : Փ. Գ. Բ. Ժ.
 Ժ. 9 , և այլն : Պօղոս կրկին և կրկին կը
 յայտնէ [Թէ մենք արդարացած եմք միայն
 հաւատքով : Լ. Գ. Բ. Ժ. 27, 30 : Ժ. 2—5, 11 ,
 16, 24 : Ե. 1 : Ժ. 9, 10, 11 : Վ. Գ. Բ. Խ. 16, 17 ,
 20 : Ըրդ արդարուածիւնը ինչո՞ւ համար
 միայն հաւատքով է . անոր համար որ անի
 կայ «Շնորհքով է , Յիսուս Վ. Գ. Բ. Խ. Ե՛ս
 դած փրկուածիւնովը» . (Լ. Գ. Բ. Ժ. 24.) անոր
 համար որ անիկայ Վ. Գ. Բ. Խ. Ե՛ս արդարու

Թիւնովն է, որ մեզի ձրի տրուած է, և հաւատքը միջոցն է՝ որով կը բռնենք ան Մ. Բ. դարու Թիւնը և կը նդունիմք զանիկայ: Մ. Բ. դարանայը բոլորովին շնորհքով է, և ո՛չ անոր մէկ մասը՝ գործքով է, Թէ չէ՞ պալծենալու տեղի կունենայինք: «Սէրէմն ո՛ւր մնաց պարծենալը, խափանեցաւ. ո՛ր օրէնքէն, գործքերուն օրէնքէն մի, չէ՛. հապա հաւատքի օրէնքէն: Ինչու որ կըսեալենք՝ որ մարդը հաւատքով կարդարանայ առանց օրէնքին գործքերուն»: Լուս. 7, 27, 28:

«Մեզ արդարացընողը Վ. Բիստոսի արիւնն է», բայց ուրիշ աւետարան կը լլայ ըսելը Թէ՞

«Մ. Բ. մեր բարի գործքերը Վ. Բիստոսի արդեանցը հետ միացընելով՝ այն արդարու Թիւնը մերը կընենք»: «Մեր գործքը առանց Վ. Բիստոսի արդեանցը հետ միանալու ոչինչ են, և մինչև որ մկրտութեամբ մենք Վ. Բիստոսի հետ չմիանանք նէ՞ մեր բարի գործքերն ալ Վ. Բիստոսի գործոցը հետ չեն միանար»:

Եւ ահա ասանկ աւետարան քալողողին համար է որ «նզովեալ ըլլայ» կըսէ Պօղոս, Թէ և երկինքէն իջած հրեշտակ մըն ալ ըլլայ նէ ան. (Կաղ. ա. 8, 9:) վս զի ո՛ւր գրուած է սուրբ Վ. Բիւն մէջ, Թէ մեր գործքերը Վ. Բիստոսինին հետ միանալու են՝ որ մենք արդարանանք, և Թէ անոնք Վ. Բիստոսի արդեանցը հետ կը միանան մեր մկրտուելովը: Ես ասանկ ըսելը՝ մեր բոլորովին շնորհքով արդա-

րանալը՝ Վրիստոսի արեամբը և արդարու-
 թեամբը՝ ուրանալ է, և մեր արդարանալը
 ըստ մասին բուն մեր գործքերովը ըլլալ
 հաստատել է. իմ կէս մը Վրիստոս, ու կէս
 մընալ բուն մենք էմք մեր փրկիչը, և ասանկ
 մեր փրկութեան փառքին կէսը մեզի կրվե-
 րաբերի: Բայց չէ՞ մեր տկար գործքերը՝
 որոնց ամենէն աղէկը մեղքով աւրուած է
 և թողութեան կրկարօտի, մեր արդարա-
 նալուն օգնելու բան մը չեն կրնար ընել:
 Մենք կամ բոլորովին Վրիստոսով կար-
 դարանամք հաւատքով կամ բնաւ չեմք ար-
 դարանար. ճշմարիտ քրիստոնեան նախ կը
 հաւատայ՝ ու կարդարանայ, ու ետքը բարե-
 գործութիւն կընէ, իբրև բնական պտուղ-
 ները հաւատոյ, և ան նորոգուած բնու-
 թեանը՝ որն որ վերատին ծնելութեան ա-
 տենը ստացաւ: Արսարսամի ան՝ արդարա-
 նալու համար իր պիղծ բարեգործութիւնը
 օրհնեալ Փրկչին արդարութեանը հետ
 միացընելու: Կը փրկուելուն բոլոր փառքը
 և միանգամայն բոլոր իր բարեգործութիւն-
 ները Վրիստոսով եղած Կստուծոյ անհուն
 շնորհացը կուտայ: Կնքը դիտէ, թէ «Վռանց
 սրբութեան մէկը չկրնար տեսնել Տէրը:
 Եւր. ԺԷ. 14: Գիտէ թէ առանց բարեգոր-
 ծութեանց, կամ առանց պատրաստ սրտի
 մը զանոնք ընելու, փրկութիւն չկայ. բայց
 անոնցմով արդարանալու մտածմունքէն կը
 դարչի:

Վերստինն ծնած ըլլալու մի միայն վկայութիւնը, սուրբ կեանք մը վարելն է: Փրկուելու հաւատք ունենալուն ալ մի միայն վկայութիւնը ան է որ սիրտը ան հաւատքովը կրմաքրուի, (Գործ. Ժե. 9) ու աւետարանական հնազանդութիւն կը հետեւի: Բայց համար՝ ինչպէս որ հաւատացեալներուն՝ անանկ ալ ապաշխարողներուն փրկութիւն խոստացուած է, ինչու որ ապաշխարութիւնը կը գտնեմք միշտ հաւատոյ հետ միացած. և հաւատքով Վրիստոսի հետ կը միաւորիմք, դատաւարտութենէ կազատիմք, և յաւիտենական կենաց ժառանգորդ կը ըլլամք:

Եւ այսպէս յայտնի կը տեսնեմք թէ ինչո՞ւ երբեմն Սուրբ Գիրքը աս եղանակով կը խօսի մկրտութեան վրայով, օր՝ «Գուք ամէնքդ որ Վրիստոսով մկրտուեցաք, Վրիստոսը վրանիդ հազաք» (Գաղ. Գ. 27) ապիկայ է պատճառը, որ մկրտութիւնը նշան կնիք՝ և դաւանութիւն է հաւատոյ: Պողոս ըսել չուզեր հոստեղ թէ մկրտութիւնով իսկապէս Վրիստոս վրանին հազան, և Բստուծոյ զաւակները եղան, քանզի աս խօսքին ճիշտ առջի համարին մէջ կըսէր՝ «Ամէնքդ ալ Բստուծոյ որդիք էք՝ Յիսուս Վրիստոսի շնորհով» (Հռոմ. 26) բայց որովհետեւ Գաղատացւոց հաւատքին դաւանութիւնը իրենց մկրտութիւնն էր, անոր

համար կրսէ անոնց . «Վուք որ Վրիստոսով մկրտուեցաք , Վրիստոսը վրանիդ հագաք” :

Ըստր պէս ուրիշ օրինակներ ալ կան . ցր՝ Հռովմայեցւոց . զգլուխ . 3 և 4 համարներուն մէջ Պօղոս կրսէ . «Չէ՞ք մի գիտէր , որ մենք որ Յիսուս Վրիստոսով մկրտուեցանք , անոր մահովը մկրտուեցանք : Ինոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար . որ ինչպէս Վրիստոս շօրը փառքովը յարութիւն առաւ մեռելներէն , անանկ մենք ալ կենաց նորոգութեան մէջ պարտինք” : Ինոնք որ մկրտուեցան՝ Վի մահովը մկրտուեցան , և մկրտութիւնով մահուան համար անոր հետ թաղուեցան , ցր միացան Վի հետ իր մահովը , որ կարենան ան մահուան բարութիւններուն ժառանգորդ ըլլալ . որ ինչպէս որ Վրիստոս յարութիւն առաւ մեռելներէն , անանկ ալ անոնք կենաց նորոգութեան մէջ պարտին : Իայց Պօղոս՝ լոկ մկրտութեան արարողութեամբը աս ամէնը եղաւ կուզեր ըսել , թէ ան հաւատքովը՝ որուն նշանը և դաւանութիւնը մկրտութիւնն է . ինքը կիմացընէ մեզի իր միտքը , Կող . ք . 12 համարին մէջ , ըսելով՝ « թաղուելով անոր հետը մկրտութիւնով , որ անով ալ իր հետը յարութիւն առիք Բստուծոյ զօրութեանը հաւատալով” : Ինտոր որ ըսաւ Հռովմայեցւոց , նոյնը կրսէ Կողո-

սացւոյ, Գուք թաղուեցաք ու յարութիւն
առիք Վրիստոսի հետ մկրտութեամբ, բայց
մի խորհիք թէ անիկայ լոկ մկրտութեան ա-
րարողութիւնովն էր, այլ Աստուծոյ զօրու-
թեանը հաւատալովն էր՝ որուն նշանը և դա-
ւանութիւնն է մկրտութիւնը . և ան ձեռ-
դաւանութեամբը ու խոստումովը կապուած
էք Վրիստոսինը ըլլալու, դէպի մեղքը մեռ-
նելու ինտոր որ Վրիստոս մեղքին համար
մեռաւ, և կենաց նորոգութեան մէջ պըտը-
տելու : Վասն ուրիշ տեղ կըսէ անոնց
«Թէ ազատ են մեղքէ», «մեղաց ծառայ
չեն», հապա «արդարութեան ծառաներ» ե-
ղած են . (Հով. 7, 17, 18, 22.) Բայց ո-
րովհետեւ շատ մկրտուած մարդիկ, մեղաց
ծառաներ են և ոչ արդարութեան, և ամէն
կերպ չարութիւնը կը գործեն, ուրեմն Ա-
ռաքեալին ըսած մկրտութիւնը՝ չէ թէ լոկ
արարողութիւն մըն է, այլ Վրիստոսի
վրայ եղած ճշմարիտ և անկեղծ հաւատոյ
դաւանութիւնը, և ճիշտ աս հաւատքն է
անոր ըսածը՝ որ Վրիստոսի մահուանը հետ
կրմիացունէ, և կառաջնորդէ կենաց սըր-
բութեան և փրկութեան :

Ժ. Վերջապէս նորոգութիւնը մկրտու-
թեամբ չկրնար ըլլալ, վասն զի ամէն մը-
կրտողներէն (բաց ՚ի պղտիկ տղաքներէն
որոնց համար ետքը պիտի խօսինք) կը պա-
հանջուի որ նախ վերստին ծնանին, ու ետ-

քը մկրտուին . քանզի հաւատքը հարկաւոր պայման է մկրտութեան . ինտոր որ կըսուի , « Ըն որ կըհաւատայ ու կըմկրտուի » . Մատթ. 16 : Փիլիպպոսի և ներքինիին պատմութիւնը կըցուցընէ աս բանը . « Արբոր իրենց ճամբան կերթային ջուրի մը քով եկան , ու ըսաւ ներքինին . Ըհա ջուր , ալ ի՞նչ բան զիս կարգիլէ մկրտուելէն . և ան ըսաւ անոր . Թէ որ քու բոլոր սրտովդ կըհաւատաս նէ , կարելի է . Ընիկայ պատասխան տուաւ և ըսաւ . կըհաւատամ որ Հիսուս Վրիստոսը Արդի Ըստուծոյ է » : Մատթ. ք. 36, 37 : Փիլիպպոս յայտնի ըսաւ ներքինիին թէ որ ճշմարիտ հաւատք չունի , հաւատք ՚ի սրտէ իրաւունք չունի մկրտուելու : « Կերքինին խոստովանեցաւ թէ ունի ան հաւատքը , ու ան ատենը Փիլիպպոս մկրտեց զանիկայ : Բայց ասա ան մարդը՝ որ ասանկ կըհաւատայ , Ըստուծմէ ծնած է : Թ. 1 : Աստի նոր ծնունդը մկրտութեամբ չէ , այլ պէտք է որ մկրտութենէն առաջ ըլլայ անիկայ :

Պետրոսի հարցումը կուռնէլիոսի ու անոր բարեկամներուն վրայով , նոյն բանը կը հաստատէ . « Ըլ սվ կընայ ջուրը արգիլել որ ասոնք չմկրտուին , որոնք չողին Աուրբն ալ ընդունեցին մեզի պէս » : Ընդունք ընդուներ էին Աք չողին , և վերստին ծնած էին չողիէն , ուստի և կընային մկրտուել իսկ

Թէ որ Սուրբ Հոգին ընդունած չըլային, իւրաւունք պիտի չունենային մկրտուելու :
Վարձ . 7 . 47 : Ժա . 15 , 16 , 17 :

Պօղոս առաքեալ՝ փիլիպեցի բանտապետը՝ ի իգիա՝ Սիմոն Սող՝ (Վարձ . ԺԷ . 14, 15, 31—34 : Ը . 12, 13 .) և ան ամէնը որոնց մը կըրտուծիւնը յիշուած է, նախ հաւատացին, և իրենց հաւատալը խոստովանեցան, քի նորէն ծնանիլը, ու ետքը մը կըրտուեցան :

Եկեղեցւոյ հին ատենները՝ ինտոր որ կը պատմէ Տերտուղիանոս, որ երկրորդ դարուն ծաղկեցաւ, եկեղեցւոյ պաշտօնեան կը հարցունէր մկրտուելու նորընծային . «Արհրաժարի՞ս Սատանայէն, և կըհաւատա՞ս Վ. Ի» : Աւ նորընծան կըստատասխանէր, «Արհրաժարիմ, կըհաւատամ» : Տերտուղիանոս կըկոչէ ասիկայ՝ «Սթօն. իօնէ՛ս Սալուտի»,* քի «Խոստումն փրկութեան» . և կըսէ Թէ՛ «Հոգին կընուիրուի Ըստուծոյ չէ Թէ լուացուելով, հապա պատասխան տալով» : Յայանի է որ ո՛չ մէկը կրնայ ճշմարտութեամբ խոստովանիլ իր Սատանայէն հրաժարիլը և Վ. թիստոսի հաւատալը, եթէ ո՛չ ան՝ որ վերստին ծնեալ է, ուստի կերեւայ Թէ քրիստոնէութեան առջի դարերուն կըստատասխանէր որ չափահաս անձ մը նախ վերստին ծնանէր ու ետքը մկրտուէր ի

* Sponsionem Salutis

նշան կամ 'ի դաւանութիւն իր վերստին
 ծնանելուն, ոչ թէ կըմկրտուէր որ անով
 վերստին ծնունդը ստանայ :

Գ. Լ. ՈՒ Խ. Ե. :

Լ. Սկրտութիւնը կըմաքէ՞ սկզբնական մեղքը : Խ. Ի՞նչ
 է Սկրտութիւնը, և ինչ՞ է կըմկրտումք : Գ. Սկրտութիւնը
 ի՞նչ մտօք հարկաւոր է փրկութեան :

Լ. Սկրտութիւնը կըմաքէ՞ սկզբնական
 մեղքը :

Անոնք՝ որ կըհաստատեն թէ մկրտ-
 տութիւնը վերստին ծնունդ՝ կամ անոր մի-
 ջոցն է, կըսեն նաև, թէ՛ Սկրտութիւնն է
 մի միայն միջոց սկզբնական մեղաց մաքրուե-
 լուն : Եւ բանին վրայով կըզրէ մէկը,

“ Ին օրէնքը արդարութիւն կըպատուիրէր,
 բայց չէր կրնար ընել տալ, քանզի սկզբնական
 մեղքը վերցընելու խորհուրդ մը չունէր” :

Հիմա նայիմք թէ առաքեալը ի՞նչպէս բո-
 լորովին տարբեր պատճառ մը կըղնէ հին օ-
 րէնքին տկարութեանը, քանզի կըսէ թէ ոչ
 էթէ օրէնքը ըստ ինքեան պակասութիւն մը
 ունէր այլ մարմինով տկար էր. (Տե՛ս Լուկ. Է-
 ր. 3.) ըսել կուզէ թէ մարդկային բնութիւ-
 նը ապականեալ էր, անոր համար հին
 օրէնքը որ արդարութիւն կըպատուիրէր,

չէր կրնար ընել տալ : Վմանապէս վերի
 յիշուած նոյն տեղը առաքեալը կըցուցընէ
 թէ՛ Վոր () օրէնքին աւելի զօրութիւնը չէ
 թէ սկզբնական մեղքը վերցընող մկրտու-
 թիւն մը ունենալէն է , հապա անկէց որ
 «Վստուած իր որդին խրկեց մեղանշական
 մարմինի նմանութեամբ , ու մեղքի համար ,
 և դատապարտեց մեղքը ան մարմինին մէջ” .
 որ այսպէս՝ (իր զոհուելովը) մեզ ազատէ
 օրէնքին դատապարտութենէն . և շողոյն
 Սրբոյ մեր մէջը դործողութիւնովը մեղքը
 խափանէ , « որ օրէնքին արդարութիւնը
 կատարուի մեր մէջը , որ մարմինի պէս չէր-
 թանք՝ (խօսք մը չկայ մկրտութեան վրայ)
 հապա հողիին պէս” : Լուսն. շ. 4 : Յի-
 րաւի բոլորովին տգէտ են ան մարդիկը Վ-
 ւետարանին վրայով , որոնք կըկարծեն թէ
 անոր զօրութիւնը իր արտաքին արարողու-
 թիւններէն յառաջ կուգայ :

Սուրբ Վերքը տեղ մը չըսեր թէ մը
 կըրտութիւնը սկզբնական մեղքը կըվերցը-
 նէ : Լուովմայեցւոյ զ գլուխին , 3 , 4 հա-
 մարները անտարակոյս ատանկ չեն նշանա-
 կեր . վասն զի նախ՝ առաքեալը չխօսիր
 հոն սկզբնական մեղաց համար մասնառ-
 րապէս , այլ ընդհանրապէս մեղքի համար
 է իր խօսքը , և բոլոր ան Վլուխին մէջ
 ներգործական մեղքին վրայով կըխօսի .
 սկզբնական մեղքին համար բան մը չըսեր :

Եւ երկրորդ՝ առաքեալին , ան խօսքին վրայ իր տուած մեկնութեանը նայելով , որն որ Կող . ք . 12 . կրգանեմք , յայտնի է որ մեղքին մաքրուիլը չէ թէ մկրտութիւնով է , հասլա «Մտուածոյ զօրութեանը ան հաւատալովը» , որուն դաւանութիւնը մկրտութիւնն է : Բայց Աղբնական մեղքը ի՞նչ է . անիկայ ան մեղքը չէ՞ որ Մտուածոյ որոշած խորհրդաւոր , իմաստուն և սուրբ կարգադրութեամբը Մղամէն կիջնայ մեր վրայ . քանզի ինքը՝ չէ թէ միայն իրեն համար փորձուելու սահմանուած էր , այլ նաև բոլոր իր յաջորդներուն համար ալ : Մղամայ՝ իբրև առաջին մարդ և հայր բոլոր մարդկային սեռին , օրէնք մը տրուեցաւ , որուն որ ինքը իբրև գլուխ մարդոց՝ կամ պիտի հնազանդէր կամ պիտի չհնազանդէր , ցմ թէ որ հնազանդէր՝ ամենն ալ մաքուր բնութեամբ պիտի ծնանէին , և ստոյգ պիտի ըլլար որ անոնք ալ հնազանդ մնային : Բայց թէ որ չհնազանդէր ու ի յնար (ինչպէս որ եղաւ) , իր անկումովը չէ թէ միայն ինքը , այլ նաև բոլոր իրմէն ծնած զաւակներն ալ պիտի ի յնային , ցմ անոնք հաղորդ պիտի ըլլային անոր դատապարտութեանը , և պիտի անկից ընդունէին բնութեան ան ապականութիւնը , որ ն որ իր ի յնարովը ինքը ունեցաւ : Կենք իբրև Մղամին հետ մէկ կը հա

մարուխմբ . վասն զի անիկայ մեր զլուխը սեպուեցաւ , ու իր մեղացը պատճառաւը մենք ամէնքս ալ մեղաւոր եմք : Գիտեմք որ աս խորհրդաւոր բաները ճշմարիտ են . վասն զի Սուրբ Գիրքը կը սորվեցունէ զանոնք , ու նաև ամէն օր աչօք կը տեսնեմք որ Ղդամէն իջած բոլոր մարդիկ շարունակ կը մեղանչեն , ու թէ մահ՞ և թէ մեղաց ուրիշ հետեանքները կը կրեն : Բաւաքեալը Հըւուովմ . Ե . զլխոյն մէջ , ասիկայ իբրև անժըխտելի ճշմարտութիւն կը բռնէ , և անով բաղդատութիւն մը կրնէ Ղդամայ մեղանչելովը մեր դատապարտուելուն , ու Վրիստոսի արդարութեամբը արդարանալուն մէջ . (համար 12 , 18 , 19) և կը ցուցունէ թէ ինչպէս որ Ղդամայ մեղքին պատճառովը մենք ալ կը մեղանչեմք , անանկ ալ Վըրիստոսի արդարութեան զօրութիւնովը սր կը լամք : Համար . 20—21 : Կզգնական մեղքը ըսել է ան ամէն հետեանքները որ Ղդամայ մեղքէն անմիջապէս և ուղղակի մեր վրայ կուզան . աս հետեանքները երկուք են : Գատապարտուիցի պատժապարտութիւն անոր մեղքին համար , և Վպականութիւն մեր բնութեանը՝ անոր մեղքին միջոցովը : Ղդամայ զաւակները աշխարհ կուզան , չէ թէ անոր անկումէն առաջ՞ այլ անկէ ետքը ունեցած նոյն ասպականեալ բնութիւնը ունենալով : Բյապէս յատուկ կը սուի՞ թէ

Միշտ մնաւ Սեթը «իր պատկերին ու նըմանութեանը պէս» (Օ՛ննդ . Ե . 3) ինչ թէ Մտտուծոյ նմանութեանը որն որ ինք ունէր ի յնալէն առաջ , այլ ան նմանութեանը և պատկերին պէս , որ ի յնալէն ետքը ունեցաւ :

Միշտ սկզբնական մեղքին առաջին հետեանքը ինչ Միշտայ մեղքին համար դատապարտութիւնը կամ պատժապարտութիւնը կրվերցուի , Վրիստոսի արդարութեամբը և ոչ թէ մկրտութեամբ . և ան միջոցը որով Վրիստոսի արդարութիւնը կրվերցունէ ան դատապարտութիւնը , չէ թէ մկրտութիւնն է , հապա հաւատքը : «Վատապարտութիւն չկայ Վրիստոս Յիսուսով եղողներուն» : Հռոմ . Ը . 1 : «Մն որ կը հաւատայ անոր՝ (չէ թէ ան որ կը մկրտուի ,) չդատապարտուիր . և ան որ չհաւատար անոր , անիկայ արդէն դատապարտուած է . ինչու որ (խօսք չկայ չմկրտուելու վրայ ,) Մտտուծոյ մէկ հատիկ ծնած Արդւոյն անունին չհաւատայ» : Հռոմ . Կ . 18 : Մն որ չհաւատար , թէ և մկրտուած ալ ըլլայ , տակաւին սկզբնական մեղաց դատապարտութենէն ազատ չէ : Բայց ան որ կը հաւատայ , թէ և չմկրտուած ըլլայ սկզբնական մեղքին դատապարտութենէն ազատ է :

Դարձեալ սկզբնական մեղաց երկրորդ մասն ալ՝ որ կը կայանայ Մտտուծոյ պատկեր

լէն զըկուէնուս և մեր բնութեան ապակա-
նութեանը վրայ, չմաքրուիր մկրտութեամբ
այլ ՚ի Հողոյն Արբոյ վերստին ծնանելով :
Երբոր վրանիս կըհագնինք «նոր մարդը զե-
տութիւնով նորոգուած՝ իր Ատեղծողին
պատկերին պէս», (Աւղ. 7. 9, 10.) ան ատե-
նը սկզբնական մեղաց աս մասը կըմաք-
րուի : Եւ որովհետեւ վերստին ծնունդը մը
կըրտութեամբ չէ, ինչպէս որ տեսանք թէ
չըլլար, վասն որոյ սկզբնական մեղաց աս
մասը մկրտութեամբ չերթար : Ամանք կը-
սեն թէ՛

«Մկրտութիւնով սկզբնական մեղքէն ազատե-
լով՝ մեղաց ծառայութենէ ալ կազատին, շնոր-
հաց տակ կըմտնեն. որ անանկ շնորհք մըն է՝ որ
թէպէտ մեղքէ փախչելը մարդուս դիւրին կընէ,
բայց ազատ անձնիշխանութիւնը չվերցուներ. և
ով որ անկէց ետքը մեղք գործէ նէ՛ ազատու-
թեան վիճակէն ինքզինքը կամաւ ծառայութեան
մէջ ձգած կըլլայ» :

Բայց ի՞նչպէս կրնամք ըսել, թէ ա-
նոնք մկրտութիւնով մեղաց ծառայութե-
նէ կազատին, որոնք տակաւին մեղաց ծա-
ռայութեան մէջ են : Ի՞նչ վկայութիւն
ունիմք՝ թէ մկրտութիւնը Ակզբնական
մեղքը մաքրելով՝ մեղքէ փախչելն ալ կը
դիւրացընէ, քանզի մկրտուած մարդիկ
չմկրտուած մարդոցմէ աւելի չեն փախ-
չիր մեղքէ : Թէ որ «Մկրտութիւնը Ակզբ-
նական մեղացը գէմ գեղ դրուած է», յայտնի

է թէ անիկայ անանկ «դեղ» մըն է ; որ զօրութիւն չունի . քանզի կըտեսնեմք որ ամենեւին մեղքի հիւանդութեան բժշկութիւն թիւնը չկատարեր : Աւրեմն բնաւ մէկ վըկայութիւն մը չունիմք թէ մկրտութիւնը սկզբնական մեղքը կըմաքրէ : Սուրբ Գիւրքը ասանկ վարդապետութիւն չսորվեցուներ , մանաւանդ թէ աս վարդապետութիւնը հակառակ է Սուրբ Գիւրքին , և հակառակ նաև մեր ամէն օրուան փորձառութեանը որ կընեմք հազարաւոր մկրտեալ անձանց վրայ :

Բայց թէ որ մկրտութիւնը ոչ վերատին ծնունդ կըպատճառէ և ոչ սկզբնական մեղքը կըվերցունէ , ուրեմն

Բ . Ի՞նչ է մկրտութիւնը , և ինչո՞ւ կը մկրտեմք :

Կըպատասխանեմ .

1 . Մկրտութիւնը Վրիստոսի հնազանդ գտնուելու գործողութիւն մըն է . մենք կը մկրտեմք՝ վասն զի ինքը այսպէս հրամայեր է մեզի : Մատթ . Ի՞նչ . 19 :

2 . Մկրտութիւնը ան գործողութիւնն է՝ որով Վրիստոսի երևելի կամ անուանեալ եկեղեցիէն դուրս եղողները անոր մէջ կը մտնեն :

3 . Մկրտութիւնը գործողութիւն մըն է , որով երբոր մկրտողը չափահաս է Վրիստոսի վրայ իր ունեցած հաւատքը կը

դաւանի մարդոց աւջիւր . ինտոր որ դրուած է «Վմանք սրտանց ընդունելով անոր խօսքերը՝ մկրտուեցան» . (Վարձ . ք . 41 .) և այսպէս վկայութիւն դրին ուրիշներուն թէ հաւատոյ ան նոր կանոնը ընդունեցին , ցր Վրիստոսի աշակերտները եղան : Աւ դարձեալ՝ «Վացէք ասկէ ետեւ բոլոր հեթանոսները աշակերտեցէք՝ մկրտեցէք անոնք» և՛ , ցր՝ նախ անոնք ինծի աշակերտներ ըրէք , և ետքը մկրտեցէք որ անով իմ աշակերտս ըլլանին դաւանին : Այսպէս կրնեն շատ անգամ նոր հաստատուած ընկերութիւնները . յատուկ գործողութիւն մը կունենան՝ որով իրենց նոր անդամը կրնդունին , որով կըհրատարակուի թէ անիկայ ընկերութեան օրէնքներուն տակը կրմտնէ , և անոր արտօնութիւնները վայելելու իրաւունքը ունի : Էիմա կրնայ ըսուիլ թէ Վրիստոս երկու տարբեր ընկերութիւն ունի աս աշխարհիս մէջը հաստատուած . աւաջինը՝ իր ճշմարիտ , ընդհանուր և աներեւոյթ եկեղեցին է , որ կըբաղկանայ բոլոր անոնցմէ՝ (որ և իցէ ազգէ որ ըլլան) որոնք ճշմարտապէս կըհաւատան Վրիստոսի , և այսպէս իրենց հաւատքովը անոր մարմնոյն անդամները կըլլան : Իսկ երկրորդն է ան երեւելի կամ անուանեալ եկեղեցին՝ (որ կըպարունակէ զանազան ազգաց եկեղեցիները) որուն անդամները բոլոր ա

նոնք են որ կրսեն կամ կրդաւանին թէ Վր-
 ըխատուի կրճաւատան և իր մարմնոյն ան-
 դամներն են : Ասոր պէս ալ երկու տարբեր
 գործողութիւններ կան , որով կրմանն
 մարդիկ աս երկու ընկերութեանց մէջ :
 Աներևոյթ եկեղեցիին մէջ կրմանն մար-
 դիկ՝ վերասին ծննդեամբ . բայց երևելի
 կամ անուանեալ եկեղեցիին մէջ՝ մկրտու-
 թիւնով , որ սահմանուած է աս բանին հա-
 մար :

Բայց չէ թէ Վրիստոս բոլորովին նորէն
 հնարեց մկրտութիւնը , քանզի Յովհաննէս
 ալ կրմատակարարէր աս արարողութիւնը
 ՚ի նշան ժողովրդոց խոստովանութեանը , ի-
 րենց ապաշխարող ըլլալուն , և Մեսիային
 դալտեանը պատրաստուելուն : Ամանապէս
 շրէաները հին ատենէ ՚ի վեր հեթանոսու-
 թենէ դարձողներուն կրմատակարարէին
 մկրտութիւնը : Բարեխրնեան ըսուած
 Թաւմուտին մէջ (երկրորդ դարուն վեր-
 ջերը դրուած) ասանկ կըկարդացուի .
 « Աորահաւատները չեն կրնար ընդունուիլ՝
 եթէ ոչ թրիստութեամբ , մկրտու-
 թեամբ և արիւն ցանելով . . . հրէութիւ-
 նը ընդունած չէ մէկը՝ մինչև որ չթըլ-
 փատուի և չմկրտուի : Վանդի թէ որ չմը-
 կրտուի , անիկայ տակաւին հեթանոս մըն
 է » : Արուստղէմեան Թաւմուտ ըսուածն ալ
 նոյն վկայութիւնը կուտայ : Արդ անհնելին

հաւտացուելու բան չէ թէ շրէաները՝ որ այնքան կատելին քրիստոնէութիւնը , Վրքրիստոնեաներէն աւաժ բլանն առ արարողութիւնը : Կանաւանդ իրենց Աւարբիներն ալ կը հաստատեն՝ թէ մկրտութիւնը Կովսէսին ժամանակէն իջաւ իրենց : 'Վաւե կիպրիանոս՝ երրորդ դարուն հայրերէն մէկը , կը վկայէ թէ Վրքրիստոսէն առաջ շրէաները «()րէնքի և Կովսէսի մկրտութիւնը» ունէին : (Վասն Աղարի . 73.) Ալ երջապէս Վրքրիստոսի գալէն առաջ , շրէից մկրտութիւն ունենալը իբրև արարողութիւն նոր կրօնք մը դաւանելու՝ յայտնի կերևայ նաև Հովհաննէսին եղած սա հարցմունքէն . «Շտալա ինչո՞ւ մկրտութիւն կրնես , թէ որ դուն Վրքրիստոսը չես . ու ո՞չ Աղիան , և ո՞չ մարդարէն» : (Յովհ . ան . 25 :) Եւ ինչ հարցունէր թէ «Կո՞նչ նոր արարողութիւն է սա» , այլ թէ «Ինչո՞ւ դուն կը մատակարարես անիկայ» . քի՞ թէ որ դուն Վրքրիստոսը չես , ու ո՞չ Աղիան , և ո՞չ մարդարէն որ մեր մէջը նոր կանոն մը հաստատես , ուրեմն ինչո՞ւ կը դործածես սա արարողութիւնը , որն որ միշտ հաւատոյ նոր կանոնի մը ընդունելութեան նշան է :

Արդ՝ Վրքրիստոնէութիւնը նոր սկզբունքներ մանաւանդ Վրքրիստոսի վրայ հաւատք կը հաստատէր , ինտոր որ ըսուած է . «()րէնքը մովսէսին ձեռքովը տրուեցաւ , բայց

չնորհքը ու ճշմարտութիւնը Յիսուս Վ.ը
 րիստոսի ձեռքովն եղան” . (Յ.ձ. . ւ. 17.) և
 դարձեալ . “Ի՞նչ որ բու բոլոր սրտովդ կը
 հաւատաս նէ կարելի է որ մկրտուիս” :
 Գործ. ք. 37 : Սէրեմն ինչպէս որ Յովհաննու
 և Հրէից մկրտութիւնը նոր հաւատք մը ըն-
 դունած ըլլալը խոստովանելու արարողու-
 թիւն մըն էր , ասանկ է նաև քրիստոնէից
 մկրտութիւնը : Ղճմարիտ է որ՝ թէ բերա-
 նով և թէ ուրիշ զանազան կերպերով կրը-
 նամք Վ.րիստոսի վրայ ունեցած հաւատքնիս
 խոստովանիլ , բայց մկրտութիւնը յատուկ
 ան դործողութիւնն է՝ որով աս հաւատքը
 խոստովանելով կրնդունուիմք Վ.րիստոսի
 երևելի կամ անուանեալ եկեղեցւոյն մէջ :

4 . Մկրտութիւնը Հողոյն Արբոյ նորո-
 գելու գործին մէկ գեղեցիկ խորհրդական
 նշանն է . վասն զի Հողին գործն է նորո-
 գել սիրտը և մաքրել մեղքէ . իսկ ջուրը
 սրբելու յատուկ և գլխաւոր միջոցն է , և
 մաքրութեան մեծ նշանակը սեպուած է ա-
 մէն աստէն և ամէն տեղ : Օ՞ր օրինակ Հը-
 րէաները իրենց նուիրական անօթները շատ
 անգամ ջրով կրմաքրէին . (Գ.՝ . ւ. 27 ,
 28 .) նմանապէս բահանաները Վստուծոյ
 պաշտօնին մէջ մտնելն առաջ պէտք էր
 որ իրենց մարմինները լուային ջրով , ի նը-
 շան ան հողւոր մաքրութեանը՝ որն որ կը
 վայէր Վստուծոյ մօտեցողներուն : Ա.ձ. . ւ .

նեմ որ իմ օրէնքներուս մէջը բալէք” :
 Հոս ալ “ջրով մաքրելը” կրնշանակէ շո-
 գիին ձեւքով սրբուիլը : ‘Նաև Պետրոս ա-
 ւաքեալ մկրտութեան վրայ խօսելով կը-
 սէ թէ , “Նիկիայ կապրեցունէ մեզ՝ չէ թէ
 մարմինին աղտը մէկ դի ընելով” (որ ջուրը
 ասկից զատ բան մը չկրնար ընել) “հապա
 բարի խղճմտանքին վկայութիւնը առ Մատ-
 ուած” , (որ ջուրով մաքրուիլը ասիկայ կը
 նշանակէ , և ասիկայ է հարկաւորը) “Յի-
 սուս Վրիստոսի յարութիւնովը” . (ԹՊԷ .
 ք . 21) ըսել կուզէ որ միայն ան մարդը
 կըփրկուի՝ որ իր ներսը ստացեր է ան մաք-
 րութիւնը՝ որուն արտաքին կնիքը կամ նը-
 շանակը մկրտութիւնն է : ‘Նմանապէս Պո-
 դոս կըսէ թէ , “Վայց լուացուեցաք” ,
 քայց սրբուեցաք” և այլն : ԹՊԷ . ք . 11 :
 “Նշիկ մարդիկ՝ սիրեցէք ձեր կնիկները .
 ինչպէս որ Վրիստոս սիրեց եկեղեցին , ու
 իր անձը մատնեց անոր համար . որ անի-
 կայ սուրբ ընէ աւազանին մաքրութեամբ՝
 խօսքով” : ԹՊԷ . ք . 25 , 26 : ‘Նկատէ՛ հիմա
 որ աս տեղս աւազանին մաքրութիւնը յի-
 շելով՝ կըսէ թէ խօսքով է , այսինքն Մատ-
 ոուծոյ խօսքին միջոցովն է մաքրութիւ-
 նը , չէ թէ մկրտութեամբ : ‘Նոյնպէս
 Պետրոս կըսէ . “Նպաշխարեցէք՝ ու ձեզ
 մէ ամէն մէկերնիդ թող մկրտուի Տէր Յի-
 սուս Վրիստոսի անունովը՝ մեղաց թողու-

[Թեան համար” և՛. (Վարձ. ք. 38.) այսինքն՝
 Վապաշխարեցէք՝ ու հաւատացէք, և մկրր-
 տուեցէք՝ ՚ի նշան և ՚ի վկայութիւն ձեր ա-
 վաշխարած ըլլալուն և հաւատքին կամ
 ձեր վերստին ծնած ըլլալուն, և ձեր մեղ-
 քերը պիտի թողուին ձեզի: Սակայն առա-
 քելոց գործքերուն երրորդ գլուխ տասնու-
 ինը համարէն յայտնի է որ Պետրոս առաք-
 եալ վերի խօսքին մէջ՝ ապաշխարութիւնը
 գլխաւոր բան կրսեպէ, չէ թէ մկրտու-
 թիւնը. ինչու որ ամենեւին չյիշելով մկրր-
 տութիւնը՝ միայն կրսէ. «Օղջացէք ու
 դարձի եկէք, որ մեղքերնիդ ջնջուի»: Վարձեալ
 աստուածավախ Վնանիան ա-
 սանկ ըսաւ Սողոսին. «Աւ հիմա ալ ի՞նչ
 կուշանաս, ելիր մկրտուէ՝ ու մեղքերդ
 լուանոր անունին կանչելով». (Վարձ. Իք. 16.)
 Գր ելիր, ու մկրտուելովդ քու հաւատ-
 քդ հրապարակաւ խոստովանէ, ու խոր-
 հրորարար նշանով և օրինակով քու մեղ-
 քերուդ լուացումը ցուցուր, որոնք շոգ-
 ւով Սրբով կրմաքրուին, ինտոր որ մարմ-
 նոյդ անմաքրութիւնները ջրով:

Աս կերպ խօսուածքը բնական ոճ մը ունի
 և դիւրաւ կը հասկըցուի, քանզի ամէն ազգի
 մէջ «մեղքէ սրբուիլ» կամ «բարոյական
 ազտեղութենէ մաքրուիլ» ըսելով՝ չիմաց-
 ուիր ջուրով եղած լուացումը, այլ այնպէս
 կըսուի, ինչու որ ջուրն է գլխաւոր տար-

ըր ու նշանակ մաքրութեան : Ալ այսպէս
ան ըսուածքը «Վորէն ծնանելու աւազա
նին ձեռքովը» (Տե՛ր . 7 . 5) կարելի է որ մը
կըրտութեան բնաւ չվերաբերիր , բայց
միայն կընշանակէ «նորէն ծնանելու մաքրու
թիւնը» : Այսպէս նաև «Յօհաննու ան խօս
քը «Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն
չծնանի» , (Յ՛ռ . 7 . 5 .) զուցէ մկրտութեան
չվերաբերիր , միայն թէ Ասայեայ ըսածին
պէս հասկըցուելու է , «Ծարաւին վրայ ջու
րեր և չոր երկրի վրայ հեղեղներ պիտի քա
լեցունենմ . իմ հոգիս պիտի թափեմ» Լ՛ճ . ուր
տեղ ջուրեր քալեցունելը ու Հոգիի թափե
լը որոշակի նոյնը կընշանակեն . վասն զի մէկը
միւսին օրինակն է . անտնկ որ «Յօհաննու աս
խօսքը կընայ իմացուիլ այսպէս «Թէ որ
Հոգիէն չծնանիք , որ կըմաքրէ հոգին , ին
տոր որ ջուրը մարմինը կըմաքրէ» Լ՛ճ : Այս
մտօք աւնուելով աս խօսքը՝ համեմատ պի
տի դայ Սատթէոսի 7 գլխոյն 11 համա
րին մէջը ըսուածին . «Մնիկայ ձեզ պիտի
մկրտէ Հոգևով Արքով ու կրակով» . Վան
զի հոս ալ այլաբանօրէն է խօսքը , որով
հետև կրակն ալ ջուրին պէս մաքրողական
զօրութիւնը ունի :

Վերը խօսածնիս մկրտութեան ճշմարիտ
բնութեանը և նշանակութեանը ուղիղ բա
ցատրութիւն մը ըլլալը յայտնի պիտի ըլ
լայ ամեն Սուրբ Վերքերը անկեղծութեամբ

և ուշադրութեամբ քննողներուն . բայց սակայն հակառակութեամբ ըսած են ոմանք թէ մկրտութիւնը չկրնար նշան մը սեպուիլ թլիստութեան պէս , վասն զի «մնայուն զգալի նշան մը» չէ , ինչպէս որ թլիստութիւնը է . բայց ասիկայ տղայական խօսք մըն է , վասն զի ի՛նչ է Նշան ըսուածը , եւ թէ ոչ՝ ան բանը որ ուրիշի մը տեղ դրուած է , կամ թէ ան ուրիշ բանը կը ներկայացունէ և կը նշանակէ : Հարկ չէ թէ նշանը զգալի կամ մնայուն բան մը ըլլայ . մանաւանդ թէ հարկ չէ որ աս երկու յատկութիւնները մէկ տեղ ունենայ , որ իր նշան ըլլալը յայտնի ըլլայ : Օրօրինակ՝ ես կայնած տեղէս վար կիյնամ , որ նշան մըն է իմ տկար ըլլալու . իյնալը թէպէտ զգալի բան մըն էր , բայց չէ թէ մնայուն : Վարձեալ՝ գիտեմք որ մահէն կեանքի փոխուեցանք , ինչու որ եղբայրները կը սիրեմք . (Էս. 7. 14 .) ուստի սէրը նշան մը , ցոյց մը և վկայութիւն մըն է մահէն կեանքի փոխուած ըլլալու , որ ասիկայ մնայուն նշան մըն է , բայց չէ թէ զգալի : Նմանապէս կը կարդամք « Որ երկիրը բերանը բանալով՝ զանոնք և Վորխը կը լլեց , երբոր ան բազմութիւնը մեռաւ , ու երբ որ կրակը երկու հարիւր յիսուն անձը սպառեց , որոնք նշան եղան » : (Թ. 11. 10 .) Նոյն ասոնք՝ Վստուծոյ բարկութեանը նշան մը եղան , որ երկիրը զերենք կը լլեց և հու

ըր այլեց : «բայց զգալի՞ մնայունն» նշան մը
 եղան , կամ թէ անանկ նշան մը որ «կրնայ
 կրկնուիլ» : «Կարձեալ՝ «ԿԷ ըսաւ անոր ,
 անշուշտ ես քու հետդ կըլլամ , և քեզի
 ես խրկած ըլլալուս նշան աս ըլլայ : ԿԷԷ
 բոր հանես ժողովուրդը Կզիպտոսէն , աս
 լեռանը վրայ զ՝ստուած պիտի պաշտէք» :
 ԿԷԷ . 7 . 12 : Ըհա աս նշանը «մնայունն , զգա
 լի , կամ թէ կրկնական» բան մըն էր : «ԿԷ
 աս ըլլայ քեզի նշանն՝ որն որ քու երկու ուր
 զԷոցդ Սփինի և Փենէհէսի վրայ պիտի գայ ,
 որ երկուքն ալ մէկ օր պիտի մեռնին» : ԿԷ
 ԿԷ . 7 . 34 : Սնայունն նշան մըն էր ասիկայ՝
 աս երկու եղբարց հօրը . կամ թէ կրնար
 կրկնուիլ աս նշանը իրենց հօրը շեղինն :
 Ոմանք կըսեն թէ՛

«Սկրտութիւնը թէպէտ զգալի բան մըն է ,
 բայց ի՞նչպէս նշան կրնայ ըլլալ որ մարդ չտես
 նէր՝ մկրտուած ատենը հոն ներկայ գտնուողներէն
 զսա» :

Բայց կըսեն նաև թէ՛

«Կրիստոնէութիւնը ճանչնալու մէկ նշան մը
 կայ երեսնին խաչակնքելը» :

Ուրեմն մենք ալ կըհարցունեմք թէ
 ի՞նչպէս կրնայ «երեսը խաչակնքելը» նը
 շան մը ըլլալ անոնց՝ որոնք ներկայ չեն գըր
 նուիր անիկայ տեսնելու , կամ կոյրերուն՝ ու
 թոնք բնաւ չեն կրնար տեսնել : Սկստի աս
 կանոնին նայելով՝ շեղինն երկու ուղեոցը
 մահը նշան չէր իրեն , ինչու որ ինքը հոն չէր

որ անիկայ տեսնէր : Նայց ճշմարտիւ՝ Հեղին դէմ Վստուածային բարկութեան նշան մըն էր ան . և իր հոն ներկայ գտնուիլը կամ չգտնուիլը մի և նոյն բան էր : Վ. յսպէս ջրով մկրտուիլը նշան կամ օրինակ մըն է հոգիին մաքրուելուն և վերստին ծնանելուն , ամենեւին փոյթ մը չըլլալով թէ ո՛վ կըտեսնայ անիկայ կամ չտեսնար :

Մկրտութիւնը՝ իբրև խորհուրդ աւետարանական , ներքին հոգևոր շնորհաց մէկ յայտնի նշանն է : Սուրբն () գոստինոս կըսէ թէ խորհուրդը սրբազան «Նշան մըն» է . և «Վրխատոնէական վարդապետութիւն» կոչուած գրքի մը հեղինակն ալ , (տպեալ ՚ի կոստանդնուպօլիս , 1843,) կըսէ թէ Վստուած գանազան միջոցներով շնորհք կուտայ իր ժողովուրդին , և «Վ. յս շնորհքներս տալու արտաքին՝ Նշաններուն խորհուրդ կըսեմք» : Ուստի որովհետև մկրտութիւնը յայտնապէս ան նշաններուն մէկը պիտի ըլլայ , վստոյ յիշեալ հեղինակն ալ կըվկայէ , թէ մկրտութիւնը կրնայ նշան սեպուիլ :

Մկրտութիւնը կրկնուելու չէ , վասն զի Սուրբ Վիքթէն հրաման կամ օրինակ մը չունիմք մէկ անգամէն աւելի մկրտուելու . քանզի առաջին դաւանութիւնը՝ որուն համար մկրտութիւնը տրուած է , միայն մէկ անգամ կըլլայ . որովհետև երբ որ մկրտուած մէկը մեղաց մէջ իյնալով կըբանադրուի

եկեղեցիէն, ու ետքը զղ ջալով նորէն կրն
դունուի, չէ թէ հեթանոսութենէ նոր դար
ձած համարելու է զանիկայ, բայց միայն
իբրև եկեղեցիին մոլորեալ ու դարձի եկած
մէկ անդամը. և ասոր համար իր մկրտու
թիւնը չկրկնուիր :

5. Մկրտութիւնը նաև կնիք մըն է «հա
ւատոյ արդարութեան». կնիք մըն է ան՝ որն
որ Վրիստոս բուն իր իշխանութեամբը
կուտայ անոնց որ զնեքը կը դաւանին. և աս
կնիքը՝ յայտնի հաստատութիւն մըն է հա
ւատացեալին իր հաւատքովը արդարացած
ու փրկուած ըլլալուն, և ան ուխտին որ
Մտտուած կը հաստատէ հաւատացեալին
հետ, բայց մենք ասոր վրայ ուրիշ տեղ
երկարօրէն պիտի խօսիմք :

Հիմայ պէտք է քննել ան խնդիրը, թէ

Գ. Մկրտութիւնը ի՞նչ մտք հարկաւոր
է փրկութեան :

Արդէն բուական հաստատուեցաւ առ ջի
երեսներուն մէջ թէ մկրտութիւնը փրկու
թեան հարկաւոր չէ, ինչպէս որ Վրիստոսի
վրայ հաւատքը և Սուրբ Հոգիէն վերստին
ծնանիլը հարկաւոր են : Աւ յիրաւի ամէնքը
ընդունած են թէ կարելի բան է որ մէկը
մկրտուէլէն ետքն ալ չփրկուի. մանաւանդ
թէ կը խոստովանին որ հազարաւոր մկրտու

ուած մարդիկ մեղօք կրմեռնին ու յաւիտեան կրկորսուին . բայց ասոր հակառակ՝ ո՛վ որ ճշմարտապէս կը հաւատայ անշուշտ պիտի փրկուի : Ակրտութիւնը հարկաւոր չէ ան մտօքը թէ սկզբնական մեղքը կրվերցունէ կամ նորէն ծնանելու պաշտօնը կրկատարէ , վասն զի չկրնար ընել աս բաները : Արդարեւ տղաքը որ երախայութեան մէջ կրմեռնին , պէտք է որ սկզբնական մեղքէ ազատին ու Սուրբ Հոգիէն վերստին ծնանին , ապա թէ ոչ չեն կրնար երկինքը մտնել . բայց տեսանք թէ աս երկու դործողութիւններուն ոչ մէկն ալ մկրտութենէն յառաջ կուզայ կամ անկէց կախում ունի . ուստի իրենց փրկութեան հարկաւոր պայմանը մկրտութիւնը չէ : Սակայն կրկարդամք որ երբոր մանր տղաքներ բերուեցան անգամ մը Վրխտոսի , իր զիրկը առաւ զանոնք՝ օրհնեց ու ըսաւ . « Բստուծոյ թագաւորութիւնը ատանկներուն է » . (Վր. 16 .) ասանկ շատ ուրիշ վկայութիւններ ալ կան՝ որոնցմէ պատճառ ունիմք հաւատալու , թէ ներգործական մեղք չգործած երախայութեան մէջ մեռնող տղաքները՝ սկրզբնական մեղաց դատապարտութենէն ազատ կըլան Վրխտոսի արդարութիւնովը , և թէ Հոգին Սուրբ զանոնք կը պատրաստէ երկինքը ընդունուելու : Բայց անոնք որ բաւական մեծցած են հաւատք ունենալու , պէտք է որ

հաւատան , եթէ ոչ բնաւ չեն կրնար փրկուել . պէտք է որ Սուրբ Հոգիէն ծնանին , եթէ ոչ բնաւ չեն կրնար Վստուծոյ Թագաւորութիւնը մտնել : Պէտք է նաև որ մը կըրտուին , թէ որ շատ դժուար արգելք մը չունենան . քանզի ան անձը որ մկրտութեան հեղինակութիւնը հասկընալով չուզեր մը կըրտուել , բնաւ պիտի չմտնէ . Քրիստոսի ոչ երկրաւոր և ոչ երկնաւոր Թագաւորութեանը մէջ , վասն զի ան որ չուզեր Վրիստոսի զինուորեալ եկեղեցիին անդամ ըլլալ , անշուշտ անոր յաղթական եկեղեցիին անդամ ըլլալէն ալ պիտի զրկուի , ապրտամբ մեղաւորի մը պէս որ հաւատք չունի և նորոգուած չէ :

Բայց թէ որ մէկը անանկ պարագայի մը մէջ գտնուի որ չկրնայ մկրտուել , մկրտուեալէն ետ մնալը իր փրկութիւնը չարգելելը : Մեծ սխալ է ան «փրկարար ջուր» խօսքը , վասն զի մեղաւորները Ֆրկողը չէ թէ ջուրն է , այլ Վրիստոս : «Հաւատաս՞ Տէր Յիսուս Վրիստոսի» , ու թէ մկրտուած ըլլաս և թէ չէ , «պիտի փրկուիս» . բայց «Նո՞ր հաւատար» , թէ մկրտուած ըլլայ և թէ չէ , «պիտի դատապարտուի» : Տէրն մեր ըսաւ թէ՛ «Նո՞ր հաւատայ ու մը կըրտուի՞ պիտի փրկուի , և ան որ հաւատար՞ պիտի դատապարտուի» . (Մարի . ԺԷ . 16 .) բայց չըսաւ՝ թէ Նո՞ր չմկրտուի

պիտի դատապարտուի : Բ, սիկայ հաստատուն
վկայութիւն մըն է որ մկրտութիւնը փրկու-
թեան հարկաւոր պայմաններէն մէկը չէ :

Քրիստոս՝ Նիկողեմոսի հետ խօսակցու-
թեանը մէջ միայն անգամ մը կը յիշէ ջուրէն
ծնանիլը, բայց Հոգիէն ծնանիլը երեք ան-
գամ, ցուցունելով թէ իր միտքին մէջը չէ
թէ առաջինը՝ այլ վերջինն է մեծ ու հար-
կաւոր պայմանը : « Քրիստոս Յիսուսով ո՛չ
թվատութիւնը բան մըն է, ո՛չ ալ անթըլ-
փատութիւնը . հապա (չյիշեր մկրտութիւ-
նը) նոր ստեղծուած ըլլալն է բանը » : Գալ .
ի . 15 : Բ, յապէս մենք ալ կրնամք ըսել՝ Չէ
թէ մկրտութիւնը բան մըն է, հապա նոր
ստեղծուած ըլլալը, Հոգին Սուրբէն վերըս-
տին ծնանիլը : Բ, սիկայ ըսել չէ՝, թէ
« մկրտութիւն եղեր չէ եղեր՝ հոգ չէ », բան-
զի շատ հոգ է . մկրտութիւնը Քրիստո-
սական կանոնին մէկ հարկաւոր սահմանա-
դրութիւնն է . չեմք կրնար զանիկայ զանց
ընել և անմեղ սեպուիլ, բայց թող հաս-
կըցուի թէ փրկութիւնը անով չէ . ուրիշ է
փրկութեան հարկաւոր պայմանը :

Գ Լ ՈՒ Խ ՝ Զ :

Ինչո՞ւ համար տղայքը կըմկրտեմք :

Թէ որ մկրտութիւնը տղայոց փրկութիւնն հարկաւոր չէ , ու նաև թէ որ անիկայ նշան կամ օրինակ մըն է վերստին ծննդեան , և Վրիստոսի վրայ եղած հաւատոյ դաւանութեան գործողութիւնը , ուրեմն ինչո՞ւ համար տղայքը կըմկրտեմք՝ որոնք ոչ հաւատք ունին , ոչ վերստին ծնած են , և ոչ ալ կըրնան դաւանութիւն ընել :

Կըպատասխանեմք թէ՛ որովհետև մկրտութիւնը թլփատութեան տեղը դրուած է , ուստի հաւատացեալ ծնողքները հիմայ ալ նոյն իրաւունքը ունին , մանաւանդ թէ նոյն պարտաւորութեանն ալ տակն են իրենց զաւակները մկրտելու , ինտոր որ Վրիստոսի գալէն առաջ եղող հաւատացեալ ծրնողքները ունէին իրաւունք , մանաւանդ թէ պարտաւորած ալ էին իրենց զաւակները թլփատելու :

Լսիկայ խիստ երևելի ու ընդարձակ նիւթ մըն է , և զանիկայ հաստատող շատ վկայութիւններ կան . մենք հոս տեղ անոնցմէ միայն մէկ քանիները յառաջ կըբերեմք , քանզի թէ որ ամէնը յառաջ բերելու ըլլամք նէ շատ պիտի երկարի մեր փոքրիկ ճառը :

Ուստի մկրտութիւնը թլխատութիւնն է տեղ փոխադրուելը , և Վրիստոնեայ ծնողաց իրենց զաւակները մկրտելու համար ունեցած իրաւունքը և պարտաւորութիւնը , պիտի երևայ աս հետևեալ քննութիւններէն :

Բ. Նոր կտակարանի եկեղեցին նոր հաստատուած եկեղեցի մը չէ , այլ Հին կտակարանի եկեղեցին շարունակութիւնն է , միայն թէ ընդարձակուած է և աւելի կատարեալ եղած : Բսիկայ աղէկ իմանալու համար մը տածեցէք նախ՝ թէ ,

1 . Աստուծոյ ճշմարիտ՝ հոգևոր՝ և աներևոյթ եկեղեցին մի և նոյն է ամէն ժամանակ : Բս եկեղեցին կը պարունակէ աշխարհիս մէջ Աստուծոյ բոլոր ճշմարիտ բարեկամները և ծառաները : Բսոնք ամէնն ալ մէկ սրբազան գերդաստան մը կը կազմեն , և նոյն հոգևոր վերաբերութիւնները կունենան թէ իրարու և թէ Աստուծոյ հետ : Բայց Վրիստոսի աշխարհիս մէջի երևելի եկեղեցին կը բաղկանայ բոլոր անոնցմէ որ ճշմարիտ եկեղեցին անդամները և Աստուծոյ հարազատ ժողովուրդը ըլլալ կը դաւանին : Աւրեմն թէ որ ամէն ատեն մէկ մըն է աներևոյթ եկեղեցին , նոյնպէս մէկ մըն է երևելի եկեղեցին , քի՛ աղգի , օրէնքի , արարողութիւններու , և սովորութիւններու խտրութիւնները չէ թէ զանազան եկեղեցիներ կը

կազմեն, այլ միայն նոյն անուանեալ եկեղեցիին տարբեր մասունքները կը ցուցունեն :

2 . Երկու տնտեսութիւններուն իմ հին և նոր օրինաց մէջ եկեղեցին նոյն կրօնքը խոստովաներ է . և ճշմարիտ կրօնքը նոյնն է ամէն ժամանակ, իմ մի և նոյն Աստուածն է որ պիտի պաշտուի, և նոյն հնազանդութիւնն է որ կը պահանջուի իրեն պատուիրանքներուն : Ո՛րայն մէկ ճամբայ մը եղած է երկրէս երկինքը երթալու, և միայն մէկ ճամբայ մը փրկութեան նոյն փրկչին ձեռքովը : Աս կրօնքը Աստուածաշունչը կը յայտնէ և կը սորվեցունէ, և անշուշտ Աստուածաշունչին կրօնքը մէկ է : Իսրայէլացիք դաւանեցան զանիկայ ճիշտ ինտոր որ քրիստոնեայք հիմա կը դաւանին . անոնք հին Իսրայէլ էին մենք նոր Իսրայէլ եմք : Այլ մենք ալ այնպէս կընդունինք շին Ատակարանը ինտոր որ անոնք կընդունէին . քանզի Վոր Ատակարանը չէ թէ շին Ատակարանին հակառակն է, այլ անոր վախճանը, լուսնը և ընդարձակութիւնն է : շին Ատակարանին գլխաւոր վարդապետութիւնները Վոր Ատակարանին մէջ եղածներուն հետ նոյն են . նմանապէս գլխաւոր պահանջմունքները, տասնաբանեայ պատուիրանաց օրէնքը ինչպէս որ շրէից օրէնքն էր, անանկ ալ քրիստոնեիցն է :

3 . շին ատենի եկեղեցիին եղած խոստ

մունքները և յայտնութիւնները՝ Վոր Կտակարանին մէջ տրուած են նաև Քրիստոնէից եկեղեցիին : Բաղդադէ Սարճ. իշ. 22, Լէբր. թ. 11, 12 ՚ն հէր : Վան Լընց. ժժ. 5, 6, և Պէր. թ. 9 ՚ն հէր : Վան Լընց. ժ. 11, 12, Գործ. ժ. 14—17 ՚ն հէր : Կտուած ըսեր է իր շին Կտակարանի Եկեղեցիին. «Աս ձեր մէջը պիտի քալիմ ու ձեր Կտուածը պիտի ըլլամ, և դուք իմ ժողովուրդս պիտի ըլլաք» : Վ. Կ. իշ. 12 : Կս խօսքը սուսք ետըր վկայութիւն կրբերէ, շին Կտակարանէն աւած ուրիշ խօսքերով, և Կորնթացոց եկեղեցիին կողղ է զանիկայ, ու ետքը կրսէ. «Ալստի սիրելիք՝ որովհետև աս խոստմունքը մենք ունիմք նէ, մեր անձերը. . . մաքրելք» Աճ : Թ. Կորնթ. է. 1 : Ի՛նչպէս կրնար Պօղոս դրել Կորնթացի եղբայրներուն, թէ աս խոստմունքները ունին և թէ ան խոստմունքներէն հետևեցած իրենց անձերը մաքրելու պարտաւորութեանը տակն են, թէ որ անոնք ան նոյն եկեղեցիին չվերաբերէին՝ որուն որ աւաջ ան խոստմունքները եղան : Բաղդադէ (Նասուր) և. 5, և և Սասուր. իշ. 20, Լէբր. ժ. 5 ՚ն հէր : Կմէն քրիստոնեայք այնպէս կըհամարին որ հին ատենի եկեղեցիին մէջէ Կտուածոյ ժողովուրդին եղած հոգևոր խոստմունքները, հաւասարապէս կըվերաբերին Վոր Կտակարանի եկեղեցիին ժողովրդը.

դոցը : Միաբանն հաւանութեամբ ընդունուած է թէ շին Սիօնին խոստմունքները հաւասարապէս Նոր Սիօնին ալ կը վերաբերին , և անոնցմէ կան ալ որ յատկապէս կը վերաբերին ասոր : Առաջ . խթ . 16 , 23 և :

4 . Սուրբ գրոց մէջի մարգարէութեան գրքերն ալ նոյն բանը կը հաստատեն . Յովհաննէս Սկրտիչ գուշակեց իր ետեւն եկողին վրայով ըսելով թէ Պիտի գայ « իրեն կալը մաքրելու » չէ թէ քակելու : Մատթ . 7 . 12 : Ասոր համեմատ եկեղեցին աւետարանական տնտեսութեան մէջ մտնելով մաքրուեցաւ՝ ու չէ թէ աւրուեցաւ :

Այգիին առակին մէջ Վրիստոս գուշակեց թէ ան այգին կամ եկեղեցին՝ որուն մէջ շրէյք անանկ չարութեամբ վարուեր էին , պիտի առնուի անոնցմէ և շեթանտներուն տրուի : Մատթ . խթ . 43 : Տես նաև վիճակ . 7 . 2 :

Շեթանտները մէկտեղ ժողուելու վրայով և եկեղեցիին ապառնի յառաջադիմութեանը ու փառքին վրայով եղած հին ատենի բոլոր գուշակութիւնները , շին կտակարանի մէջ յիշուած Սիօնին ըսուեցան , ան եկեղեցիին՝ որ հին Եսայիէի մէջն էր , չէ թէ նորէն հաստատուելու եկեղեցիի մը : շին եկեղեցին կը յիշուի ոչ իբրև ոչնչացեալ և իր տեղը ուրիշը յաջորդած , հապա իբրև այցելութիւն ընդունած ,

միսիթարուած , մաքրուած , յարուծիւն աւ
ուած , ընդարձակուած և փառաւորապէս
նորոգուած իր կործանմանէն և ապականու
թեանէն : () րինակի համար , « Վուն զըրկ
ուած ըլլալովն՝ (ցի շրէաներէն) որդիքդ
քու ականջներուդ պիտի ըսեն . Ես տեղը
ինծի նեղուացք է , մէկ դի գնա՛ որ բնակիմ :
Եւ սրտիդ մէջը պիտի ըսես . Ես որ զըրկ
ուած և ամուլ էի՝ (ցի շրէաներէն) ասոնք
(ցի շեթանոսները) ինծի ո՞վ ծնաւ , ես որ
դերի ինկած և հալածուած էի՝ ասոնք (ցի
շեթանոսները) ո՞վ մեծցուց . և ահա ես որ
մինակ էի՝ ասոնք (ցի շեթանոսները) ո՞ր
էին՝ : Եւ . Խմբ . 20 , 21 : Տե՛ս նաեւ Եւ . Խմբ . Ի .
2—5 : Ժա . 1—10 : Լե՛ . 1—10 : Խմբ . 1—6 : Խմբ .
1—26 : Ժա . 3—5 , 11—16 : Ժբ . 1—15 : Ժգ .
1—17 :

5 . Երկու տնտեսութիւններուն տակն ալ
եկեղեցիին մի և նոյն ըլլալը Սուրբ Վիրքին
յատուկ վկայութիւններէն կերևայ : Պօղոս
աւաքեալ ասիկայ յայտնապէս կը սորվե
ցունէ մեզի , շուովմայեցւոյ ժառանգորդ
դիւտոյն մէջ : Չիթենիին ծառը ցի եկեղե
ցին , (Տե՛ս Եւրե՛ . Ժա . 16 .) չէթէ կործանե
ցաւ , արմատէն հանուեցաւ ու նոր ծառ մը
տնկուեցաւ անոր տեղը , այլ միայն իր ոստե
րը (ցի անհաւատ շրէաները) կտրուեցան ,
և շեթանոսները (որ բնութեամբ վայրի
ձիթենի էին) անոր վրայ պատուաստեցան .

որով ան ապականեալ ծառը կենդանա-
ցեալ ծաղկեցաւ . ու երբոր շրէաներն ալ
կըհաւատան , նորէն անոր վրայ կըպատ-
ուաստին . և այսպէս 'ի սկզբանէ անտի-
միայն մէկ ծառ մը ց' մէկ եկեղեցի մը կայ :
Հով . ԺԿ . 16—26 :

Նոյն առաքեալը կըսէ իր Ափեսացւոյ
Թղթոյն մէջ . «Ուստի դուք ալ միտքերնիդ
բերէք , որ ատեն մը մարմինով հեթանոս-
ներ էիք որ ան ատենը դուք առանց
Վրիստոսի էիք , ու օտարացած էիք Իս-
րայէլի ընկերութենէն , և դուրս ձգուած ան
խոստմունքին ուխտէն , ու յոյս մըն ալ չու-
նէիք , և աշխարհի մէջ անաստուած էիք” :
Եփ . Ժ . 11 , 12 : Իայց երբ հաւատացին
Վրիստոսի՝ Իսրայէլի ճշմարիտ ժողովին
մէջ առնուեցան , ց' Վստուծոյ եկեղեցիին
մէջ , և բաժանորդ եղան խոստման ուխտե-
րուն . ուստի մէկ է շրէից և Վրիստոնէից
եկեղեցին :

6 . Վրիստոսի հրապարակաւ Վարդու-
թեան բոլոր ատենները իր աշակերտները
հին եկեղեցւոյն անդամներն էին . ան եկե-
ղեցիին տօները կըպահէին , և անոր պահան-
ջած ամէն պարտաւորութիւնները կըկատա-
րէին . 'բայց կրտսնեմք որ Վրիստոս
համբառնալէն ետքը քրիստոնէից եկեղե-
ցիին մէջն էին անոնք . արդեօք հին եկե-
ղեցիէն բաժնուեցա՞ն ու նո՞ր եկեղեցիի մը

յարեցան : թէ որ այսպէս է՝ ե՞րբ և կամ
 ի՞նչպէս եղաւ աս բանը : Երդարև հարկա-
 ւոր փոփոխութիւններ եղան Վրխտոսի
 մահուան ժամուն . շրէից ծխական և ա-
 լարողական օրէնքը խափանեցաւ և նոր
 տնտեսութիւն մը հաստատուեցաւ . ան
 բաժանող պատը որ շեթանոսները ներս
 մտնելէն խափաներ էր , քակուեցաւ .
 (Եփե . ք . 14—17.) ձիթենիին մեռեալ
 ճիւղերը կտորեցան , և ուրիշ նոր ճիւ-
 ղեր անոր վրայ պատուաստեցան : Բայց
 ծառին բունը իր քանի մը կանաչ ճիւղերու
 վը նոյնը մնաց , և շատ նոր ճիւղեր անմի-
 ջապէս անոնց վրայ աւելցան :

Ասանկ բազմաթիւ վկայութիւններով կը
 յայտնուի՝ թէ եկեղեցին մի և նոյն է երկու
 տնտեսութեանց տակը . տնտեսութիւնը
 փոխուեցաւ , բայց ոչ եկեղեցին . յատկու-
 թիւնները փոխուեցան , բայց ոչ էութիւ-
 նը . ճիւղերը փոխուեցան , բայց ոչ բունը :

Բ . Եկեղեցին թէ շին կտակարանի և
 և թէ՛ Վոր կտակարանի ժամանակը մի և
 նոյն ուխտին տակը կը գտնուի , ի՞նչ ան ուխ-
 տին տակը՝ որ Եստուած ըրաւ Եբրահամու
 հետ :

Իսրայէլացւոց ազգին հետ ուրիշ ուխտ
 մըն ալ հաստատուեցաւ Սինա լեռը Մով-
 սէսին ձեռօքը , որն որ առաքեալը « շրա-
 մաններով եղած պատուիրանքներուն օրէն-

քը” կը կոչէ . (ՎճԷ՝ ը . 15 .) որ ժամանակաւոր ըլլալու բան մըն էր , ու միայն « շուք մը գալու բարի բաներուն » : ՎճԷ . Ժ . 1 : Ըսուխտը հաստատուած էր օրինակներով՝ շուքերով և արարողութիւններով . բայց ան օրինակները՝ երբոր կատարուեցան , խափանեցան . ան շուքերը՝ երբ որ իրենց դոյութիւնը երևան ելաւ , անցան գային . և ան արարողութիւնները՝ երբ որ իրենց վախճանին հասան , ամէնն ալ դադարեցան : Գաղ . Դ . 24 : ՎճԷ . Թ . 1 , 9 , 10 : Սակայն աս օրէնքին կամ ուխտին խափանուելը « խոստմունքով եղած ուխտին » վրայ դորութիւն մը չունէր : Տ՛՛՛՛՛ Գաղ . Դ . 17 : Ըն նոր ուխտը՝ որուն համար կըխօսի Պօղոս , (ՎճԷ . ը . 8 — 13 ,) ‘Նոր կըսուի Սինէականին կամ Սովսիսականին հետ բաղդատելով , որն որ չին կը կոչուի : Բայց աս ‘Նոր ուխտը ճըշմարտապէս մի և նոյն էր ան առջի ուխտին հետ որ Ըստուած Բքրահամու հետ ըրաւ :

Ըստուծոյ Բքրահամու հետ ըրած ուխտը երկու մասէ կը բաղկանար , և երկու նըշանակութիւն ունէր , ժամանակաւոր և հոգևոր : Աւխտին ժամանակաւոր մասը կատարուեցաւ Բքրահամի յաջորդներուն վըրայ ըստ մարմնոյ , որոնք Խարայէլացիներն էին : Հոգևոր մասը ան է որ մինչև հիմա կը կենայ , և Քրիստոսի ամէն հաւատացեալներուն (Թէ չըէայ Թէ չեթանոս) վայլած

բոլոր օրհնութիւններուն հաստատուն մուրհակն է: Աս ուխտար թէպէտև եօթը անգամ կրկնուեցաւ Աբրահամին թէ ընդարձակ և թէ համառօտ խօսքերով, (Տէ՛ս Նիք. ԺԲ. 2, 3: Ժէ. 2—14: ԺԵ. 18: Իբ. 17, 18: ԺԴ. 16: ԺԵ. 5: Իս. 13:) բայց միշտ մի և նոյն ուխտն էր ինչպէս որ կրկարդամք զանազան տեղեր: Տէ՛ս Վալ. Գ. 72: Վալ. Գ. Դ. 25: Ի () Են. Գ. 31:

Աս ուխտին գլխաւոր դաշնադրութիւնները ասոնք էին, թէ Աբրահամով ու իր սերունդովը երկրին բոլոր ազգերը պիտի օրհնուէին. և թէ Աստուած՝ պիտի ըլլար Աբրահամին և անկէ ետև անոր զաւակներուն Աստուածը, որոնք երկինքի աստղերուն պէս կամ ծովի աւազին պէս անթիւ պիտի ըլլային: Նիք. Ժէ. 7: Իբ. 17, 18: Պօղոս առաքեալ կը սորվեցունէ մեզի թէ ան «Սերունդը» որով բոլոր ազգերը պիտի օրհնուէին, Վրիստոս էր. և թէ ան «Անթիւ զաւակները» հոգևորապէս էին, քի հաւատացելոյ բաղմութիւնը: Վալ. Գ. 16, 29: Դ. 28: Լուս. Թ. 8:

Ամէնքը կրնաւին թէ շրէից եկեղեցին ինտոր որ Սինէական կամ Սոփիական ուխտին տակն էր, անանկ ալ ան առջի Աբրահամեան ուխտին տակն էր: Վանգի Աստուած՝ Սինա լեռանը վրայի ուխտը հաստատելէն առաջ, Իսրայելացիները իրեն ժողովուրդ անուանեց: Լուս. Գ. 6, 7:

Արդ՝ հաւասարապէս յայտնի է թէ Վրիստոնէից եկեղեցին ալ հիմայ Աբրահամեան ուխտին տակն է, վասն զի՝

1. Չկայ տեղ մը գրուած թէ Աբրահամ համեան ուխտը խափանուած է :

2. Աս ուխտը կրկոչուի «յաւիտենական» ուխտ : որ յաւիտեան պիտի մնայ : (Կենեք. ԺԷ. 7 : Գ. 1. ան. 55 :

3. Ուխտին համար կրտէ Առաքեալը . «Աս կըզօրուցեմ . Մն կտակը որ առաջ ջուց Աստուծմէ գրուեցաւ Վրիստոսով : օրէնքը չորս հարիւր երսուն տարիէն ետե որ գրուեցաւ : չկրնար խախտել ան խոստմունքը խափանելու համար» : (Գ. 1. 7. 17 : Աս համարէն չէ թէ միայն յայտնի է որ Աբրահամին հետ եղած ուխտը չխափանեցաւ Վետական օրինաց հետ : այլ յայտնի է նաև թէ անիկայ Աւետարանական ուխտ մըն է : վասնորոյ տակաւին կըմնայ : ու վաւերական է . քանզի «Աստուած Վրիստոսով հաստատեց զանիկայ» : Աւ ոչ միայն այսպէս : այլ նաև խոստմունքի ուխտ մըն էր : և անով է որ Վրիստոսի հաւատացեալները՝ որոնք որ Աբրահամի հոգևոր զաւակներն են : երկինքի ժառանգները պիտի ըլնան : որովհետև կրտուի : «Թէ որ դուք Վրիստոսինն էք : անանկ է նէ Աբրահամին զաւակն էք՝ ու խոստմունքին նայելով ժառանգներ» : Աւտի Վրիստոսով

եղած նոր ուխտը , Առաքիլականին հետ
բաղդատելով՝ Նոր կրտսերի , չէ թէ Աբրա-
համին հետ եղած ուխտին նայելով , որուն
հետ մէկ է . քանզի Աբրահամին խոստաց-
ուած ան զաւակը՝ որով բոլոր ազգերը պի-
տի օրհնուէին , մեր Վրիտա փրկիչն է :

Սուրբ Գրոց զանազան մասերուն մէջ
Աբրահամ յիշուած է իբրև հայր հաւատա-
ցելոց , և հաւատացեալները իբրև անոր
զաւակները : Առաքեալը կրտսէ , «Նոր հա-
մար ժառանգ ըլլալը հաւատքէն է , որ շը-
նորհքով մը եղած կըլլայ , խոստմունքը
հաստատուն ըլլալու համար ամէն զաւակին .
չէ թէ միայն անոր որ օրէնքէն է , հաստ-
ատոր ալ՝ որ Աբրահամի հաւատքէն է . որ
ինքը մեր ամենուս հայրն է . ինչպէս որ
գրուած է , թէ՛ Քեղ շատ ազգերու հայր
պիտի ընեմ : Լուսն . 7 . 16 , 17 :

Նսկէց և ասոր պէս ուրիշ ապացոյցնե-
րէն (Տես Գալ . 1 . ար . 67—75 : Գործ . 7 . 25 .
Եբր . 7 . 13—18 նճ) յայտնի է որ Աբրահա-
մին և հաւատացելոց մէջ եղած ան յա-
տուկ կասկածեցութիւնը՝ Աբրահամին հետ
Աստուծոյ ըրած ուխտէն կախում ունի .
և քանի որ աս կասկածեցութիւնը կըմնայ ,
քանի որ Աբրահամ հայր հաւատացելոց կը
մնայ և անոնք ալ իրեն զաւակները , այն-
չափ ատեն ալ աս ուխտը հաստատուն պի-
տի մնայ :

Պ. Ինչպէս որ աս ուխտին նշանը աւաջ
թլիատութիւնն էր, անանկ ալ հիմա մը
կրրտութիւնն է :

Թլիատութիւնը արուեցաւ Մ.բրահա-
մին իբրև նշան աս ուխտին, (Օ.ն.դ. Ժէ.
.11. որ նաև հաքը Սինէական ուխտին ալ
նշանը եղաւ. «Աւստի Սոլսէս ձեզի թլիա-
տութիւնը տուաւ. չէ որ ան Սոլսէսէն
էր, հասպա նախնիքներէն, և՛ : Յ.ճ. է.
22 : Ալ որովհետև ան ժամանակը թլիա-
տութիւնը Սոլսիական օրինաց պահպա-
նութեան կապը կը համարուէր, անոր հա-
մար աւաքեալը կըսէ. «որ եթէ թլիատիք՝
Վրիստոս ձեզի օգուտ մը չընէր : Ամէն
մարդու կը վկայեմ, թէ որ թլիատուելու
ըլլայ (չեթանտութենէ) պարտական է
բոլոր օրէնքը կատարելու» : Վ.ա. Ն. 2, 4 :
Աւստի թլիատութիւնը՝ իբրև նշան Սինէա-
կան ուխտին կամ Վլտական օրինաց, խա-
փանուեցաւ. բայց իբրև նշան Մ.բրահամ-
եան ուխտին մկրտութեան փոխուեցաւ :
Ալ աս բանս հաստատուելու համար բաւա-
կան է մտածել թէ :

1. Թէ որ Սկրտութիւնը հիմա Մ.բրա-
համեան ուխտին նշանը չըլլայ նէ, ուրեմն
ան ուխտը նշան մը չունի. Մ.բրահամու
հետ եղած ուխտը մինչև հիմա կը կենայ և
քրիստոնէական Վկեղեցւոյն ուխտն է.
բայց ինտո՞ր կրնայ ըլլալ որ անիկայ այն-

քան դարեր մէկ արտաքին նշան մը ունե-
նայ, ու ետքը ան նշանը վերցուի, և ուխտը
աւանց նշանի մնայ : Անշուշտ թլփատու-
թիւնը որ Աինէական ուխտին ալ ճշա-
նը եղած էր, ան ուխտին հետ վերցուե-
լով, Ատուած մէկ նոր նշան մը պիտի տար
ան Աքրահամեան հնազոյն և մնայուն ուխ-
տին . և ահա իր տուած նոր նշանը մկրթ-
տութիւնն է :

2 . Աւաջ թլփատութիւնն էր, և հի-
մա մկրտութիւնն է ան մեջոցը՝ որով մէկը
դուրսէն կրմանէ անուանեալ եկեղեցիին
մէջ, ի՞նչ անոնց թիւը կրնդունուի՞ որոնց
հետ արտաքին դաւանութեամբ առ ուխտը
կըհաստատուի, և որոնք որ իրենց խոստ-
վանութեամբը՝ խոստմունքին ժառանգներն
են : Ամէնքը կրնդունին թէ մկրտութիւնը
հիմա դուռն է եկեղեցին մտնելու . նմանա-
պէս թլփատութիւնն էր եկեղեցին մտնելու
դուռը Վրիստոսի դալէն աւաջ : Ճշմարիտ
է որ քանի մը ուրիշ աղգելը ալ թլփատու-
թիւն կրնէին . բայց հիմա ալ կան ուրիշ-
ներ բայ ՚ի քրիստոսնէից որոնք կրմկրտեն,
ի՞նչ իբրև կրօնական արարողութիւն ջրով
կըլուան . ի՞նչ շքեայք թէ որ ուրիշ աղգէ
դարձած նորահաւատ մը ընդունելու բը-
լան կըմկրտեն . նմանապէս շնդկաստանի
մէջ շեթանոսները կըմկրտուին իրենց
մեղքէն աղատութիւն ստանալու համար .

և արդարև մարմինը ջրով լուսարով մեղքէ մաքրուելու վարդապետութիւնը՝ հեթանոսական վարդապետութիւն մըն է, ու չէ թէ քրիստոնէական : Ասոյդ է որ սա օրինակները՝ քրիստոնէական մկրտութիւն չին . որովհետև ոչ Հրէաները և ոչ Հեթանոսները՝ Սուրբ Արքորդութեան անունովը չեն մկրտեր : Բայց ասանկ ալ ան ուրիշ ազգերուն ըրած թրփատութիւնը Վերահամեան չէր . որովհետև ոչ Մովսէսայիք և ոչ ուրիշ ազգերը թլփատուեցան իբրև նշան Վերահամեան ուխտին : Ալ վերջապէս թրփատութիւնը հրամայուեցաւ ան ժամանակի Վատուծոյ բոլոր ժողովուրդին : Ընդհանրապէս որ մկրտութիւնն ալ հիմա . քանզի երբոր հեթանոս մը ուզէր եկեղեցին մանելու, անանկ հարկաւոր էր անոր թլփատուելը, ինչպէս որ հիմա մէկը եկեղեցին ընդունուելու համար հարկաւոր է անոր մը կըրտուելը :

3 . Թլփատութիւնը որոշակի նոյն բաները կը ցուցուն էր, որոնք որ մկրտութիւնը հիմա կը ցուցուն է :

ա . Թլփատութիւնը հնազանդութեան գործողութիւն մըն էր, ինտոր որ հիմա մը կըրտութիւնը է :

բ . Թլփատութիւնը արտաքին գործողութիւնն էր, որով մարդ մը Վատուծոյ ժողովուրդին անդամ կը լըար, ինտոր որ հիմա մկրտութիւնը է :

7. ԹՎԻԱՊՈՒԹԻՒՆԸ զՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԻՐՆԻ
 ԷՐ, որով մարդը կրկապուէր Վստուծոյ բու-
 լոր պահանջմունքներուն հնազանդելու,
 ինտոր որ մկրտութիւնով հիմա կրկապուի:
 Մարգարէները շատ անգամ կըզրէին շը-
 րէից համար թէ պարտաւոր են Վստուծոյ
 հնազանդիլ, ըստ որում իբրև Վնոր ժողո-
 վուրդ թվապատուած էին. և Պօղոս կըսէ,
 թէ թվապատուած մարդը պարտական է բու-
 լոր օրէնքը կատարելու: Վար. Ե. 3:

7. ԹՎԻԱՊՈՒԹԻՒՆԸ ՆՇԱՆ և կնիք մըն
 էր հաւատոյ արդարութեան. նոյնպէս հի-
 մա մկրտութիւնն ալ: Վաւաքեալը կըբա-
 ցատրէ թէ Վբրահամ «Թվապատութիւնը
 ետքէն նշան աւաւ՝ անթվապատութեան ատե-
 նէն ունեցած հաւատքին արդարութեանը
 մէկ կնիք մը, որ ինքը հայր ըլլայ բոլոր
 հաւատացողներուն՝ որ անթվապատութեմէ
 կըլլան. անոնց ալ արդարութիւն սեպուելու
 համար»: Հար. Ե. 7. 11: Հաւատաց Վբրա-
 համ և թվապատութեան նշանը աւաւ. հի-
 մայ ալ մարդիկ կըհաւատան և մկրտու-
 թիւն կընդունին իբրև հաւատոյ նշանը:
 Հաւատք հարկաւոր է հիմա հեթանոսի մը՝
 եկեղեցին մտնելու համար մկրտուելէն ա-
 ռաջ. նմանապէս հին ատենը հաւատք հար-
 կաւոր էր հեթանոսի մը՝ եկեղեցին մտնելու
 համար թվապատուելէն աւաւ, ինչ թվապատու-
 թիւնը ան ատենը հաւատոյ իրոստովանու-

Թեան մէկ գործողութիւնն էր , ինտոր ու
հիմա Կկրտութիւնը է :

Թիքատութիւնը « հաւատքի արդարու-
թեան կնիք » մըն էր . կնիքը կը գործածուի
գրութեան մէջ անիկայ արժանահաւատ ք-
նելու , կամ անոր արժանահաւատութեանը
վկայելու համար : Ասոր համար Աբրահամ
« Թիքատութիւնը նշան առաւ անթլ փատու-
թեան ատենէն ունեցած հաւատքին արդա-
րութեանը մէկ կնիք մը » . (Հով. Գ . 11 .) ո-
րով կնքուեցաւ ու հաստատուեցաւ ան մեծ
ճշմարտութիւնը թէ հաւատքը արդարու-
թիւն կը սեպուի , (Հով. Գ . 3 .) ինչ թէ ամէն
անոնք որ Աբրահամու հաւատքը ունին , ար-
գարութիւն ունին : Աւ հիմա մկրտութիւնը
նոյնը չէ . հաւատքով արդարանալու նոյն
մեծ ճշմարտութիւնը չվկայէ՞ր և զանիկայ
չհաստատե՞ր :

Բայց ոմանք կըսեն թէ մկրտութիւնը կը
կնիք մը չէ , վասն զի քրիստոնէութեան կը-
նիքը « դրոշմն » է : Աս բանիս պատասխան՝
կըհարցունեմք թէ բոլոր Առբր Գրոց մէջ
սըր տեղ մէկ վկայութիւն կամ հրաման մը
կայ դրոշմ բնելու :

Գործեալ կըսեն թէ մկրտութիւնը կը-
նիք չէ , վասն զի քրիստոնէաները « Հող-
ւով Արբով կնքուած » են . (Եւր. Կ . 13 :
Գ . 30 .) և փաստիւք կըցուցունեն թէ Հո-
ղւոյն Արբոյ կնիքը մկրտութեան ատենը

չարուիր . քանզի քանի մը մարդիկ մկրտու-
ուած էին ու չէին գիտեր թէ Առբք շողի
կար : Վարձ . ԺԹ . 2 , 3 : Բայց սրտասխան
կուտամք թէ՛ շողոյն Արբոյ կնիքը մեր
անձնական փրկութիւնը հաստատելու հա-
մար սրտի վրայ դրուած կնիք մըն է , բայց
մկրտութեան կնիքը մէկ արտաքին և տե-
սանելի կնիք մըն է «հաւատքի արդարու-
թեան» , ի՞նչ հաւատքով արդարանալու վար-
դապետութեանը , որն որ անշուշտ տարբեր
բան մըն է : Վճ կուզէ հաստատել թէ
շողով Արբով կնքուիլը , և մկրտու-
թիւնով կնքուիլը նոյն խիստ բանն է :

Քրիստոնէայ շայրերը՝ մկրտութիւնը
իրբև կնիք կը հաստատեն . զորօրինակ՝ Աբ-
մաս որ ժամանակակից էր աւաքելոյ , (ու-
րուն անունը Պօղոս ալ կրցիշէ , շող . ԺԷ .
14 .) Բարուծոյ որդւոյն կնիքին վրայ խօսե-
լով , կրսէ «Բայց ան կնիքը ջուր է» : Ասե-
Վրիզոր՝ Աղիանդայի չորրորդ դարուն
մէջ , յանդիմանելով կին մը իր քուակը
մկրտելու ուշացրնելուն համար՝ կրսէ ,
«Վուն կրվախնաս կնիքը տալու անոր» :
Վմանապէս՝ Աոր Ատակարանը գրաքառ-
լեզուով Թարգմանիչները , յայտնապէս մը-
կրտութիւնը իբրև կնիք համարած են ,

* Բայց ստանկ բողոքները չեն նկատեր որ անոնք միայն հոգե-
հանու. մկրտութիւնով մկրտուած էին :

վասն զի (տ Կրնն՝ . տ . 14—16) ըսելէն
 ետքը թէ , « Կահանամ զԼստուծոյ խնոյ՝ զի
 ո՛չ զոք ՚ի ձէնջ մկրտեցի՝ բայց միայն
 զԱրիսապոս՝ և զՎայիթոս . զի մի ոք ասիցէ ,
 թէ յիմ անուն մկրտեցարուք՝ » . կըյա-
 քեն , « Տալ էրուհիս և տանն Կտեփաննեայ .
 և զայլ ոք ոչ զխտեմ ամենեին՝ թէ հրոհե-
 ՞նք » : Իսկ (3) ոյն բնագրին մէջ ասերկու բառն
 ալ « մկրտել » դրուած է :

Ե . Թ՛ւրիատու թիւնը հոգևոր նորոգու-
 թիւն և մաքրութիւնը կընշանակէր , ա-
 նանկ ալ մկրտութիւնը :

Ոմանք կըսեն թէ՝

« Թ՛ւրիատութիւնը հոգևորի չդպչելով՝ բոլոր-
 ովին մարմնաւոր մէկ նշան մըն էր Իսրայէլա-
 ցոց ազգին համար » :

Լսիկայ լսելը ճիշտ հակատութիւն է Ար-
 Վրոց բոլորովին պարզ յայտնութեանցը :
 Անբարեկեանքը՝ ժողովուրդը իրենց ապրու-
 տամբութեանը և չարութեանը վրայով
 յանդիմանելով , շատ անգամ « Արտով և
 ականջով չթ՛ւրիատուածներ » կըկոչէին դա-
 նանք : Վ Կր . ից . 41 : Երեմ . ից . 10 : Թ . 26 :
 Երեմ . ից . 7 , 9 : Վարժ . է . 51 : Լստուած
 պատուիրեց անոնց , թէ « Ձեր սրտերուն
 անթ՛ւրիատութիւնը թ՛ւրիատեցէք , ու այլ
 մի խստացունէք ձեր պարանոցները » . ի
 () բն . 7 . 16 : « Վ՛ր մարդիկ (3) ուղայ և բը-
 նակիչք Երուսաղէմի , Տէրոջը թ՛ւրիատուե-

ցէք, և ձեր սիրտերուն անթլփատութիւնը
 մէկ ղի ըրէք. չըլլայ որ ձեր չար գործքե-
 րուն համար բարկութիւնս իբրև հուր վա-
 ւելով այրէ, ու մարող չըլլայ” : Լւբէ՛յ . 7 .
 4 : Լըկրորդ () ըննաց . Ը . գլ . 6 . համա-
 ընն մէջ, Լստուած կըխոստանայ, «Լ, քու
 Տէր Լստուածդ քու սիրտդ և քու ցեղիդ
 սիրտը պիտի թլփատէ, որ Տէր Լստ-
 ուածդ բոլոր սրտէդ և բոլոր անձէդ սի-
 րես, որպէս զի ապրիս” : Լ, տև կըսէ Լ-
 ուաքեալը . «չէ թէ ամէն Խարայէլէն ե-
 ղողները Խարայէլացի են” . (Լ . Լ . Թ . 6 .)
 այսինքն հին ատենի Լ, կեղեցիին մէջ, ին-
 տոր նաև Վրիստոնէից Լ, կեղեցիին մէջն
 ալ, շատերը Լստուածոյ ժողովուրդ կան-
 չուած էին որոնք որ խկապէս չէին : «Լնչու
 որ՝ Լրէայ չէ ան՝ որ դրսուանց է, և թըլ-
 փատութիւն չէ ան՝ դրսուանց մարմինով
 է . հապա Լրէայ ան է՝ որ ներսուանց է,
 և թլփատութիւն սրտինը՝ հոգիով : ու չէ
 թէ զիրով . որ անոր գովութիւնը չէ թէ
 մարդիկներէն է, հապա՝ Լստուածմէ” : Լ-
 ու . Լ . ք . 28 , 29 : «Լնչու որ թլփատութիւ-
 նը մենք եմք (ք մենք եմք ճշմարիտ Խարա-
 յէլ) , որ հոգիով Լստուած կըպաշտեմք,
 ու կըպարծենամք Վրիստոս հիսուսով . և
 մարմնի վրայ չէ պարծանքնիս” : Փիլե . 7 .
 ‘Լմանապէս՝ ինտոր վերը յիշեցինք, նոյն
 Լուաքեալը ուրիշ տեղ կըսէ . թլփատու-

Թիւնը հաւատքին արդարութեանը մէկ կը նիւթ մըն էր : Հով. 7. 11 : Բայա ուրեմն բոլորովին «ամարմնաւոր» մէկ նշան մըն էր Թլփատութիւնը , և «հոգեւորին չէ՞ր զըպչէր» : Բնտեղի՛ խօսք . որ ընդհակառակն աս բոլոր վկայութիւններէն յայտնի է որ Թլփատութիւնը ճիշտ նոյն Հաւատքով Բրդարութիւնը և Հոգիին Արորդութիւնը կրնանակէր , ինտոր որ հիմա ալ մկրտութիւնը :

Պ . Պօղոս Բուաքեալ մկրտութիւնը յատկապէս Թլփատութիւն կը կոչէ , քան զի կըսէ Աղոսացւոյ , ք Վլուխ . 11 , 12 համարներուն մէջ , « Արանով զուք հաւատքով Թլփատուեցաք անձեռագործ Թլփատութիւնը , մարմինի անդամները մերկանալով Վրիստոսի Թլփատութիւնովը , Թաղուելով անոր հետը մկրտութիւնով , որ անով ալ իր հետը յարութիւն առիք Աստուծոյ զօրութեանը հաւատալով . որ ինքը անիկայ մեռելներէն յարուց » : Հոս տեղ կըսէ առաքեալը՝ Թէ , « Բուք Հեթանոսներ Թլփատուած էք » , և ի՞նչպէս . « մկրտուած ըլլալով » : ՂԶմարիտ է որ՝ հոգեւոր Թլփատութեան և հոգեւոր մկրտութեան վրայ կը խօսի , որ « անձեռագործ » է . բայց նոյն խօսուածքով կը հաստատէ հոգեւոր Թլփատութեան և հոգեւոր մկրտութեան մէկ բան ըլլալը . քի կիմացունէ Թէ

ԹլփատուԹիւնի և մկրտուԹիւնի հոգևորապէս մի և նոյն նշանակուԹիւնը ունին :

ԹլփատուԹիւնը օրինակ մը չէր , որ մկրտուԹիւնը անոր լրումը համարուի , կամ շուք մը՝ որ մկրտուԹիւնը անոր մարմինը և ճշմարիտ էութիւնը ըլլայ , ինչպէս կըրսեն ոմանք . քանզի աս երկուքը մէկ և հաւասար են զօրութեամբ՝ նշանակուԹեամբ և հարկաւորութեամբ : ՄկրտուԹիւնը անբանն է հիմա , ինչ որ ԹլփատուԹիւնը էր առաջ , այսինքն ԹլփատուԹեան տեղը տրուած է անիկայ :

Նախնի բրիտոնեայ շայլերն ալ մը կըրտուԹիւնը ԹլփատուԹեան տեղը համարած են . ի՞նչ այսպէս կըրտէ () գոստինոս . «ՄկրտուԹիւնը երեխաներուն ինչ օգուտ բնէ լը կընամբ ԹլփատուԹեան հետ բաղդատելով իմանալ , որն որ նախնի դարձրու Մատուծոյ ժողովրդեանը տրուած էր» : Մտեղանակով կըխօսին մկրտուԹեան վըրայ նաև Հոլստինիանոս Մարտիրոս , Քարտեղ , Մմբրոսիոս , Հովհանն ոսկեբերան և ուրիշները :

Հոս տեղ հարկ չէ կանանց չԹլփատուելուն վըրայով դիմադրուԹիւններ յառաջ բերել , ըսելով Թէ անոնք հիմա կըմկրտուին . քանզի ԹլփատուԹիւնը անանկ մէկ բան մըն էր որ չէր կընար կանանց մատակարարուիլ : Վակայն յայտնի է որ անոնք

ալ թլփատուած կրակայութիւնն ։ որովհետեւ
անթլփատու մէկու մը թոյլբուռութիւնն չկար
Պատեքը ուտելու ։ (1, էջ . ԺԲ . 48 .) բայց
կանայք կըհաղորդէին անոր ։ Վ . Գ . Բ . 41 ։
յլերեմն կերեւնայ թէ իբրև թլփատուած
կըհամարուէին ։ ուստի հակառակութեան
տեղի չկայ հոս տեղ ։

Վ . Քրիստոսէ աւաջ ուխտին կնիքը
կամ նշանը Մատուծոյ ժողովրդեան զուա-
կայը կըտրուէր . և Վ, կեղեցին նոյն ուխ-
տին վրայ կըկայանայ հիմա ալ ։ ուստի ո-
րովհետև Վ, քրիստոս զուակայ մատակա-
րարելու իրաւունքը և պարտքը չխափա-
նեց ։ ուրեմն հիմայ ալ արուելու է ան՝ բո-
լոր հաւատացեալներուն զուակայը ։ Վ, Բ-
շունին փոխուելը՝ ոչ ուխտը փոխեց և ոչ
ալ անոր կնիքը հաւատացեալոց զուակնե-
րուն տարւելու իրաւունքը և պարտքը խա-
փանեց ։

Հարկ չէր Վ, քրիստոսի՝ որ յատուկ սրտ-
ուէր տար աւաքեաց ։ զուակները ի-
րենց հայրենուն հետ մ'կրտելու ։ Վ, անգի-
արդէն շրէաները նորահաւատներուն զու-
ակները իրենց ծնողացը հետ կըթլփա-
տէին և կըմկրտէին ալ . աս զխանութիւն ա-
ւաքեալները հարկաւ պիտի հասկընային
թէ Վ, քրիստոս տղաքներն ալ մ'կրտեցէք
կուզէ բոլր ։ Թէ որ փոխանակ հրաման
ընելու ան տղանք ան ուխտին մէկ նոր նը-

չսնը դորձածելու , պատուիրէր անոնց որ
հին և շանին դորձածութիւնը պահէն , քի
թլփատեն իր աշակերտները , պիտի ան-
շուշտ ճատկրնայի՞ն թէ պէտք է որ ան
փոքր տղաքներն ալ թլփատեն՝ որոնց ծը-
նողքները Վ. բխատտի աշակերտ եղան :

Բայց եթէ ըսուի՝ թէ մկրտուելու հա-
մար հաւատք հարկաւոր է ու տղաքը չէն
կրնար հաւատք ունենալ , վանորոյ պէտք
չէ մկրտուին : Արդատասխանեմ՝ թէ նը-
մանապէս հաւատք հարկաւոր էր թլփատ-
ուելու համար : Աւտի սա կանոնով պէտք
էր որ չթլփատուէին տղաքը : Վարձեալ՝
եթէ ըսուի թէ տղաքը չեն կրնար հաւատքը
խօստովանիլ վանորոյ պէտք չէ որ մը-
կրտուին : Արդատասխանեմ՝ թէ ասանկ
ալ խօստովանութիւն հարկաւոր էր թրլ-
փատուէին . ուստի պէտք չէր որ թրլ-
փատուէին : Մէկ խօսքով ինչ պատճառ
որ հիւս յաւաջ բերուի հաւատացելոյ
տղաքը մկրտելու սովորութեանը դէմ ,
նոյնը կրնար շրէից ատենը յաւաջ բեր-
ուիլ գոնոնք թլփատելու սովորութեանը
դէմ . սակայն Վստուած պատուիրեց անոնց
իրենց զաւակները թլփատել և անոր հա-
մար կրթլփատելին : Աոյնպէս աւաքեալ-
ները զայլն և մկրտեցին ամբողջ գեր-
զաստաններ միայն իրենց գլուխներուն հա-
ւատարմովը . զի՞ երբոր հաւատաց բանտա-

պետր , Պօղոս մկրտեց զանիկայ ու բոլոր իրենները : Գործ . ԺԴ . 33 : Արքայ Վիգիա հաւատաց մկրտեցաւ ինքը և իր բոլոր տունը : Լուսոյ : 15 Աւ կրկարդամք եկեղեցական պատմութեան մէջ թէ տղաքը մկրտելը քրիստոնէից եկեղեցւոյն մէջ իսկզբանէ անտի միշտ կը գործածուէր :

Հիմա գամք քննելու թէ՛

1^o նէ է Տղայքը մկրտելուն նշանակութիւնը :

1 . Տղայքը մկրտելը կրնշանակէ թէ ան տղայքը ապականեալ էակներ են , և մեզայ թողութեան կրկարտին , թէ անոնք անմաքուր են և մաքրութեան կրկարտին , վասն զի թէ որ այսպէս չըլլային պիտի չմկրտուէին անոնք :

2 . Կըցուցընէ թէ Մետաքսանով կայ մաքրութիւն իրենց համար պատրաստուած . չցուցընէր թէ իսկապէս կըմաքրուին , այլ միայն թէ մաքրութիւն կայ , որ կըլլայ Հոգւոյն Արքայ գործողութեամբ՝ որուն կրկարտին , և որն որ կըյուսամք թէ պիտի տրուի անոնց :

3 . Կըցուցընէ՛ չէ թէ անոնց հաւատք ունենալը , այլ փրկութիւնը հաւատքով ըլլալը , և թէ անոնք ետքը հաւատք ունենան նէ պիտի փրկուին : Կըցուցուէ նաև թէ անոնք հաւատացեալ ժողովուրդէ մըն են ,

որուն որ շատ պատուական խոստմունքներ տրուեցան : Տղայքը կրմկրտուին չէ թէ բուն իրենց հաւատքին իրաւունքովը , այլ իրենց ծնողացը հաւատացեալ ըլլալուն իրաւունքովը : Առբք Վրաց նայելով ուրիշ տղաքներ մկրտուելու չին . վասն զի մը կրտուութիւնը՝ որ մէկ արտաքին նշան և հաւատոյ խոստովանութիւն մըն է , նշանակութիւն մը չունենար թէ որ տղուն ծնողքը ճշմարիտ հաւատացեալ չին : Մ. յսպէս Վերսէս Ը նորհալին իր ընդհանրական Վրքին մէջ «Մը դասս Վրահանայից» գըրած Հատուածին մէջ կրտէ թէ այլազգեաց տղաքները մկրտելը՝ թէ և հին սովորութիւն , բայց հակառակ է Վրիստոսի պատուիրանին , և անընդունելի . «Վսեմք և յաղազս զԾնունդս այլազգեացն մկրտելոյ , որ սովորութեամբ բերի՝ ի հին ժամանակաց , և է ընդդէմ հրամանին Վրիստոսի , որպէս ասաց՝ «Ոչ տսլ զարբութիւն շանց» . (Մատթ . է . 6) զոր արժան էր խափանել , և ո՛չ թողացուցանել . զի զի՞նչ օգուտ է այլով բերանով խոստովանիլ ըզ Վրիստոս , և զգենուլ զնա մկրտութեամբըն՝ մինչ անբանն է և անզգայ , և յորժամ զարգանայ հասակաւ՝ մերկանալ դարձեալ ուրացութեամբն , և լինել հայհոյիչ Մատուածային խորհրդոյ անօրէնութեան նորա՝ ըստ դէնին իւրեանց , փոխաւ

Նաակ փառաբանիչ լինելոյ” : Տղայքը մկրտել լը կընշանակէ թէ անոնք հաւատոյ որդիբ են , քի իրենց ծնողքը հաւատացեալ են , որոնք հաւատք ունին անոնց համար , և զանոնք Մատարանի հաւատքին մէջ պիտի մեծցունեն . որ ասանկ հաւատացելոյ սերունդը՝ հաւատացեալ սերունդ պիտի ըլլայ :

4 . Փոքր երեխաներու մկրտութիւնը աշակերտութեան յարմար մէկ նշանն է , որով տղայքը կանուխ Վրիստոսի նուիրուած են և խոստացած որ անոնք անոր ապագայ հետեւողները պիտի ըլլան : Վրիստոսի դպրատանը մէջն աշակերտութեան նշանը մկրտութիւնն է : Ինքը կրպահանջէ որ իրեն հետեւողներուն փոքրիկ տղաքը իրեն բերուին իր օրհնութիւնը աւանելու համար , և իրեն նուիրուին՝ իրը ըլլալու համար , և թէ աշակերտութեան նշանը զրուի անոնց վրայ : Օնողքը մկրտութեան ժամանակը կըխոստովանին թէ զսուակը իրենցը չէ , այլ Մատուծոյ , երկիւղածութեամբ Մատուծոյ կընուիրեն զանիկայ , և խօսք կուտան իրենց բոլոր կարողութիւնովը կրթել և մեծցունել՝ որ Մատուծոյ ճշմարիտ մէկ զուակը ըլլայ :

5 . Փոքր երեխաներու մկրտութիւնը կնիքն է ան ուխտին , որ կըլլայ Մատուծոյ և ծնողացը մէջ իրենց տղին վրայով : Մատ

ուած՝ իր ժողովրդեան և անոնցմէ ետքը անոնց սերունդին Մատուածը ըլլալու (Մատ. Ժ. 7 : Տէս նախ Երայ. Խդ. 3 : ԿԵ. 23 : Վարժ. Ի. 39.) կրխոստանայ ան ուխտին մէջ՝ որուն նշանը և կնիքն է մկրտութիւնը : Այլ խոստանայ՝ թէ որ ծնողքները հաւատարիմ կենան իրեն հնազանդելու , և տղաքնին իրեն համար մեծցունելու , թէ պիտի օրհնէ ան տղաքները և իրը ընէ : (Մատ. Ժ. 9 : Ի (Մատ. Է. 9 : Ը. 6 : Սաղ. 28. 5, 7 : Ճդ. 17, 18 : ՃԺԻ. 2 : Մատ. Ի. 7 : ԻԻ. 6 : Սերջապէս կընշանակէ՝ որ եթէ Մատուծոյ հետ ուխտ դրած ծնողքները հաւատարիմ ըլլան իրենց որդւոցը , և անոնք Տէրոջը խրատներուն և կրթութեանը մէջ մեծցունեն , Մատուած ալ կրխոստանայ սրբաբար շնորհքը տալ անոնց և անոնց Մատուածը և բաժինը ըլլալ թէ աս աշխարհի մէջ և թէ յաւիտեանս յաւիտենից :

Արեմն տղայոյ մկրտութիւնը , աս անվրէպ մեկնութիւնովը՝ շատ երեւելի բան մըն է . վասն զի անիկայ Մատուծոյ ու ծրնողացը մէջ եղած ուխտի մը տեսանելի կընիքն է , ինչ նշան մը՝ որով աս ուխտին երկու կողմերը կըհաստատեն և ապահով կընեն իրենց դաշնադրութիւնը : Մատուած՝ իր անճառելի մարդասիրութեամբը այսպէս կըսէ ծնողաց . «Ի՞նչ որ դուք ինձի կըմատուցանէք աս ձեր որդին և հաւատարմու-

Թեամբ ինձի համար կըմեծցունէք, ես ա-
նոր Աստուածը պիտի ըլլամ” . և ծնողքը կը
պատասխանեն, «Արխոստանամք հաւատա-
րիմ մնալ քեզի և աս մեր որդւոյն . և հի-
մա հոս յայտնի քեզի կըմատուցանեմք ա-
նիկայ, և խօսք կուտամք՝ քեզի համար մեծ-
ցունել” : Արդեօք բոլոր բարեպաշտ ծնողք-
ները՝ պիտի չհամարին թէ ասանկ դաշ-
նադրութիւն մը մեծ պարտաւորութիւն է
իրենց, և միանգամայն ուրախալից արտօ-
նութիւն մը : Արանի թէ ամէն Վրխատո-
նեայ կոչուած ծնողքները և ամէն մկրտեալ
զաւակները աս խորհուրդին ճիշտ նշանա-
կութիւնը հասկընային :

Արդ՝ սիրելի ընթերցող, կաղաչեմ որ
խոնարհաբար աղօթելով, քննես Սուրբ
Վիրքերը, որպէս զի տեսնես թէ աս տես-
րակիս մէջ բոլոր մեր ըսածները Աստ-
ուածային ճշմարտութիւնը չէ՞ մի : Ար
ինդրեմ նաև որ սրտի մտօք աս հարցումն
ալ խորհիս . Արդեօք ես քրիստոնեայ եմ :
Վրխատոնեայ ըլլալը ինչ նշանակելուն վը-
րայով շատ անտեղի գաղափարներ կան
մարդոց մէջ : Վմանք կըխորհին՝ որ եթէ
մէկ մարդ մը անգամ մը մկրտուի, ալ ա-
նիկայ միշտ քրիստոնեայ է, թէ և յետոյ
ան անունը ուրանայ . ցի թէ որ անհաւատ

Հէթանոս՝ կամ անաստուած մըն ալ ըլլայ ,
 տակաւին բրիստոնեայ մըն է վասն զի մը
 կըրտուած է : Եւ առերես ալ կըխորհին թէ
 որովհետեւ իրենք եկեղեցիին մէջն են , և
 անոր օրինազրած բանի մը արտաքին գործ
 բերը կընեն , ուրեմն ճշմարիտ բրիստոնեայ
 են : Եւ յայտն մարդիկ արդար և բրիստոնեայ
 են անուամբ . բայց թէ որ միայն անունով
 բրիստոնեայ են , պիտի չկրնան բնաւ երկին
 բը երթալ , « Եւ թէ ամէն Վարայէլէն ե
 դողները Վարայէլացի են » : Ընդ . թ . 6 :
 « Գողոսի » Ըրէու թեան և թմբաստութեան
 վրայով ըսածը (Ընդ . թ . 28 , 29 .) բրիս
 տոնէի և մկրտութեան համար ալ հաւա
 սարարար կրնամբ բաւ , « Բրիստոնեայ
 չէ ան՝ որ զբսուանց է , և մկրտութիւն չէ
 ան՝ որ զբսուանց մարմինով է . հապա
 բրիստոնեայ ան է՝ որ ներսուանց է , և մը
 կըրտութիւն սրտինը՝ հագիով , ու չէ թէ
 գիրով . որ անոր գովութիւնը չէ թէ մար
 դիկներէն է , հասարձ Եւստուծմէ » : Գիտցած
 ըլլաւ որ դուն Մկրտութիւնով նորէն ծը
 նած չես . բայց կայ վերատին ծնունդ մը
 Ըողով Սրբով , որն որ եթէ դուն չունե
 նաս , բնաւ չես կրնար Եւստուծոյ թագա
 ւորութիւնը տեսնել , « Եւ չու որ Բրիս
 տոս Յիսուսի բով ոչ թէ փաստութիւնը (մը
 կըրտութիւնը) բան մը կրնայ , ոչ ալ ան
 թըլփաստութիւնը (անմկրտութիւնը) . հա

սրտ հաւատարմ՝ որ սիրով կրչաջողի՞: Վարդ. Ե. 6: «Պէ է որ մէկը Վրխատասի մէջ է, առ նիկայ նոր ստեղծուած մըն է. ինչու որ հին նր անցաւ, ու հիմա ամէն բան նոր եղաւ»: ի Կորնթ. Ե. 17: Բա նորոգութիւնը սրտի՞ որ մէկ խոնարհ և սուրբ կեանքի մը կառուած նորոգի գլեղ, ան է՞ որ մենք պէտք է բուն մեր փորձառութեամբը գիտնամք, և թէ ոչ բոլոր մեր յոյսերը ոչինչ են: Քրիստոսը կութիւնը չէ թէ արասքին երևոյթով և կեղեցիին անգամ ըլլալովն է, այլ Վրխատասի վրայ հաւատարմ, և Աստուծոյ շնորհէն նորոգուելով: «Չանք ըրէք՝ ուրեմն, որ նեղ դռնէն մտնէք. ձեզի կրտսմ՞ որ Շատերը մտնել պիտի ուզեն, և պիտի չկրնան»: Վարդ. ԺԴ. 24: «Ինչու որ լայն է ան դուռը և համարձակ ան ճանապարհը, որ կրտանի կորտան. և շատերը կան՝ որ անկէց կրմտնեն: Ինչու որ նեղուայք է ան դուռը՝ ու նեղ է ան ճանապարհը, որ դէպի կեանքը կրտանի. և քիչերը կան՝ որ անկէց կրգտնեն. . . .: Այ թէ ամէն մէկը՞ որ ինծի Տէր Տէր կրտէ, պիտի մտնէ երկինքին Թագաւորութիւնը. հապա ան՞ որ իմ երկնուոր շորս կամքը կրկատարէ»: Առտ. Ե. 13, 14, 21: «Պէտք է ձեզի նման ծնունդի»: Հոգ. Գ. 7:

ՅԵՆԿ

ՅԵՌԵՏԷԻՆԵՆԻԹԻԻՆԵ

Երև

- ԳՎ. Ը. Մկրտուածեան վրայ 1
- Ի՞նչ է մկրտութիւնը 2
- Ի՞նչ է Մկրտութեան գիտաւորու-
թիւնը և օգուտը 3
- ԳՎ. Բ. Մկրտութիւնը միջոց է վերջու-
տին ծննդեան 6
- Սուրբ Գրոց մէջ վկայուի չունիմք
- Ըստուծոյ խօսքն է ան միջոցը 9
- Ի՞նչ է վերստին ծնունդը 11
- ԳՎ. Գ. Արքային ծնունդը հոգևոր փո-
փոխութիւն մը ըլլալուն համար այլ
ևս վկայութիւններ 20
- Մկրտութիւնը առ փոփոխութիւնը
չընէր 25
- ԳՎ. Դ. Բաթանդակութիւն վկայու-
թեանց, որոնք վերստին ծննդեան
մկրտութեամբ չըլլալը կըրցուցնեն . . . 29
- Ը. Սուրբ Գիւրգէն վկայութիւն
չունիմք մկրտութեամբ վերստին
ծնունդ ըլլալուն 29
- Բ. Շատ վկայութիւն ունիմք թէ
Ըստուծոյ խօսքն է միջոցը 30
- Գ. Մկրտութիւնը յարմարու-
թիւն մը չունի ասանկ փոփոխու-
թիւն մը յառաջ բերելու 32
- Դ. Թէ որ մկրտութիւնը նորու-
գութիւն է, ուր մեն նորէն ծնածնե-
րը մարդու կամքէ ծնած են 32
- Ե. " " Արեմն չմկրտուած
մէկը հաւատք և՛ չկրնար ունենալ . . . 33
- Օ. " " Արեմն աւետա-

- րանի պաշտօնեաներուն առջի դոր-
 ծը պէտք է ըլլալ ան 34
- Լ Արեմն ամէն մը-
 կրօտուածները պիտի փրկուին . . . 36
- Լ . Իրօք կրտսեան մք մկրտութեան
 վերստին ծնունդ չարտադրելը . . . 38
- Թ . Կորոզութիւնը մկրտութեամբ
 ըլլալ հաստատողները հաւասքով
 փրկուելուն վարդապետութիւնը կը
 կործանեն 39
- Ժ . Չափահաս մարդիկ պար-
 տին նախ վերստին ծնանիլ և ապա
 մկրտուիլ 51
- ՊԼ . Ե . Ե . Մկրտութիւնը կըմաքբէ՞
 սկզբնական մեղքը 54
- Ի . Ի՞նչ է մկրտութիւնը և ինչո՞ւ
 կըմկրտեմք 60
- Պ . Մկրտութիւնը ի՞նչ մտօք
 հարկաւոր է փրկութեան 72
- ՊԼ . Օ . Ինչո՞ւ համար տղայքը կըմը-
 կրտեմք 76
- Լ . Հին և Կոր Ատակարանի ե-
 կեղեցիները միև նոյնն են 77
- Ի . Եկեղեցին՝ Հին և Կոր Ատա-
 կարանի մէջ մի և նոյն ուխտի տա-
 կը կըգանուի 83
- Պ . Մկրտութիւնը նշան է ուխ-
 տին, ինչպէս որ առաջ թլփատուիք . 88
- Պ . Աւխտին կնիքը (ք մկրտու-
 թիւնը) հիմա ալ տրուելու է հա-
 ւատացեալներուն զուակացը . . . 98
- Ի՞նչ է տղայքը մկրտելուն նշանա-
 կութիւնը 100
- Վերջարանութիւն 104



